По поводу осмотр дел канцелярии Ереванского губернатора о Эчмиадзинском съезде в августа 1906 г. товарища прокурора Новочеркасского прокурор В. С. Аксакова вынес 19 февраля 1910 г. постановление о необходимости его рассмотрения в косвенном контексте деятельности “дашнакского дела”: “Имеет значение для производства дел об армянской революционной партии “Дашнакцутюн” как приложения; поименованное дело о съезде делегатов приобщить к делу к помянутому делу об армянской революционной партии “Дашнакцутюн” в качестве приложения”⁶³.

Репрессии органов безопасности самодержавия поставили партию “Дашнакцутюн” в тяжелое положение на Кавказе. Появилось воззвание о том, что десятилетиями считающийся колыбелью армянских революционеров Кавказ стонет под насилиями царизма. Отмечалось, что представители революционного поколения армянского народа второй год находятся в тюремных застенках, которых мучает русская реакция. Признавалось наличие своеобразной ситуации: “По одну сторону

⁶⁰ Там же, с. 193 - 195.

⁶¹ **В.Г. Тунян** Последний период патриаршества Хримяна..., с. 246, 247.

⁶² НАА, ф. 95, оп. 1, д. 4, л. 1717.

⁶³ Там же, л. 1716.

границы на Османской земле сегодня есть свобода, а на другой - господствует разъяренное царистское правительство”⁶⁴. Выражалась уверенность, что западноармянство, пользующееся конституционными свободами в Турции, долго не будет находится в безразличии к грубым притеснениям полиции. Районное собрание АРФ Дашнакцутюн призывало все сословия западноармянство к оказанию материальной помощи кавказским политзаключенным и их семьям.

24 марта 1910 г. Мигран дал в Новочеркасске дополнительные показания о преследованиях со стороны руководства нового “Дашнакцутюна”, уточнил данные о партийной элите, организационной структуре и деятельности⁶⁵. С учетом важности показаний, Лыжин 11 мая затребовал от прокурора Тифлиссского окружного суда сведения по поводу покушения на Миграна от 20 ноября 1909 г., чтобы приобщить к материалам предварительного следствия по делу партии “Дашнакцутюн”⁶⁶.

С учетом важности церковного компонента деятельности армянской революционной организации 10-11 мая 1910 г. судебный следователь Лыжин осуществил допрос бывшего прокурора Эчмиадзинского Синода Леонида Александровича Френкеля. Представлено мнение об отсутствии системной деятельности самодержавия в отношении церкви и армянского народа: “Армянские публицисты и политические деятели, заверяли, ложно пропагандировали, что эти мероприятия входили в круг планомерных действий центральной и кавказской власти, направленных на уничтожение лояльного и преданного России армянского народа. *Никакого общего плана не было*, и каждое из этих мероприятий вызывалось только обстоятельствами данного момента и носило характер не агрессивных действий, а скорее *робкой самообороны*”⁶⁷.

Выдвинутый тезис “робкой самообороны” самодержавия не соответствует действительности: она всегда осуществляется во имя определенных целей и против кого-то. С начала 80-гг. XIX в. самодержавие России взяло курс на ассимиляцию армянского народа и лишения Эчмиадзина роли политического института в национальной жизни всех армян⁶⁸. Конкретная программа по установлению “стро-го контроля была представлена главноначальствующим Кавказа С. Шереметевым во всеподданнейшей записке конца 1895 г. Она предусматривала три компонента решения Эчмиадзинского вопроса: 1) изъятие народное образование сельского населения из ведения армянского духовенства и передачи церковно-приходских школ в ведомство Кавказского учебного округа по примеру иноверческих исповеданий католиков и лютеран; 2) усиление контроля над благотворительными армянскими обществами, с их закрытием главноначальствующим в случае нарушения уставных требований; 3) в случае неэффективности предложенных мер к отнятию недвижимых и ненаселенных имений за вознаграждение, оформленное в определенный капитал под правительственным контроле. Получаемые проценты предлагалось тратить на религиозные дела и пожелание жертвователей. По указанию

⁶⁴ Лео. Анцялиц., с. 222, 223.

⁶⁵ Там же, д. 3, с. 223.

⁶⁶ В.Г. Тунян Правление католикоса М. Измирляна..., с. 156, 159, 160.

⁶⁷ В.Г. Тунян Легенды и были: охранка и Армения XX - нач. XXв.Ер., 2008, с.115- 117.

⁶⁸ НАА, ф. 95, оп. 1, д. 6, л. 2571.

царя Николая II записка поступила на рассмотрение в Совет министров и была одобрена в начале 1896 г.⁶⁹.

Была сделана зарисовка формирования революционного армянского движения на Кавказе: “Хотя фактические выступления армянских революционных партий и начались, сравнительно недавно, но существование их на Кавказе, датируется уже первой половиной XIX столетия. Первоначально они были революционными только с точки зрения турецкого и персидского правительств, так как они стремились к освобождению своих единоверцев от мусульманского ига. Для этих целей пошли повстанческие выступления вооруженных банд в Турецкой Армении; лучшие армянские патриоты старались о пробуждении национального самосознания, о воспитании молодежи в духе древне-армянских героических преданий, о создании светской литературы, школ. Эпоха эта особенно способствовала поднятию престижа патриарха-католикоса и духовенства, так как для армян в виду отсутствия государственной самостоятельности, единственным объединительным началом могли служить религия и идея сохранения нации (как у евреев), ибо мечты о будущей великой Армении были слишком призрачны”.

Представлено умозаключение о сдержанном отношении руководства Кавказа к повстанческому армянскому движению, где деятельность сродни бандитской: “Описание деятельности армянских политических кружков, скорее безразличной для тогдашнего кавказского начальства, носило совершенно другой характер по отношению к турецкому правительству. Кавказ издревле сделался складочным местом для транспортировки оружия и боевых припасов, предназначенных для турецких повстанцев, местах, где формировались банды добровольцев, хранились деньги, накапливалась литература, и где находили приют политические беженцы из Турции и Персии. Кроме того через Кавказ сносились между собой турецкие и заграничные революционные комитеты. Времена эти совпадали с эпохой войн России против Персии и Турции и наши политики и стратеги не только ничего не имели против описанной выше деятельности, но всячески таковую поощряли, так как плацдарм всех этих войн находился в местностях, населенной армянами и частично впоследствии отошедший к России - Елисаветполя, Эриванская губерния и Карская область”.

Наличие выгодной геополитической ситуации обернулось, по мнению Френкеля, льготной политикой к армянскому населению и Эчмиадзину: “С другой стороны армян, по причинам вполне понятным, с чисто азиатской ловкостью старались использовать русское покровительство, получив невиданные никем из инородцев (кроме финов) преимущества в деле общественного и церковного самоуправления. Многие деятели активной борьбы с турецким правительством создали среди обширный кадр опытных революционеров, приучив их к конспиративной деятельности и антиправительственным выступлениям. В этой атмосфере родились и выросли последующие поколения, значительно отличающиеся от своих дедов и отцов-националистов-клерикалов. Масса молодых патриотов, совершая свое образование в средних и высших школах России и за границей, оказались вне влияния родной обстановки, легко увлеклись учением социализма и возвращались

⁶⁹ Там же, л. 2659.

домой уже членами той или иной революционной партии - не составлял никакой социально-кавказской организации и чаще всего примыкая к Российским социал-демократам и социал-революционерам, ибо грузинские революционеры безразлично предусмотрительно отгородились от армян”⁷⁰.

Логичности построения Френкеля не соответствовал тезис о “покровительстве” революционерам. Там где было возможно и нужно она пресекалась властями. В 60-х годах XIX жандармерия безуспешно искала представителей общественно-политического движения “Молодая Армения” в Закавказье и на территории России. Вместо рисуемой картины воздействия русских армян на западноармянскую действительность выяснилась обратная. Было лишь установлена связь между статутом для западных армян “Сахманадрутюном “(Конституция)”, утвержденной султаном Абдул Азизом под влиянием Франции и Англии, с целью создания политического центра для подданных армян, их освобождения от воздействия Эчмиадзина и России. Активность в этом направлении проявила общественное течение “Молодая Армения”. Вследствие чего её идеология проникала и в российские пределы. Когда же в 1883 г. ереванская администрация выявила тайную патриотическую организацию “Азгасер и Айасер” то она была разгромлена. Точно также региональная власть не допустила в 1890 г. похода Саркиса Кукуняна в Турецкую Армению, подготовленного всеми политическими силами нации, поскольку не желала обострять отношения с османскими властями. Причем развитие и формирование подхода находилось под контролем тайной полиции⁷¹.

В то же время привлекает внимание противопоставление двух этапов в освободительном движении - кружкового и партийного, понимание наличия социал-демократического течения и разграничения с грузинскими революционерами. По сути дела в армянской среде происходило столкновение разных мировоззрений: 1) национальных революционеров, от представителей духовенства до радикалов; 2) мелкобуржуазного и народнического социализма; 3) буржуазного либерализма - “мшакизма”; 4) пролетарского социализма. И на все это воздействовала общественное развитие России.

Воззрения всегда существуют для личностей, социальных групп и властей различных мастей, выражая определенные цели в политическом процессе и национальном развитии. При этом политический процесс отражает взаимодействие и борьбу социальных сил за доминирование в национальной жизни. Пик столкновений воззрений проявляется в достопримечательных и радикальных событиях, что отражает смену и ценностей различных поколений.

Бывший прокурор констатировав смену поколений в радикальном движении со сменой установок и рамежеванием. Вначале имелось время романтического единения поколений: “Сначала старики идеалисты - клерикалы упивались с этой революционной накипью, так как время было боевое, в деле борьбы на смерть за своих братьев в Турции, и некогда было спорить о будущем социальном устройстве”. После чего последовала борьба поколений за доминирование в обществе, где

⁷⁰ В. Г. Тунян Эчмиадзинский престол XIX - нач. XX вв. Ер., 2001, с. 91- 95; Эчмиадзинский вопрос в политике России. Ер., 2002, с.35, 36,61, 97.

⁷¹ РГИА, ф. 821, оп. 140, д. 22 6, л. 18.

важным фактором стал штурм Эчмиадзинского монастыря изнутри, завершившийся победой социальных революционеров.” Затем у молодежи явилась естественная и соблазнительная мысль - вытеснить отсталых националистов-клерикалов, воспользовавшись собранными ими оружием, деньгами и организованными местными кружками, и главное получить по наследству их влияние на народ. Для этой последней цели, масса революционной молодежи пошла в духовенство и заполнила собой ряды братии Эчмиадзинского монастыря, легко терроризировав благонадежные элементы и овладев волею дряхлого патриарха Мкртича, тоже, впрочем, старого революционера. Таким образом, на обломках клерикально-националистического сообщества утвердился современный “Дашнакцутюн”, физиономия которого стала выясняться только после 4 и 5 съезда и программы 1907 года, а до того это было весьма пестрое собрание фракций, от кадетов до анархистов-коммунистов и просто профессиональных убийц грабителей включительно”⁷².

Показания Френкеля были приобщены к делу о партии “Дашнакцутюн”. В то же время Лыжин с 12 по 15 мая 1910 г. предпринял осмотр документов представленных Френкелем докладных и записок, ставших основой его умозаключений, расширяющих список революционно настроенных священнослужителей. 29 мая поступила докладная об оскорблении архиепископа С. Парзянца 29 октября 1906 г, присланная ереванским губернатором. Изучение переписки Френкеля, дела канцелярии наместника Кавказа о съезде социализации в Эчмиадзине продолжилось в июне и июле 1910 г⁷³.

Судебный следователь Лыжин предпринял попытку уточнения собранных сведений о революционерах. В постановлении от 8 июля 1910г.отмечено, что по показанию Габриеля Кешишяна Леон Акопов Агамалов являлся членом Карского центрального комитета партии “Дашнакцутюн”, а из изучения дела об убийстве в 1905 г. Мелкона Мхитарова явствовало о нахождении во главе комитета Леона Агамалова и Амбарцума Гарибова. Проявлено стремление уточнить роль лидера партии “Дашнакцутюн” Симона Заваряна, который, по словам Миграна, являлся членом лишь Восточного бюро и с другим членом Иваном Сагателяном вел переговоры с “анджатаканами” - младодашнакцаканами в С.-Петербурге, руководил Эчмиадзинским съездом социализации. Уточнилась деятельность Драстамата Канаяна (“Дро”), который согласно показаниям Кешишяна, участвовал в Армавирском покушении 10 июля 1907 г. на него, а затем в июле принял участие в убийстве ген. Алиханова в Александрополе⁷⁴.

Активность судебного следствия противоречила тезису “умиротворению” Закавказья наместником Воронцовым Дашковым. Во всеподданнейшем отчете за пятилетнее управление от 30 июня 1910 г. отмечалось усмирение революционной активности: “В настоящее время Кавказ находится накануне прочного успокоения, после революционной бури, в момент которой я был призван к управлению краем и на борьбу с которой мне приходилось направлять преимущественные заботы. Ныне на всем пространстве края не имеется сколько-нибудь значительной рево-

⁷² НАА, ф. 95, оп. 1, д. 6, л. 2659.

⁷³ **В.Г. Туян** Легенды и были..., с. 18 - 21, 23 - 27.

⁷⁴ НАА, ф. 95, оп. 1, д. 6, л. 2559, 2660.

люционной организации из числа тех, которые ко времени моего приезд довели его до анархического состояния”⁷⁵. Имевшиеся правонарушения сочтены “отзвуком революционного движения

По допросу Лыжина осуществлены допросы 12 июля 1910 г. в урочище Аджикент Елисаветпольской губернии бывшего губернатора Г. С. Ковалева и 20 июля в урочище Дарачичаг Ереванского губернатора В. Ф. Тизенгазена о деятельности партии “Дашнакцутюн”, а также прояснению сведений о Давиде Завриеве⁷⁶. В августе предпринята проверка полученных сведений: рассмотрено донесение о допросе Давида Завриева 12 сентября, а от 21 сентября - товарища прокурора Бакинского окружного суда Д. Б. Дгебудзе и дополнительного допроса Погоса Хачатурова Чубарьяна 7 октября⁷⁷.

Таким образом, подготовка материалов судебного следствия по делу “революционного армянского сообщества” вылилась в системный сбор материалов о возникновении национального движения армянского народа во второй половине XIX и начале XX вв. Выявлено формирование новой системы ценностей в армянском радикализме. Её отличительными чертами являлись - социализация общественных устоев, светкость, рационализм, революционный натиск и защита национальных чаяний. Представлено наличие разных поколений армянских революционеров, деятельность которых вначале протекала за освобождение поработенных братьев в Османской Турции, а затем, после дифференциации рядов, приняла социальный и антидержавный характер. Приобщена новая информация о текущей и исторической деятельности партии “Дашнакцутюн”.

Վալերի Թունյան – Դաշնակցություն կուսակցության դեմ դատական գործընթացի նախապատրաստումը 1909–1910թթ.: – Հոդվածը նվիրված է Դաշնակցություն կուսակցության դեմ դատական գործողության նախապատրաստմանը, որն իրականացնում էր Նովոչերկասկի դատարանի քննիչ Լիժինը: Բացահայտվում են այն կեղծ հիմնավորումները, որոնց հիման վրա շատ չանցած կայացավ Դաշնակցության դատը:

⁷⁵ Всеподданнейший отчет за пятилетнее управление Кавказом ген.-ад. графом Воронцовым - Дашковым. Спб., 1910, с. 4.

⁷⁶ Там же, д. 6, 3240, 3250, 3264, 3285, 3324.

⁷⁷ Там же, д. 7, л. 3483, 4051, 4013, 4141.

**ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԱՌՆՉՎՈՂ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ
(1990-2001թթ.)**

ԷՐՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայաստանի կողմից իր անկախության նվաճմանը անմիջականորեն հաջորդած կոպիտ սխալների արդյունքում հանրապետությունում ծայրահեղորեն սրվել էր սոցիալական կացությունը: Հանրապետության հատկապես ֆինանսական ոլորտում իրականացված ինստիտուցիոնալ բնույթի վերակառուցումներն ամենաանմիջական ազդեցությունն ունեցան ՀՀ այդ շրջանի սոցիալական կացության վրա: Այդ առումով նորանկախ Հայաստանի տնտեսության ֆինանսական ոլորտում իրականացված առավել հիմնարար բնույթի վերափոխումներից էին անցումը բացառապես շուկայական գնագոյացմանը, դրամավարկային բնագավառում իրականացված վերափոխումները, ազգային դրամը շրջանառության մեջ դնելը, ֆինանսական շուկայի ձևավորմանը միտված քայլերը, հարկային ոլորտի կայացմանն ուղղված միջոցառումները և այլն:

Հանրապետությունում 1992-1996 թվականներին իրականացված գների ազատականացումը տնտեսության մեջ որոշ ուղղություններով սկսվել էր տակավին ԽՍՀՄ փլուզման ընթացքում: Խոսքը վերաբերում է քայքայվող պետության նախ և առաջ տնտեսական ամբողջականության խզման հետևանքով հանրապետություն ներկրվող էներգակիրների և կարևորագույն հումքատեսակների գների կտրուկ աճին և դրանց համաշխարհային չափանիշներին համապատասխանեցմանը: Անկախացմանը հաջորդած շրջանում հանրապետությունում ծավալված աննախադեպ գնաճի գործում օբյեկտիվ բնույթի նախադրյալների ունեցած բացառիկ դերակատարության մասին վկայող փաստերը բազմաթիվ են: Այսպես Ռուսաստանի Դաշնությունում և ԱՊՀ անդամ պետություններում վառելիքաէներգետիկ ռեսուրսների գների բարձրացման առնչությամբ, Հայաստանում արտադրության վնասաբերության կանխման նպատակով կառավարության որոշմամբ 1993 թվականի փետրվարի 1-ից հանրապետությունում միանգամից բնակավարձը թանկացավ 5 անգամ, էլեկտրաէներգիան շուրջ 8 անգամ, իսկ բնական գազը 10 անգամ⁷⁸ և այլն:

Գների և սակագների ազատականացման բուն գործընթացը սկսվել էր Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի 1992 թվականի հունվարի 3-ին ընդունված գների ու սակագների ազատականացման մասին որոշմամբ⁷⁹: Հարկ է նշել, որ նման քայլի հնարավոր իրականացման մասին ի թիվս սեղմ ժամկետներում լուծվելիք այլ տնտեսական խնդիրների, բարձրաձայնվել էր 1991 թվականի

⁷⁸ Հայաստանի Հանրապետություն, 29 հունվարի 1993թ.:

⁷⁹ Նույն տեղում, 4 հունվարի 1992թ.:

նոյեմբերի 12-ին ՀՀ Նախագահի երդման արարողության ժամանակ ունեցած ելույթում⁸⁰:

«Հայաստանի Հանրապետությունում ազատ գների և սակագների համակարգին անցնելու մասին» ԳԽ ընդունած որոշման մեջ այդ արմատական քայլը հիմնավորված էր այն հանգամանքով, որ Ռուսաստանյան Ֆեդերացիան և ԱՊՀ անդամ մյուս երկրները տակավին նույն 1992թ. հունվարի 2-ից արդեն իսկ սկսել էին գների ու սակագների ազատականացման գործընթացը և նման պայմաններում հասկանալի պատճառներով Հայաստանի Հանրապետությունում անխուսափելի էր դառնում նման քայլը, չնայած այն հանգամանքին, որ հանրապետությունում բացակայում էր նման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ իրավական դաշտը: Որոշման մեջ նշված էր նաև, որ գների ազատականացումը արվում էր տնտեսության որոշակի կայունացման, բնակչության սոցիալական ապահովվածության անհրաժեշտ երաշխիքների տրամադրման, ինչպես նաև շուկայական հարաբերություններին անցման նպատակով⁸¹:

ՀՀ Նախագահի 1992թ. հունվարի 4-ին ստորագրած «ՀՀ-ում ազատ գների ու սակագների անցնելու մասին» հրամանագրով գործընթացի սկիզբը սահմանվել էր նույն թվականի հունվարի 5-ից⁸²: Ըստ հիշյալ հրամանագրի գների ազատականացմամբ պայմանավորված որոշ սոցիալական բնույթի խնդիրների պետական կարգավորումը ինչ-որ կերպ իրականացնելու նպատակով, ազատ գնագոյացման քաղաքականությունը իրականացման այդ փուլում չտարածվեց առաջին անհրաժեշտության մի խումբ հիմնականում սպառողական ապրանքների, որոշ ծառայությունների վրա, որոնց գները ինչպես և նախկինում սահմանվելու էին պետության կողմից, իհարկե պարբերական ինդեքսավորման պայմանով: Այդ ապրանքատեսակներն ու ծառայություններն էին հացը, կաթնամթերքը, մանկական սնունդը, դեղորայքը և այլն, հաստատագրված գնացուցակով էին գործելու բնակարանավարձի, էլեկտրաէներգիայի, տրանսպորտի և կապի որոշ ծառայությունները:

Շուկայական գնագոյացման համակարգի արմատավորման գործընթացը արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ Նախագահի 1992թ. հունվարի 4-ի մեկ այլ հրամանագրով հանրապետության ղեկավարին առնթեր ստեղծվեց օպերատիվ շտաբ⁸³: ՀՀ կառավարության 1992թ. հունվարի 5-ի կարգադրությամբ էլ գների ազատ արձակման հետ կապված աշխատանքները նախարարների խորհրդի մակարդակով համակարգելու, գործընթացի արդյունքները պարբերաբար ամփոփելու և այդ հարցում մեթոդական ղեկավարություն իրականացնելու նպատակով ստեղծվեց կառավարական հանձնաժողով⁸⁴: Քննարկվող ժամանակահատվածում լայն սպառման առաջին անհրաժեշտության որոշ ապրանքատեսակների վաճառքը իրականացվում էր նախնական պատվերի կտրոններով: Այսպես օրինակ, հանրապետության բնակչության պոտենցիալ մատակարարումը ինչ-որ չա-

⁸⁰ Նույն տեղում, 12 նոյեմբերի 1991թ.:

⁸¹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 1-2 (1005-1006), հունվար 1992թ., էջ 14-16:

⁸² Նույն տեղում, էջ 18:

⁸³ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 1-2 (1005-1006), հունվար 1992թ., էջ 31:

⁸⁴ Հայաստանի ազգային արխիվ (Այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 168, գ. 7, թ. 1:

փով բավարարելու, ինչպես նաև պարենի բաշխման համակարգում սոցիալական կարգավորում իրականացնելու նպատակով 1992թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվեց շաքարի և ծխախոտի բացառապես կտրոնային վաճառք⁸⁵: Հոկտեմբեր ամսից կտրոնային եղանակով իրականացվում էր հանրապետության բնակչությանը կենդանական յուղի վաճառքը: Ըստ ՀՀ կառավարության սահմանած կարգի ամսական կտրոնով հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու հասնում էր 200 գ կենդանական յուղ: Նույն 1992թ. նոյեմբեր ամսից ՀՀ կառավարության կարգադրությամբ, հացի վաճառքը ևս իրականացվում էր կտրոններով՝ քաղաքաբնակներին օրական 350 գ, իսկ գյուղի յուրաքանչյուր բնակչին 250գ. հաշվարկով⁸⁶ և այլն: Ի դեպ, Հայաստանի կառավարության նոյեմբեր ամսի մեկ այլ կարգադրությամբ, ելնելով հանրապետության իրական հնարավորություններից բնակչությանը կտրոնով տրվող հացի չափափածինը զգալիորեն կրճատվեց՝ քաղաքի յուրաքանչյուր բնակչից 100 գրամով, իսկ գյուղաբնակներից 50 գրամով⁸⁷: Ավելացնենք նաև, որ չնայած վերը նշված որոշ սպառողական առաջին անհրաժեշտության ապրանքների պետականորեն հաստատագրված գների, այնուամենայնիվ հանրապետությունում աստիճանաբար արմատավորվող շուկայական մթնոլորտը, իր ազդեցությունն էր թողնում նաև գնագոյացման այդ հարթության վրա: Այսպես տակավին 1992 թվականի հունիսին հացի գինը հանրապետությունում կրկնապատկվել էր⁸⁸: 1994 թվականին ևս արձանագրվել էին սպառողական ապրանքների և ծառայությունների կառավարության կողմից հաստատագրված գների ու սակագների էական փոփոխություններ: Այսպես հաջամթերքների գինը ավելացել էր 40,8%-ով⁸⁹: 1993 թվականի համեմատ 1994 թվականի նոյեմբերին պետությունը շուրջ 40 անգամ ավելացրել էր բնակարանային կոմունալ ոլորտում մատուցվող ծառայությունների գները, 34,6 անգամ բուժասպասարկման և շուրջ 118 անգամ փոստային ծառայությունների գներն ու սակագները⁹⁰: Այդ երևույթը շարունակվեց մինչև հանրապետությունում բոլոր տեսակի ապրանքների շուկայական գնագոյացման վերջնական արմատավորումը: Այդ ճանապարհին լուրջ քայլ էր տակավին 1994 թվականի վերջերին իրականացված գների ու սակագների լայն ազատականացման գործընթացը, որի արդյունքում ազատ արձակվեցին գազի, օդային փոխադրումների, արտաքին հեռախոսակապի, փոստային կապի ծառայությունների և այլն գներն ու սակագները: Հանրապետությունում վերջիններից մեկը ՀՀ կառավարության որոշումով 1995թ. հունիսի 1-ից ազատականացվեց հացի գինը⁹¹:

Շուկայական գնագոյացման առումով ևս, ցավոք սրտի կրկին հաստատվեց ժողովրդական իմաստությունը՝ չի լինում բարիք առանց չարիքի: Տեսեսապես հիմնավորված այդ քայլի արդյունքում միայն 1994 թվականի դեկտեմբերին Հայաստանում սպառողական գների համաթիվը աճեց և հասավ շուրջ 16%-ի⁹²:

⁸⁵ Նույն տեղում, գ.312, թ.1-2:

⁸⁶ Նույն տեղում, գ. 473, թ.1-4:

⁸⁷ Նույն տեղում, գ.487, թ.1:

⁸⁸ Հայաստանի Հանրապետություն, 4 հունվարի 1992թ.:

⁸⁹ Նույն տեղում, 15 դեկտեմբերի 1994թ.:

⁹⁰ Նույն տեղում, 31 դեկտեմբերի 1994թ.:

⁹¹ Նույն տեղում, 1 հունիսի 1995թ.:

⁹² Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց 1995, Երևան, 1995թ., էջ 18:

Կապված գլխավորապես գների ազատականացման հետ հանրապետությունում զգալի գնաձարձանագրվեց նաև այդ գործընթացի հիմնականում ավարտման տարում՝ 1996 թվականին⁹³:

Հանրապետությունում ծայր առած տնտեսական վերափոխումների համակարգում շուկայական ազատ գնագոյացմանը անցման քայլի առաջանցիկությունը ընթացող սեփականության ձևերի փոփոխության նկատմամբ դարձավ հնարավորինս խտացված ժամանակահատվածում «տենդագին» գնաճի⁹⁴ հետևանքով ազգաբնակչության սոցիալական առանց այն էլ անմխիթար վիճակի էլ ավելի վատթարացման պատճառը: ՀՀ-ական իշխանությունների զուտ տեսական մտակառուցումների վրա հիմնված անսասան հավատը շուկայական ինքնակազմակերպման նկատմամբ հասցրեց նրան, որ սկզբունքային մակարդակով բացառվեց պետական որևէ միջամտությունը սոցիալական նշանակության գործընթացներին: Այսպես, 1996թ. հունվարի 23-ին Հայաստանի այն ժամանակվա վարչապետ Հ. Բազրադյանը մամուլ ասուլիսում խոսելով 1992 թվականին գների ազատականացման հետևանքով Ժողովրդի դրության անասելի վատթարացման մասին մասնավորապես հայտարարեց. «Պարադոքսալ կարող է թվալ, սակայն մեզ համար այդ ծանր ժամանակաշրջանում, հանուն մեր ժողովրդի մենք անմիջականորեն ժողովրդի մասին չէ, որ պիտի մտածեինք, այլ՝ հանուն այն բանի, որ փրկենք այն, ինչ ստեղծել էինք»⁹⁵: Իրոք, որ պարադոքսալ է՝ մտածել ազգաբնակչության մասին, նրա համար ոչինչ չանելով: Թվում է ամենևին էլ ավելորդ չէ նշել, որ հենց այդ ժամանակահատվածում և նման տեմպերով հանրապետությունում գների ազատականացումը, ինչպես և սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ բնագավառներում իրականացված բազմաթիվ այլ վերափոխումները, դրանց իրականացման ժամկետներն ու մեթոդները որոշ դեպքերում պայմանավորված էին նաև միջազգային կառույցների կողմից ՀՀ-ին ներկայացված պահանջներով⁹⁶:

Գների անխուսափելի աճը, ինչ-որ չափով հնարավոր եղավ կանխել հիմնականում արտաքին պարտքերի հաշվին ձեռքբերված մակրոտնտեսական կայունացումից հետո՝ մասնավորապես 1996-1997 թվականներին⁹⁷: Սակայն սղաճի տեմպերի թուլացմանը միտված մակրոտնտեսական քաղաքականությունը 1998 թվականի վերջերից հանգեցրեց հանրապետության դրամական զանգվածի շուտափույթ պակասեցման անհրաժեշտությանը, որն էլ վտանգում էր հատկապես վճարային հաշվեկշռում ձեռքբերված ունեցող Հայաստանի Հանրապետության ողջ ֆինանսավարկային համակարգի կայունությունը⁹⁸:

Տակավին 1990 թվականին ընդունված անկախության մասին հռչակագրի 8-րդ կետով, որպես մոտակա խնդիր նախատեսվում էր հանրապետությունում շրջանառության մեջ մտցնել սեփական դրամ, հիմնել ազգային բանկ և ձևավորել անկախ Հայաստանի ֆինանսավարկային համակարգը իր բոլոր բաղադրիչներ-

⁹³ Հայաստանի Հանրապետություն, 27 փետրվարի 1996թ.:

⁹⁴ Նույն տեղում, 13 հոկտեմբերի 1993թ.:

⁹⁵ Հայաստանի Հանրապետություն, 27 փետրվարի 1996թ.:

⁹⁶ Նույն տեղում, 15 հոկտեմբերի 1994թ.:

⁹⁷ **Է. Մինասյան**, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.) Երևան, 2003թ., էջ 139:

⁹⁸ Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 2001: Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, - Երևան 2001թ., էջ 73:

րով⁹⁹: Այնպես որ վստահաբար պետք է արձանագրել, որ նշված բոլոր խնդիրները և այդ թվում նաև ազգային դրամի հիմնումը ամենևին էլ պատահական երևույթ չէր: Որ ազգային դրամի ստեղծման ուղղությամբ աշխատանքները ծավալվել էին հանրապետությունում դրամի կիրառման մասին որոշում ընդունելուց զգալիորեն ավելի վաղ հաստատվում է բազմաթիվ փաստերով: Այսպես տակավին 1992թ. մարտի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունել էր «Հայաստանի Հանրապետության ազգային դրամի մասին» որոշումը, որի կենսագործման նպատակով էլ ՀՀ կառավարությունը հենվելով իր իսկ կողմից, դեռևս 1992 թվականի փետրվարին ընդունված «Հայաստանի ազգային դրամի անվանման, նմուշի և շրջանառության մեջ մտցնելու մեխանիզմի որոշման նպատակով մրցույթ կազմակերպելու մասին» որոշմամբ ձևավորված մրցույթային հանձնաժողովի առաջադրած եզրահանգումների վրա նույն թվականի ապրիլի 25-ին կայացրած թիվ 243 որոշմամբ հաստատեց Հայաստանի Հանրապետության ազգային թղթադրամի նմուշի մրցույթում առաջնությունը շահած նկարիչներ Հրաչյա Ասլանյանի և Աշոտ Մանուկյանի ազգային ոճով ձևավորված 10, 25, 50, 100, 200 և 500 արժողությամբ տարբերակները, որպես հայկական ապագա թղթադրամի նմուշներ¹⁰⁰: Այնուամենայնիվ հարկ է արձանագրել, որ նորանկախ Հայաստանը չէր շտապում ռուբլու գոտուց դուրս գալ: Այսպես 1993 թվականի հունիսին ՀՀ ԳԽ-ն ընդունել էր «Հայաստանի Հանրապետությունում ռուբլին որպես պաշտոնական վճարման միջոց ընդունելու մասին» որոշումը¹⁰¹: Նույն թվականի սեպտեմբերին էլ Հայաստանը նախկին խորհրդային 5 հանրապետությունների հետ ստորագրել էր միասնական ռուբլու գոտի ստեղծելու վերաբերյալ համաձայնագիր¹⁰²: Ռուբլին որպես օրինական վճարամիջոց պահպանելու մասին երկկողմանի պայմանագիր էր ստորագրվել նաև ՀՀ և ՌԴ միջև¹⁰³:

Ինչ վերաբերում է Հայաստանում ազգային դրամի անմիջական ներդրմանը, ապա հարկ է նշել, որ այդ պահը պայմանավորվեց մի շարք հանգամանքներով, որոնք հանուն արդարության հարկ է նշել, որ ընդամենը առիթի նշանակություն ունեցան: Հենց այդպիսի առիթ հանդիսացավ 1993 թվականի նոյեմբերի սկզբներին նորանկախ Հայաստանում միակ պետական վճարամիջոց հանդիսացող ՌԴ ռուբլու մեծամասշտաբ ինտերվենցիան հանրապետություն, որի հետևանքով ՀՀ առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական կացությունը նոր փորձության ենթարկվեց կապված դրամաշրջանառության կազմալուծման և հիպերինֆլյացիայի հետ: Սակայն այնուամենայնիվ, ինչպես արդեն նշել ենք, ռուբլու գոտում զարգացումների նման հեռանկարը հայկական կողմի համար ամենևին էլ անակնկալ չէր: Հայաստանում դա կանխատեսվում էր և դրան համապատասխան ձեռնարկվում էին քայլեր: Մասնավորապես արդեն մինչ այդ աշխարհի 87 երկրների համար դրամանիշներ տպած, գերմանական «Դիզելե և Դերիենտ»

⁹⁹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 16 (972), 31 օգոստոսի 1990թ., էջ 5:

¹⁰⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 239, թ. 1-6:

¹⁰¹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 11 (1039), 15 հունիսի 1993թ., էջ 4-5:

¹⁰² Հայաստանի Հանրապետություն, 8 սեպտեմբերի 1993թ.:

¹⁰³ Նույն տեղում, 20 նոյեմբերի 1993թ.:

գրատպական հանրահայտ ֆիրմայում¹⁰⁴ ամբողջությամբ տպագրվել և հանրապետություն էր տեղափոխվել նորանկախ Հայաստանի պետական ինքնիշխանության ծանրակշիռ ձեռքբերումներից ևս մեկը՝ ազգային դրամանիշը՝ դրամը: Ակտիվ բանակցություններ էին ծավալվել միազգային ֆինանսական կառույցների ու տարբեր երկրների հետ ազգային դրամի հնարավոր մուտքի դեպքում վերջինիս կայունությանն օժանդակող գործընթացներ նախաձեռնելու ուղղությամբ¹⁰⁵ և այլն: Ազգային դրամի ներդրմանն էր նպատակամղված նաև հանրապետությունում ինքնուրույն ֆինանսավարկային համակարգին անցման ուղղությամբ 1993 թվականի ապրիլին իրականացված կարևորագույն քայլերից մեկը «Հայաստանի կենտրոնական բանկի մասին» օրենքի ընդունումը¹⁰⁶: Եվ ահա ելնելով ֆինանսական բնագավառում ստեղծված ծանրագույն կացությունից հանրապետությունում դրամաշրջանառության գործի վերահսկողության և կարգավորման նպատակով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից դեռևս 1993 թվականի հոկտեմբերին ստեղծված հատուկ պետական հանձնաժողովը նույնիսկ 19-ին պատմական որոշում կայացրեց՝ 1993թ. նոյեմբերի 22-ից Հայաստանի ողջ տարածքում ռուբլու շրջանառությունը դադարեցնելու և հայկական դրամը որպես վճարման օրինական միջոց ճանաչելու վերաբերյալ¹⁰⁷: Այդպիսով նորանկախ Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ մտան 10, 25, 50, 100, 200 և 500 դրամ արժողությամբ թղթադրամները: 1994 թվականի մարտի 16-ից էլ շրջանառության մեջ մտան հայկական մետաղադրամները՝ 1, 3, 5, 10 դրամ և 10, 20, 50 լումա արժողությամբ¹⁰⁸: Այդ քայլով փաստորեն իրականացվեց դրամափոխության 2-րդ փուլը, քանզի մետաղադրամները իրենցով փոխարինելով հանրապետության դրամաշրջանառության մեջ մանրադրամային գործառնությունների իրականացման նպատակով, դեռևս պահպանված Խորհրդային և Ռուսաստանի Դաշնության որոշ դրամանիշներ, վերջնականապես ձևավորեցին ազգային դրամական համակարգը: Այսպիսով դրամի մուտքը թեև կանխատեսելի էր, սակայն այնուամենայնիվ այդ պահին ինչ-որ չափով նաև պարտադրված երևույթ էր: Փաստերը անհերքելիորեն ապացուցում են, որ Հայաստանը արեց իրենից կախված ամեն ինչ միասնական ռուբլու գոտու ձևավորման խնդիրը փոխհամաձայնեցված և համակարգված եղանակով իրականացնելու համար: Սակայն ռուբլու վրա հիմնված ֆինանսական համակարգում սկսված փլուզման ընթացքը դուրս եկավ վերահսկելի հունից: Ռուսաստանը ինքն էր փաստորեն դուրս մնացել ռուբլու գոտուց: Ռուբլու գոտուց դուրս էին եկել Ղազախստանն ու Ուզբեկստանը: Նման իրավիճակում մեծացել էր այլ վայրերից շրջանառությունից դուրս եկող դրամանիշների ներհոսքը Հայաստանի Հանրապետություն¹⁰⁹: Հանուն արդարության հարկ է նշել, որ երկիրը այդ պահին, ըստ էության, ֆինանսական համակարգի կայացածության առումով պատրաստ չէր դրամի ներդրմանը՝ Կենտրոնական

¹⁰⁴ Հայաստանի Հանրապետություն, 10 հոկտեմբերի 1992թ.:

¹⁰⁵ Նույն տեղում, 20 նոյեմբերի 1993թ.:

¹⁰⁶ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.): Երևան, 1995թ., էջ 480-492:

¹⁰⁷ Հայաստանի Հանրապետություն, 20 նոյեմբերի 1993թ.:

¹⁰⁸ Նույն տեղում, 15 փետրվարի 1993թ.

¹⁰⁹ Հայաստանի Հանրապետություն, 20 նոյեմբերի 1993թ.:

բանկի ոչ լիարժեք ձևավորվածության, ազգային արժույթի կայունության համար անհրաժեշտ արժույթային պահուստների բացակայության պատճառով:

Վերոհիշյալ հանգամանքների, ինչպես նաև գների ազատականացման և այլ գործոնների ազդեցության ներքո ձևավորված անչափ բարձր սղաճի պայմաններում ազգային դրամը դատապարտված էր շեշտակի արժեզրկման: Այսպես, եթե դրամի ներդրումից անմիջապես հետո՝ 1993թ. դեկտեմբերի սկզբին ըստ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխանակման կուրսի ԱՄՆ դոլարը արժեք ընդամենը 15 դրամ¹¹⁰, ապա արդեն նույն դեկտեմբեր ամսի վերջերին սև շուկայում դոլարի գինն էր 62-65 դրամ¹¹¹: Տակավին 1994 թվականի մայիսին հանրապետությունում մակրոտնտեսական կայունացման սկզբնական շրջանում ԱՄՆ 1 դոլարի միջին գինը 412 դրամ էր (գնման գինը 400, վաճառքի գինը 425 դրամ)¹¹²: Մոտ 1995 թվականի սկզբներից, Հայաստանի կենտրոնական բանկը վերջապես կարողացավ ձեռնամուխ լինել օրենքով սահմանված իր հիմնական գործառնություններին և ստանձնելով հանրապետության ֆինանսական համակարգի էմիսիոն կենտրոնի դերակատարությունը հասավ սղաճի մակարդակի և դրանից ածանցյալ ազգային արժույթի փոխարժեքի կառավարելիությանը: Գերազանցապես հենց դրա հետևանքով հետագա տարիներին համեմատական առումով, դրամի փոխարժեքի կտրուկ բարձրացումներ չարձանագրվեցին: Այսպես 1997 թվականի սկզբից մինչև տարեվերջ կենտրոնական բանկի կողմից պարբերաբար փոփոխվող 1 դոլարի գնման գինը ամենաշատը ավելացել էր հունիս ամսին՝ 47 դրամով հասնելով 505,65 դրամի, իսկ տարեկան միջին փոխարժեքը 1997 թվականին կազմել էր շուրջ 489 դրամ¹¹³: Դրամի փոխարժեքի առանց լուրջ ցնցումների, համեմատաբար կայուն վիճակը պահպանվեց նաև խնդրո առարկա ժամանակահատվածի հետագա տարիներին: 1998 թվականին 1 ԱՄՆ դոլարի տարեկան միջին փոխարժեքը կազմել էր 505 դրամ, 1999 թվականին 535 դրամ, 2000 թվականին 539,52 դրամ: 2001 թվականի ընթացքում հանրապետության փոխանակման կետերում 1 դոլարը միջին հաշվով արժեցել էր մոտ 555 դրամ¹¹⁴:

Հանրապետությունում դրամի արժեզրկումն ու սղաճը ինչ-որ չափով հնարավոր եղավ կանխել հիմնականում, ինչպես զուտ դրամավարկային ոլորտում իրականացված գործառնությունների միջոցով, այնպես էլ արտաքին պարտքերի հաշվին ձեռք բերված մակրոտնտեսական կայունացումից հետո՝ 1995-1997 թվականներին:

Խնդրո առարկա ժամանակահատվածում դրամի արժեզրկմանը զուգընթաց հանրապետությունում շրջանառության մեջ մտցվեցին ավելի խոշոր դրամանիշներ: Այսպես 1994 թվականի հոկտեմբերից շրջանառության մեջ դրվեց 1000 դրամանոցը¹¹⁵, իսկ 1995 թվականից 5000 դրամ անվանական արժողությամբ թղթադրամները¹¹⁶: Անշուշտ, հսկայական էր նաև Հայաստանում ազգային դրամի ներդրման քաղաքական նշանակությունը: Նորանկախ Հայաստանում ազգային դրամի շրջանառության մեջ մտցնելու իրողության, հայոց կայացող պետա-

¹¹⁰ Նույն տեղում, 2 դեկտեմբերի 1993թ.:

¹¹¹ Նույն տեղում, 29 դեկտեմբերի 1993թ.:

¹¹² Նույն տեղում, 25 մայիսի 1994թ.:

¹¹³ Հայաստանի Հանրապետություն, 7 մայիսի 1998թ.:

¹¹⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002, Երևան, 2002թ., էջ 509:

¹¹⁵ Հայաստանի Հանրապետություն, 22 հոկտեմբերի 1994թ.:

¹¹⁶ Նույն տեղում, 5 սեպտեմբերի 1995թ.,

կանության ինքնիշխանության հետագա ծավալման ու ամրապնդման առումով, ամենաբացառիկ դերակատարության մասին է վկայում մի չափազանց էական հանգամանք եւ: Խոսքը մասնավորապես վերաբերում է այն առանձնահատուկ զգուշությանն ու շրջահայացությանը, որը ցուցաբերվեց Հայաստանյան իշխանությունների կողմից դրամը, որպես հանրապետությունում օրինական շրջանառության միջոց ճանաչելու պատմական վճռի կայացման և ի լուր աշխարհի ու մասնավորապես ի լուր ռուբլու գոտու կենտրոնական դերակատար ՌԴ-ի բարձրաձայնման և ընտրված ձևի առումով, հենց առաջին իսկ հայացքից աչքի զարնող յուրօրինակ, արտառոց բնույթին: Գերազանցապես նորանկախ ՀՀ համար այդ անչափ կարևոր նշանակության քայլը չվտանգելու և ընդհանրապես Ռուսաստանի Դաշնության հետ անկախացումից հետո տակավին ձևավորման փուլում գտնվող հարաբերությունները ամենաչնչին չափով անգամ չստվերելու անհրաժեշտության հաշվառմամբ Հայաստանում պետական ինքնիշխանության ամրապնդման հրամայականով իրականացված այդ իրավական գործառնությունը առաջին հայացքից, ավելի շատ թողնում էր բացառապես տնտեսական բնույթի, իր մեջ քաղաքական ոչինչ չպարունակող գուտ կենցաղային նշանակության հերթական հարցի լուծման տպավորություն: Փաստորեն հանրապետության տարածքում որպես վճարամիջոց ռուբլու գործունեության դադարեցման և ազգային դրամի ներդրման, հայոց անկախ պետականության կայացման առումով բացառիկ պատմական նշանակության քայլի վերաբերյալ, որպես իշխանական վճիռ ներկայացվեց ընդամենը կառավարության հիշատակված դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողովի 1993թ. նոյեմբերի 19-ի դրամը ներդնելու վերաբերյալ, արդեն հիշատակված, որոշումը, իսկ հանրապետության առաջին դեմքը՝ ՀՀ նախագահը ընդամենը հաջորդ օրը հեռուստատեսությամբ բարձրաձայնեց այդ որոշման գոյության մասին և ներկայացրեց այդ իրավական փաստաթղթի հետ կապված որոշ մանրամասներ¹¹⁷: Ազգային դրամը, տնտեսական առումով, դարձավ այն հիմնաքարը, որի վրա աստիճանաբար կայացավ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը: Ձևավորվեց հանրապետության կենտրոնական բանկը՝ իր գլխամասային գրասենյակով և նրան ենթակա հիմնարկներով, բաժանմունքներով ու ներկայացուցչություններով. որոնք որպես մեկ ամբողջական համակարգ օրենքով սահմանված կարգով ապահովում էին դրամի էմիսիայի իրականացումն ու կարգավորումը, դրամաշրջանառության կազմակերպումը: Հանրապետության գլխավոր բանկն էր ապահովում Հայաստանում դրամավարկային քաղաքականության իրականացումը, միջբանկային հաշվարկների կազմակերպումը, ՀՀ պետական պարտքի սպասարկումը և երկրի տարածքում բանկային գործունեություն իրականացնելու, ինչպես նաև արտարժույթով բանկային գործառնություններ կատարելու համար արտոնագրերի տրամադրումը: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով ՀՀ ԿԲ-ն էր հանդիսանում հանրապետության բանկերի համար վերջին ատյանի վարկատուն¹¹⁸ և այլն: 1993թ. ապրիլի 27-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի¹¹⁹ կիրարկումը ապահովեց Հայաս-

¹¹⁷ Հայաստանի Հանրապետություն, 20 նոյեմբերի 1993թ.:

¹¹⁸ Ведомости Верховного совета РА, N 8 (1036), 30 апреля 1993 г., с.10.

¹¹⁹ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Երևան – 1995թ., էջ 492-501:

տանում ամբողջական բանկային համակարգի ձևավորումը Հայաստանի կենտրոնական բանկի գլխավորությամբ: Այդ համակարգի մեջ էին մտնում նաև հանրապետության բոլոր տեսակի փայտիքական, կոոպերատիվ, բաժնետիրական, օտարերկրյա և համատեղ բանկերը, բանկերի մասնաճյուղերը և այլն: Հանրապետության ֆինանսավարկային համակարգում համեմատաբար թերևս ամենակայացած օղակի բանկային համակարգի վերաբերյալ 1993 թվականից մինչև 2001 թվականը ընդունվել էին համակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը միտված 9 կարևորագույն բնույթի օրենքներ¹²⁰, ինչպես նաև բազմաթիվ որոշումներ: Այդ առումով Խորհրդարանի կողմից 1993 թվականին ընդունված արդեն հիշատակված կենտրոնական բանկի, բանկային գործունեության մասին օրենքներին անհրաժեշտ է նաև ավելացնել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի 1993 թվականի հուլիսին ընդունած «Նախկին ԽՍՀՄ խնայքանկի հայկական հանրապետական բանկը Հայաստանի հանրապետության մասնագիտացված խնայողական բանկի վերակազմավորման մասին»¹²¹ որոշումը, ՀՀ ԳԽ-ի նախագահության 1995թ. փետրվարի 10-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշումը¹²², նույն թվականի հունիսի 28-ին ընդունած «Գրավի մասին» օրենքը¹²³, 1996թ. հունիսի 10-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Բանկերի սնանկացման մասին»¹²⁴, հունիսի 12-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվետվության մասին»¹²⁵ օրենքները: Նույն՝ 1996թ. հունիսի 30-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվեցին «Բանկերի և բանկային գործունեության մասին»¹²⁶ և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»¹²⁷ տակավին 1993 թվականից գործած և կյանքի կատարած սրբագրումների արդյունքում մշակված օրենքների նոր տարբերակները: Հանրապետության բանկային և ընդհանրապես նոր կայացող ֆինանսավարկային համակարգի հետագա ձևավորման առումով չափազանց կարևոր էր նաև հանրապետության խորհրդարանի կողմից 1996թ. հոկտեմբերի 7-ին ընդունված «Բանկային գաղտնիքի մասին» օրենքը¹²⁸ և այլն: Բանկերի և բանկային գործունեության կարգավորումը հանրապետությունում, բնականաբար, իրականացվում է նաև ՀՀ ԱԺ 1998 թվականին ընդունած քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներով¹²⁹: 2001 թվականին հանրապետու-

¹²⁰ Բանկային գործունեության կանոնակարգում. Հայաստանի Հանրապետության օրենքները.- Ե., 2003թ., էջ 3-453:

¹²¹ ՀԱԱ, ֆ.113, ց.169, գ.430, թ.1-3:

¹²² Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 3-4 (1079-1080), փետրվար 1995թ., էջ 32-45:

¹²³ Նույն տեղում, հ.11-12 (1087-1088), հունիս 1995թ., էջ 37-51:

¹²⁴ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Գիրք Ա., Երևան 1999թ., էջ 350-365:

¹²⁵ Նույն տեղում, էջ 366-367:

¹²⁶ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, հ.12 (1112), 30 հունիսի 1996թ., էջ 28-52:

¹²⁷ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Գիրք Ա., Երևան – 1999թ., էջ 398-422:

¹²⁸ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, հ.19 (1119), 15 հոկտեմբերի 1996թ., էջ 7-12:

¹²⁹ Բանկային գործունեության կանոնակարգում. Հայաստանի Հանրապետության օրենքները.- Ե., 2003թ., էջ 454-518:

թյան բանկային կառուցվածքի հետագա կատարելագործման նպատակով ելնելով տակավին 1996 թվականին ընդունված, արդեն հիշատակված բանկերի սնանկացմանը վերաբերող օրենքի կիրարկման արդյունքում ծագած հիմնական խնդիրների լուծման անհրաժեշտությունից, ՀՀ ԱԺ-ն ընդունեց նոր օրենք «Բանկերի սնանկության մասին»¹³⁰։ Շուկայական տնտեսության ֆինանսական համակարգի կայացման նպատակով չափազանց կարևոր էր բանկերի մասնավորեցման գործընթացը։ Այդ ուղղությամբ ձեռնարկված կարևորագույն քայլերից էին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 1998թ. նոյեմբերին ընդունված «Հայէկոնոմբանկ», «Հայագրոբանկ» և «Զարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերությունների պետական բաժնեմասի վաճառքի միջոցով մասնավորեցնելու վերաբերյալ որոշումը¹³¹։ Հանրապետության շուկայական բնույթի ֆինանսավարկային համակարգի կայացման առումով չափազանց կարևոր էր նաև 2001 թվականին ՀՀ կառավարության ընդունած «Հայինայբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը նոր բաժնետոմսերի փակ տեղաբաշխմամբ մասնավորեցնելու մասին որոշումը¹³² և այլն։

Հանրապետության ֆինանսական շուկայում, բացի ֆինանսավարկային բնույթի գուտ տնտեսական ձեռնարկումներից իրականացվում էին նաև կյանքի հրամայականով թելադրված կառուցվածքային որոշ ձևափոխումներ։ Այդ բնույթի կարևորագույն միոցառումներից էր 1995թ. հուլիսին Երևանում Հայաստանի բանկերի ասոցիացիայի հիմնումը, որի նախագահ ընտրվեց Հայաստանի Հանրապետության տնտեսության և հատկապես ֆինանսավարկային համակարգի կայացման գործում մեծ ավանդ ներդրած նորանկախ Հայաստանի առաջին խորհրդարանի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը¹³³։

Քննարկվող ժամանակահատվածում հանրապետության բանկային համակարգում դրսևորվում էր ոչ միայն կազմակերպական համախմբման երևույթը, այլև շուկայական տնտեսության ֆինանսական ոլորտին հատուկ համակենտրոնացման, ըստ էության, դրական գործընթացը։ Այսպես, եթե տակավին 1994 թվականին հանրապետությունում գործում էին 72 առևտրական բանկեր¹³⁴, ապա 1995 թվականին նրանց թիվը իջավ մինչև 43-ի¹³⁵, 1996-ին՝ 38-ի¹³⁶, իսկ 2001թ. Հունվարի դրությամբ ՀՀ-ում գործում էին 31 բանկեր 192 մասնաճյուղերով, 169 գործառնական գրասենյակներով, որոնց ընդհանուր կապիտալը կազմում էր 33,6 մլրդ դրամ¹³⁷։

1993թ. սեպտեմբերին ՀՀ ԳԽ-ի ընդունած Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, ինչպես նաև արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեության կարգավորման

¹³⁰ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2001թ.), Գիրք Դ., Երևան – 2001 թ., էջ 727-744։

¹³¹ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ.30 (63), 30 նոյեմբերի 1998թ., էջ 77-78։

¹³² Նույն տեղում, հ. 6 (138), 2 մարտի 2001թ., էջ 49-59։

¹³³ Հայաստանի Հանրապետություն, 1 հոկտեմբերի 1995թ.։

¹³⁴ Հայաստանի բանկային համակարգը. Նոյվածներ. ՀՀ բանկային համակարգը և դրամավարկային քաղաքականությունը, - Եր., 2002թ.։

¹³⁵ Հայաստանի Հանրապետություն, 1 հոկտեմբերի 1995թ.։

¹³⁶ Նույն տեղում, 11 ապրիլի 1996թ.։

¹³⁷ Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001թ., էջ 74։

ու վերահսկման դրույթները սահմանող «Արժեթղթերի շրջանառության մասին»¹³⁸ օրենքով ինչպես նաև խնդրո առարկա հիմնահարցին վերբերող, հետագայում ընդունված օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով հիմք դրվեց հանրապետությունում արժեթղթերի շուկայի ձևավորմանը: Արժեթղթերի վեբաբերյալ հետագայում ընդունված իրավական փաստաթղթերի մեջ իր նշանակությամբ հատկապես առանձնանում էր 2000թ. հուլիսի 6-ին հանրապետության խորհրդարանի ընդունած «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին»¹³⁹ բավականին ընդգրկուն օրենքը: Արժեթղթերի շուկայի ձևավորման հետ մեկտեղ և որպես նրա անհրաժեշտ բաղադրատարր հանրապետությունում ձևավորվում էին նաև ֆոնդային բորսաները: 1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործում էին Երևանի Միավորված և Գյումրիի ֆոնդային բորսաները¹⁴⁰: Նույն ժամանակահատվածում հանրապետությունում գործում էր նաև իր կառուցվածքում ֆինանսների ու արժեթղթերի վաճառք իրականացնող «Ադամանդ» ապրանքաֆոնդային բորսան¹⁴¹: Հանրապետությունում արժեթղթերի երկրորդային շուկայի առաջնեկը Երևանի ֆոնդային բորսան ստեղծվել էր տակավին 1993 թվականի սկզբին¹⁴²: Ինչ վերաբերում է ապրանքային բորսաների գործունեությանը, ապա այն ևս կարգավորվում էր որոշակի օրենսդրական դաշտով, որի հիմքը հանդիսացավ 1993 թվականի օգոստոսից գործողության մեջ դրված «Ապրանքային բորսաների մասին» օրենքը¹⁴³:

Խնդրո առարկա ժամանակահատվածում ընդունված մի շարք իրավական փաստաթղթերով հանրապետությունում քայլեր էին ձեռնարկվում նաև ֆինանսական շուկայի կարևորագույն բնագավառների՝ հասարակական կյանքում սոցիալական բացառիկ դերակատարություն ունեցող կենսաթոշակային, ապահովագրական, հարկային համակարգերի կայացման ուղղությամբ և այլն: Այդ ոլորտներում աշխատանքները հանրապետությունում ծավալվել էին տակավին անկախացումից անմիջապես հետո: Այսպես 1992 թվականի հունվարին Հայաստանի Հանրապետության առաջին գումարման խորհրդարանը ընդունել էր «Շահութահարկի մասին»¹⁴⁴, իսկ մարտին էլ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին»¹⁴⁵ օրենքները: Ֆինանսական շուկայի այդ ոլորտների հետագա ծավալումը բնականաբար ուղեկցվում էր իրականության կողմից առաջադրված խնդիրների լուծմանը նպատակամղված նորանոր իրավական բնույթի փաստաթղթերի մշակմամբ և ըն-

¹³⁸ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Երևան, 1995թ., էջ647-657:

¹³⁹ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ.17 (115),1 օգոստոսի 2000թ., էջ 32-120:

¹⁴⁰ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-սեպտեմբերին (տեղեկատվական-վերլուծական ամսական գեկույց), Երևան, 1999թ., էջ 90:

¹⁴¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997 թվականի հունվար-սեպտեմբերին, Երևան, 1997թ., էջ 59:

¹⁴² Հայաստանի Հանրապետություն, 24 փետրվարի 1993թ.:

¹⁴³ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 15-16 (1043-1044), օգոստոս 1993թ., էջ 65-76:հ. 15-16 (1043-1044), օգոստոս 1993թ., էջ 65-76:

¹⁴⁴ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 1-2 (1005-1006), հունվար 1992թ., էջ 4-13:

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 22-43:

դունմամբ: Այսպես նույն 1992 թվականի ապրիլին ընդունվեց «ՀՀ-ում հարկերի և տուրքերի մասին» հիմնարար օրենքը¹⁴⁶, իսկ հոկտեմբերին ընդունված մեկ այլ օրենքով կապված գների սղաճի հետ հանրապետությունում բյուջետային հիմնարկներում վճարվող աշխատավարձի հետ միասին պարբերաբար իրականացվում էր նաև կենսաթոշակների, նպաստների ինդեքսացիա¹⁴⁷: Ապահովագրական ոլորտի ձևավորմանը մեծպես նպաստեց 1996 թվականին ՀՀ ԱԺ ընդունած «Ապահովագրության մասին» օրենքը¹⁴⁸, որը արդեն կուտակված փորձի հաշվառմամբ քննարկվող ժամանակահատվածում կարգավորում էր ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակից զուրկ հիմնարկ-ձեռնարկությունների և ապահովագրական կազմակերպությունների միջև ապահովագրության գործընթացներում առաջացող հարաբերությունները և սահմանում էր ապահովագրական գործունեության սկզբունքները:

Շուկայական տնտեսության պայմաններում հանրապետության բյուջեի համալրմանը, ինչպես նաև երկրում մասնավոր ոլորտի հետագա կայացմանը միտված հարկային քաղաքականության բնագավառում արդեն հիշատակված իրավական ակտերից բացի քննարկվող ժամանակահատվածում, ընդունվել էին եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի, ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, պարզեցված հարկի, ինչպես նաև շահութահարկը և ավելացված արժեքի հարկը փոխարինող հաստատագրված վճարների մասին օրենքները և այլն: Հարկային բնագավառի ձևավորմանը միտված վարչական բնույթի առաջին կարևորագույն միջոցառումներից էր Հայաստանի Հանրապետության նախագահի 1992թ. հունվարի 4-ի հրամանագրով ստեղծված ՀՀ մաքսային վարչությունը¹⁴⁹: Հանրապետության նախարարների խորհրդի նույն թվականի հունվարի 30-ի որոշմամբ ի կատարումն նախագահի հիշատակված հրամանագրի, մինչև ՀՀ մաքսային օրենսգրքի ընդունումը, հաստատվեց Մաքսային վարչության կանոնադրությունը, սահմանվեց մաքսային կենտրոնական ապարատի կառուցվածքը և այլն: Այդ փաստաթղթով լուծարվեց դեռևս խորհրդային շրջանից պահպանված հանրապետության գլխավոր օդակայանում տեղակայված հանրապետական մաքսատունը: Նրա հիման վրա կազմավորվեց ՀՀ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի մաքսատունը: Փաստորեն այդ ժամանակահատվածում ՀՀ Մաքսային վարչության իրավասության տակ գործում էին նորանկախ Հայաստանի ինքնիշխանությունը հավաստող մայրաքաղաքի «Զվարթնոց» և Գյումրիի օդանավակայանների մաքսատուները¹⁵⁰: Հանրապետության կառավարության 1992թ. մարտի 2-ի որոշման համաձայն հանրապետությունում գործում էին Երևանի «Զվարթնոց» և «Էրեբունի» օդանավակայանների, ինչպես նաև Բավրայի, Գոգարանի, Բագրատաշենի և Այրումի ժամանակավոր մաքսային կետերը¹⁵¹: Հե-

¹⁴⁶ Նույն տեղում, հ. 8 (1012), 30 ապրիլի 1992թ., էջ 3-11:

¹⁴⁷ Նույն տեղում, հ. 20 (1024), 31 հոկտեմբերի 1992թ., էջ 13-14:

¹⁴⁸ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, հ.23-24 (1123-1124), դեկտեմբեր 1996թ., էջ 3-14:

¹⁴⁹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պաշտոնական տեղեկագիր, հ. 1-2 (1005-1006), հունվար 1992թ., էջ 27-28:

¹⁵⁰ ՀԱԱ, ֆ.113, ց.167, գ.68, թ.1-3:

¹⁵¹ Նույն տեղում, գ. 134, թ. 1-2:

տագայում առաջիններից մեկը Հայաստանի մաքսային վարչության սահմանային մաքսատուն ձևավորվեց Իրանի Իսլամական Հանրապետությանը սահմանակից Մեդրիում, որի մասին երկկողմ համաձայնագիրը ստորագրվել էր տակավին 1992թ. մայիսին¹⁵²: Հենց նույն ամսին էլ Արաքսի ժամանակավոր կամրջի բացմամբ սկսեց գործել նաև մաքսատունը¹⁵³: Այդ շրջանում մի կարճ ժամանակով գործեց նաև Գյումրի-Կարս երկաթուղային հաղորդակցությունը սպասարկող մաքսատունը:

ՀՀ հարկային համակարգը իր բոլոր բացթողումներով ու չարաշահումներով հանդերձ, որպես թերևս ֆինանսավարկային բնագավառում համեմատաբար կայացած ոլորտներից մեկը հենվում էր գործունեության բավականին ձևավորված իրավական դաշտի վրա: Նորանկախ Հայաստանի ազատականացված տնտեսության հիմնասյուներից մեկի՝ հարկային համակարգի ձևավորմանը միտված տակավին 1992 թվականին ընդունված առաջին իրավական փաստաթղթի շահութահարկին վերաբերող, արդեն հիշատակված, օրենքի ընդունումից հետո մինչև 2001 թվականը ներառյալ ամենաընդհանուր հաշվարկներով հանրապետությունում ընդունվել էին ուղղակիորեն բնագավառին վերաբերող մոտ 50 կարևորագույն օրենքներ, որոշումներ ու հրամանագրեր¹⁵⁴: ՀՀ իշխանություն-

¹⁵² Հայաստանի Հանրապետություն, 9 մայիսի 1992թ.;

¹⁵³ Նույն տեղում, 8 մայիսի 1992թ.:

¹⁵⁴ ՀՀ-ում հարկային հարաբերությունների ամենատարբեր բնագավառները կարգավորող հիմնական իրավական փաստաթղթերից էին «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 8 (1012), 30 ապրիլի 1992թ., էջ 3-11, «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Երևան, 1995թ., էջ 523-530, «Մաքսային սակագնի մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 14 (1042), 31 հուլիսի 1993թ., էջ 4-10, «Եկամտահարկի հաստատագրված վճարումներ, ինչպես նաև եկամտահարկի ու շահութահարկի հաստատագրված վճարումներով հարկվող տնտեսական գործունեության առանձին տեսակների համար հարկային արտոնություններ սահմանելու մասին» օրենքը, նույն տեղում, հ.11 (1063), 15 հունիսի 1994թ., էջ 11, «Շահութահարկի մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, նույն տեղում, հ.11 (1063), 15 հունիսի 1994թ., էջ 19-23, «Ալկոհոլիկ հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը, նույն տեղում, հ.22 (1074), 30 նոյեմբերի 1994թ., էջ 2, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, նույն տեղում, հ.23-24 (1075-1076), դեկտեմբեր 1994թ., էջ 3-5, «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, նույն տեղում, հ.23-24 (1075-1076), դեկտեմբեր 1994թ., էջ 6-9, «Գույքահարկի մասին» օրենքը, նույն տեղում, հ.3-4 (1079-1080), փետրվար 1995թ., էջ 3-7, «Եկամտահարկի մասին» օրենքը, նույն տեղում, հ.3-4 (1079-1080), փետրվար 1995թ., էջ 7-23, «Պետական տուրքի մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, հ.13 -14 (1113-1114), հուլիս 1996թ., էջ 15-33, «Հարկերի մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №11, 20 մայիսի 1997թ., էջ 3-13, «Մաքսատուրքի դրույքաչափի մասին» օրենքը, նույն տեղում, № 11, 20 մայիսի 1997թ., էջ 14-20, «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքը, նույն տեղում, № 14, 21 հունիսի 1997թ., էջ 39-58, «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների սահմանման վերաբերյալ օրենքի ուժ ունեցող որոշում ընդունելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը լիազորելու մասին» ՀՀ ԳԽ որոշումը, նույն տեղում, № 14, 21 հունիսի 1997թ., էջ 66, «Հայաստանի Հանրապետությունը ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման մասին», ՀՀ կառավարության որոշումը, նույն տեղում, № 14, 21 հունիսի 1997թ., էջ 113-120, «Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարումներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, նույն տեղում, №14, 21 հունիսի 1997թ., էջ 151-156, «Ալկոհոլիկ հարկի

ների կողմից հարկային ոլորտում արդեն ընդունված իրավական փաստաթղթերի շարքը ավելացնելով և միաժամանակ միայն 2001 թվականի ընթացքում դրանցում կատարված լրացումների ու փոփոխությունների ծավալը ներկայացնելու առումով նշենք, որ այդ տարի հարկային իրավունքի իրավական դաշտում գործող օրենքներում և որոշումներում փոփոխություններ կատարելու նպատակով ընդունվել էին երկու տասնյակից ավելի իրավական ակտեր: Դրանցից էին՝ ՀՀ ԱԺ-ի ընդունած «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»¹⁵⁵, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»¹⁵⁶, «Շահութահարկի մասին», ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, օրենքները¹⁵⁷, ինչպես նաև հողահարկը, հաստատագրված վճարները, պարզեցված հարկատեսակներինը, եկամտահարկերը, պետական տուրքերը և այլն սահմանող գործող իրավական ակտերում կատարված այլ փոփոխությունները¹⁵⁸:

Հարկային համակարգում իրականացված օրենսդրական և ինստիտուցիոնալ բնույթի միջոցառումների արդյունքում արդեն 2001 թվականի սկզբներին ձևավորվեցին հարկատուների երկու հիմնական խոշոր խմբեր՝ պարզեցված ու հաստատագրված հարկ վճարողներ և կոնկրետ ժամանակահատվածում ունեցած եկամուտներից համապատասխան չափի հարկատուներ կամ ավելի պարզ շահութահարկ վճարողներ, որը հարկային բարդ համակարգի կարգավորման առումով դրական երևույթ էր:

Այսպիսով փորձելով եզրափակել ամփոփումը, կարող ենք արձանագրել, որ խնդրո առարկա ժամանակահատվածում էական վերափոխումներ իրականացվեցին Հայաստանի Հանրապետության տնտեսության սոցիալական բնագավառին անմիջականորեն վերաբերող ֆինանսավարկային համակարգի մի մեծ խումբ կարևորագույն ոլորտներում, որոք ճիշտ է, որոշ օբյեկտիվ, իսկ ավելի հաճախ սուբյեկտիվ դրդապատճառներով մի շարք դեպքերում ոչ միայն չնպաստեցին անկախացմանը անմիջականորեն հաջորդած ժամանակահատվածում

մասին» օրենքը, նույն տեղում, №15, 27 հունիսի 1997թ., էջ 33-37, «Շահութահարկի մասին» օրենքը նույն տեղում, № 27, 3 դեկտեմբերի 1997թ., էջ 3-30, «Եկամտահարկի մասին» օրենքը, նույն տեղում, № 33, 31 դեկտեմբերի 1997թ., էջ 20-39, «Պետական տուրքի մասին» օրենքը, նույն տեղում, № 1, 11 հունվարի 1998թ., էջ 36-79, «Գույքահարկի մասին» օրենքը, նույն տեղում, № 2, 31 հունվարի 1998թ., էջ 6-24, «Հաստատագրված վճարումների մասին» օրենքը, նույն տեղում, № 15 (48), 27 հուլիսի 1998թ., էջ 30-48, «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքի (ինչպես նաև դրանց փոխարինող հաստատագրված վճարների և բնապահպանական վճարի կարգի մասին» ՀՀ կառավարության որոշումը, նույն տեղում, № 10(76), 30 ապրիլի 1999թ., էջ 42, «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք», նույն տեղում, №19(117), 21 օգոստոսի 2000թ., էջ 3-106, «Հողի հարկի արտոնությունների մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2001թ.), գիրք Դ, Երևան 2001թ., էջ 95-96, «Կազմակերպությունների և անհատ ձեռներեցների կողմից ներմուծվող մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հիշատակվում և գանձվում», նույն տեղում, էջ 394-405:

¹⁵⁵ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2001թ.), գիրք Դ, Երևան, 2001թ., էջ 1029:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 885:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 1046-1047:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 883-884, 915, 917-921, 927, 936, 947, 966, 1008-1009, 1021-1025, 1028, 1032-1042, 1043-1044, 1048-1049, 1050-1053:

հանրապետությունում ստեղծված ծանրագույն սոցիալական կացության բարելավմանը, այլև նույնիսկ էլ ավելի բարդացրեցին վիճակը, բայց այնուամենայնիվ, պատմական ավելի մեծ հեռանկարի առումով, դրանք արմատավորելով և ամրապնդելով հանրապետությունում շուկայական տնտեսաձևը ունեցան էական դերակատարություն տնտեսական հետագա առաջընթացի համար, իսկ քաղաքական առումով անշուշտ, նպաստեցին նորանկախ Հայաստանի ինքնիշխանության ծավալմանն ու ամրապնդմանը:

Эдуард Погосян – Преобразования в сферах непосредственно касающихся социальному положению населения Армении. (1990-2001 гг). – В статье показано, что за указанное время в Армении были предприняты определенные шаги, в частности, для становления финансово-кредитной системы республики. В Армении укоренилось рыночное свободное ценообразование товаров и услуг, была внедрена национальная валюта, в основном, состоялась банковская система страны. В независимой Армении были предприняты первые шаги по созданию рынка ценных бумаг а так же фондовых и товарных бирж. В республике началось формирование и такой, непосредственно влияющей на социальное положение общества, отрасли финансово-кредитной сферы как налоговая система и т.д. В статье показано что, за выше упомянутое время, в непосредственно касающихся разных отраслях финансово-кредитной системы были проведены коренные изменения которые способствовали укреплению рыночных отношений. В статье так же показано, что вместе с положительными результатами в следствии преобразований, в силу определенных объективных и субъективных факторов, наблюдалось значительное ухудшение общего социального положения в республике.

Eduard Poghossian – Changes in the Fields Directly Concerning the Social Condition of the Population in Armenia (1990 to 2001). – During the period specified, certain measures were taken in Armenia particularly for the establishment of a financial credit system in the republic. Free market price formation of goods and services was firmly established in Armenia; the national currency was introduced, and the banking system of the country was almost entirely formed. Independent Armenia took the first steps towards the creation of a market of securities, as well as stock and commodity exchanges. The period specified was also marked with the formation of a branch of the financial credit system which directly affected the social condition of the society, namely the tax system, etc. The article shows that during the aforementioned period, the different branches of the financial credit system, directly concerning the social condition of the population, underwent fundamental changes which contributed to the strengthening of market relations. The article also indicates that apart from positive results, these changes led to considerable worsening of the general social condition in the republic due to certain objective and subjective factors.

ՌԱՇԻԴ ԱՂ-ՂԻՆԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍՈՁՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՔՈՒՐՈՇ ՍԱԼԱՐԻ

Իրանցի նշանավոր պատմիչ Ռաշիդ աղ-ղին Ֆազլալլահը եղել է 13-14-րդ դարերում Իրանում գոյություն ունեցած մոնղոլական իլխանյան պետության ականավոր պետական գործիչներից մեկը: Մասնագիտությամբ բժիշկ Ռաշիդ աղ-ղինը Ղազան իլխանի (1295-1304) օրոք նշանակվել է վեզիր և գործուն մասնակցություն է ունեցել պետության մեջ բարեփոխումների իրականացմանը, կենտրոնախույս ուժերի դեմ պայքարին, հարկերի չափավորման քաղաքականության իրականացմանը: Այդ ամենը չի խանգարել, որ նա օգտագործի իր պաշտոնը՝ անձնական հարստացման նպատակով: Տարիների ընթացքում Ռաշիդ աղ-ղինը յուրացրել էր մեծ թվով կալվածքներ և դարձել պետության խոշոր հողատերերից մեկը:

Ռաշիդ աղ-ղինը իր քաղաքական գործունեության ընթացքում, որ տևեց ավելի քան 20 տարի, բազմաթիվ վերելքներ և վայրէջքներ, մրցակիցներ և համախոհներ է ունեցել: Այն փաստը, որ նա երկար տարիներ ղեկավարել է պետական գրասենյակի՝ դիվանի գործերը, այն էլ մոնղոլների ժամանակաշրջանում, պետք է ըստ արժանվույն գնահատել: Ռաշիդ աղ-ղինի առաջին անախորժությունները սկսվել են դեռևս Ղազան իսանի օրոք, երբ լուրջ պայքար էր գնում իշխանական լծակներին տիրելու համար, բայց նրա հակառակորդների ջանքերը ապարդյուն են անցել¹⁵⁹: Ավելին, Ռաշիդ աղ-ղինը Օլջայթու իլխանի (1304-1317) օրոք ստանձնելով վեզիրի պաշտոնը՝ Սաադ աղ-ղին Սավեջիի հետ միասին ղեկավարում էր դիվանը: Սակայն պարզ էր, որ քաղաքական հայացքների ու կառավարման մեթոդների տարբերությունները, դավանական հակառակ ուղղություններին պատկանելը, ազդեցության համար պայքարը և անձնական մրցակցությունը տարաձայնություններ պետք է հարուցեին: Նրանց միջև սկիզբ առած հակամարտությունը ի վերջո ավարտվեց Ռաշիդ աղ-ղինի հաղթանակով, Սաադ աղ-ղինը Բաղդադում մահապատժի դատապարտվեց, ինչից հետո էլ Ռաշիդ աղ-ղինը հսկայական ազդեցություն ձեռք բերեց¹⁶⁰:

Ռաշիդ աղ-ղինի վեզիրության տարիներին կրոնական հարցերը պետական կարևորություն էին ձեռք բերել: Ղազան իսանը ընդունելով իսլամ՝ այն հռչակել էր պետական կրոն, ամրապնդվել էին մոնղոլական քոչվոր ցեղերի կապերը նստակյաց երկրագործական մշակույթի կրող իրանցիների հետ, հետևաբար բարձր դիրք ու պաշտոն զբաղեցնելու համար իսլամ դավանելը իլխանությունում վճռորոշ նախապայման էր դարձել:

Ռաշիդ աղ-ղինի հակառակորդները, տարբեր պատրվակներով, նրան հրեա են անվանել՝ ջանալով ամեն կերպ ապացուցել նրա կեղծ մուսուլման լինե-

¹⁵⁹ Վասաֆե Ալ Հազերե, Թարիխ-է Վասաֆ, Թեհրան, 1328/1949, էջ 419:

¹⁶⁰ Հաֆեզ Աբբու, Ջեյլե Ջամա' ալ-Թավարիխ, Թեհրան, 1350/1971, էջ 95, 98:

լը և այդպիսով թուլացնել նրա դիրքերը իլիսանական արքունիքում: Ուստի պատահական չէ, որ Ռաշիդ ադ-դինի կրոնական համոզմունքների խնդիրը շարունակում է գիտնականների շրջանում բուռն քննարկումներ հարուցել: Այսպիսով, Ռաշիդ ադ-դինի էթնիկական արմատների և կրոնական համոզմունքների խնդիրները սերտորեն կապակցված են ու համատեղ քննարկման պահանջ են առաջադրում:

Ռաշիդ ադ-դինին հրեա անվանող հեղինակների շարքում առաջին հերթին հարկ է նշել Մոհամմադ իբն Ալի Շաբանքարեին, որն իր «Մաջմա ալ-Անսաբ» գրքում պատմում է նշանավոր պետական գործչի անցած ուղու մասին: Ըստ նրա, Ռաշիդ ադ-դինը իլխանի սիրտն ու ականջն էր, որը իսլամ էր ընդունել և դարձել նշանավոր վեզիր¹⁶¹: Արաբ հեղինակները նույնպես, որ հեռու են գտնվել իլխանության կենտրոնից, իրենց աշխատություններում նշել են Ռաշիդ ադ-դինի հրեական ծագման մասին: Բադր ադ-դին իբն Աբի Մոհամմադ իբն Ահմադ Ալայ-նի Ալ-Հանաֆին հաղորդում է, որ Ռաշիդ ադ-դինը Համադանում ապրող հրեա է եղել և մահմեդական է դարձել երիտասարդ տարիքում¹⁶²: Ըստ Իբն Քասիրի, Ռաշիդ ադ-դինը ծագումով հրեա էր, մասնագիտությամբ՝ բժիշկ և պետական ծառայության մեջ մտնելով՝ մեծամեծ հաջողությունների էր հասել: Բացի կարևորագույն պաշտոններ վարելուց, նա զբաղվում էր նաև Ղուրանի մեկնաբանությամբ և դարձել էր շատ գրքերի հեղինակ¹⁶³: Աբդալլահի իբն Օմադ Ալ-Հանբալին գրում է, որ Ֆազլալլահի հայրը հրեա բժիշկ էր, իսկ որդին զբաղվել է փիլիսոփայությամբ, ընդունել իսլամը և սովորել Ղազան խանի հիմնած համալսարանում¹⁶⁴: Իբն Բաթուրան իր ճանապարհորդական նոթերում նշում է, որ այդ ժամանակվա իլխանության վեզիր Դիաս ադ-դին Մոհամմադ իբն Ռաշիդի հայրը՝ այսինքն՝ Ռաշիդ ադ-դինը, հրեա գաղթականներից էր¹⁶⁵: «Օլջայթուի պատմություն» գրքի հեղինակ Աբդոլլահ Քաշանին նույնիսկ պնդում է, որ Ռաշիդ ադ-դինին և նրա որդիներին սպանել են հրեական ծագում ունենալու պատճառով¹⁶⁶:

Ակնհայտ է, որ Ռաշիդ ադ-դինի հրեական ծագումը զանազան շահարկումների հիմք է դարձել: Այսպես, Ռաշիդ ադ-դինի քաղաքական հակառակորդները ցանկացել են Թաջ ադ-դին Ալիշահ Գիլանիի մահապատիժը բացատրել նրա հակառակորդ Ռաշիդ ադ-դինի հրեա լինելու փաստով: Բայց պետք է նշել, որ Թաջ ադ-դինի մահապատիժը, իսկ նա համարվում էր Ռաշիդ ադ-դինի ոխերիմ թշնամի Սաադ ադ-դին Սավեջիի մերձավորներից մեկը, քաղաքական սպանություն էր և ոչ մի կապ չունեւր Ռաշիդ ադ-դինի էթնիկական կամ կրոնական պատկանելության հետ:

«Զեյլե Զամա' ալ-Թավարիխ-ե Ռաշիդի» գրքի հեղինակ Հաֆեզ Աբդուն, անդրադառանալով 1318 թվականի իրադարձություններին, նշում է, որ այդ տարում սպանվեց մոնղոլական տերության վեզիր Ռաշիդ ադ-դին Ֆազլալլահ իբն Ալխեյր Ալի Համեդանին: Պատմիչի հաղորդումների համաձայն, Ռաշիդ ադ-դինը

¹⁶¹ *Մոհամմադ իբն Ալի Շաբանքարեի*, Մաջմա ալ-Անսաբ, Թեհրան, 1363/1985, էջ 270:

¹⁶² *Ազալի. Աբբաս*, Իրաքի պատմություն, Բադդադ, 1353/1974, էջ 455:

¹⁶³ *Իբն Քասիր*, Ալ-Բադայիե վա ալ-Նահայիե, Բեյրութ, 1966, էջ 87:

¹⁶⁴ *Աբդալլահի իբն Օմադ Ալ-Հանբալի*, Շեզարաթ ալ-Ջահաթ, Կահիրե, 1973, էջ 59:

¹⁶⁵ *Իբն Բատտուտա*, Սաֆարնամե, Թեհրան, 1959, էջ 278:

¹⁶⁶ *Քաշանի*, Աբուլասեմ, Թարիխե Օլջայթու, Թեհրան, 1348/1979, էջ 96:

հրեա բժիշկ էր և կարճ ժամանակահատվածում այնպիսի հռչակ էր ձեռք բերել, որ բոլոր վեզիրներն ու ամիրները գործում էին նրա հրամաններով¹⁶⁷:

Իրանցի միջնադարյան նշանավոր գրող Օբայդ Ջաքանին, իր ստեղծագործություններից մեկում անդրադառնալով Ռաշիդ ադ-դինի կրոնական աշխարհայացքին, նշում է, որ նա Մովսեսի և Հարունի ժառանգերից է:

Հակառակ վերոնշյալ դիրքորոշմանը, որ շատ մահմեդական հեղինակներ իրենց աշխատություններում հիշատակել են Ֆազլալլահի՝ մուսուլման լինելու փաստը և գովաբանել նրա կրոնական համոզմունքները: Հոսեյնի Մուսավի Ռազավի Թաբաթաբային հակված է դարերի խորքը տանելու Ռաշիդ ադ-դինի կրոնափոխության եղելությունը: Ըստ նրա, Ռաշիդ ադ-դինի նախնիներին ապահովություն է շնորհել դեռևս Մուհամեդ մարգարեն, իսկ հետագայում այդ հրեական ընտանիքի անդամները Մուհամեդի փեսա Ալիի հովանավորությամբ իսլամ են ընդունել: Միևնույն հեղինակի վկայությամբ, իլխանության մեծ վեզիրը աչքի էր ընկնում մշակութային եռանդուն գործունեությամբ: Այսպես, Ռաշիդ ադ-դինի 52 հաստորանոց աշխատությունների ժողովածուն որպես դասագիրք օգտագործվում էր դպրոցներում: Ռաշիդ ադ-դինը որոշակի, նույնիսկ ընդգծված հետաքրքրություն է դրսևորել կրոնական հարցերի նկատմամբ: Այսպես, նա թարգմանել է Թորաթը և բազմիցս հերքել իր հրեա լինելու հանգամանքը¹⁶⁸:

Մեկ այլ իրանցի հեղինակ Քարբալային գրում է, որ Ռաշիդ ադ-դինը այն գիտնականներից էր, որ մեծ ակնածանք էին տածում իսլամի նկատմամբ: Ըստ հեղինակի, Ռաշիդ ադ-դինը լավ հարաբերություններ է ունեցել և նույնիսկ նամակագրական կապի մեջ էր բարձրաստիճան մուսուլման հոգևորականության հետ և շատերին նվերներ պարգևել: Հեղինակը նշում է, որ Ռաշիդ ադ-դինը իր բոլոր աշխատություններում անդրադարձել է հավատքի կարևորության խնդրին¹⁶⁹: Աղսարային, որը խիստ բացասաբար էր տրամադրված ծագումով հրեա վեզիր Սաադ ադ-Դոուլեի նկատմամբ, դրվատանքով է խոսում Ֆազլալլահի մասին: Նրա բնութագրմամբ, Ռաշիդ ադ-դինը ամենագոր պաշտոնյա էր և չափազանց խելացի անձնավորություն, բայց վեզիրի հակառակորդները անվերջ վատաբանելով՝ փորձում էին հեղինակագրկել նրան, ինչի արդյունքում էլ նա պաշտոնանկ է արվում և սպանվում¹⁷⁰:

Ռաշիդ ադ-դինի թշնամիները և քաղաքական հակառակորդները անընդհատ խոսում էին նրա կեղծ մուսուլման լինելու մասին՝ ցանկանալով հեղինակագրկել վերջինիս հասարակության աչքում: Չարախոսների թվում էին վեզիրի թշնամի Սաադ ադ-դին Սավեջին և իր կողմնակիցները: «Օլջայթուի պատմություն» գրքի հեղինակը վկայում է, որ, երկու պաշտոնյաների միջև հակասությունների առաջացման օրվանից ի վեր, Սաադ ադ-դինը նպատակալաց գործունեություն ծավալեց: Ատելությունից ու գալրությանից դրդված՝ նա Ռաշիդ ադ-դինին սկսեց հրեա անվանել: Սաադ ադ-դինի ցուցումով, նրա կողմնակիցները բոլոր վայրերում բարձրաձայնում էին Ռաշիդ ադ-դինի կեղծ մուսուլման լինելու մասին: Նման մարդկանց թվին էր պատկանում ժամանակի ականավոր հոգևորա-

¹⁶⁷ *Հաֆեզ Աբուլ*, նշվ. աշխ., էջ 80 :

¹⁶⁸ *Հոսեյնի Մուսավի Ռազավի Թաբաթաբայի*, Օլադե Աթհար, Թավրիզ, n. d., էջ 125:

¹⁶⁹ *Քարբալայի*, Ռուզաթ ալ-Ջենան վա Ջենանաթ ալ-Ջենան, Թեհրան, 1341/1962, էջ 278:

¹⁷⁰ *Աղսարայի*, Թարիխ-ե Սալաջեդե, Անկարա, 1942, էջ 314:

կան Ղոթթ ադ-դին Շիրազին: Վերջինս օգտվում էր Սաադ ադ-դինի բարեհաճությունից և նույնիսկ նրան նվիրված գիրք էր գրել: Ղոթթ ադ-դին Շիրազին ոչ մի հնարավորություն ձեռքից բաց չէր թողնում՝ ընդգծելու համար Ռաշիդ ադ-դինի հրեա լինելը¹⁷¹: Ղոթթ ադ-դին Շիրազիի ատելությունը Ռաշիդ ադ-դինի նկատմամբ այն աստիճանի էր հասել, որ նա չէր վարանում բացահայտ կեղծիքի և զրբպարտության դիմել: Այսպես, երբ Ռաշիդ ադ-դինը Ղուրանի որոշ հատվածների մեկնություններ էր գրում, Ղոթթ ադ-դին Շիրազին հայտարարում էր, որ դրանք մեջբերված են Աստվածաշնչից¹⁷²:

Հարկ է նշել, որ Սաադ ադ-դինի և Ռաշիդ ադ-դինի միջև քաղաքական տարաձայնությունները պայմանավորված էին նաև երկու մրցակից գործիչների դավանական պատկանելությամբ: Սաադ ադ-դինը շիա էր, իսկ Ռաշիդ ադ-դինը՝ սուննի: Այս մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում հատկապես Հաֆեզ Աբուլն¹⁷³: Նրա դիտարկումների համաձայն, Սաադ ադ-դին - Ռաշիդ ադ-դին հակամարտությունը նախ և առաջ կապված էր կրոնական խնդիրների հետ: Իլ-խանյան արքունիքում Սաադ ադ-դինի հովանավորությամբ շիական տարրի օրեցօր աճող ազդեցության պայմաններում Ռաշիդ ադ-դինի դիրքերը բավականաչափ թույլ էին, և այդ շրջանում նա իրեն հեռու էր պահում դիվանի գործերին ակտիվորեն միջամտելուց: Սակայն Սաադ ադ-դինին ներկայացված մեղադրանքների հաստատումից և մահապատժից հետո Ռաշիդ ադ-դինի հեղինակությունը և ազդեցությունը բարձրացավ:

Ռաշիդ ադ-դինի թշնամիներից «Օլջայթուի պատմություն» գրքի հեղինակ Քաշանին ևս խիստ կողմնակալ վերաբերմունք է դրսևորում վեզիրի դավանական կողմնորոշման հարցում: Նա նշում է, որ Ռաշիդ ադ-դինը պատկանում էր սուննի մահմեդականության չորս մազհաբներից (ուղղություններից) շաֆիիների հոսանքին, սակայն իրականում հարում էր հուղայականությանը¹⁷⁴: Քաշանին նույնիսկ վեզիրին անվանում է «Ռաշիդ ադ-դուլե» և ոչ թե «Ռաշիդ ադ-դին»¹⁷⁵, որով ավելի էր ընդգծվում վեզիրի հրեական ծագումը:

Հարկ է նշել, որ Ռաշիդ ադ-դինի հակառակորդները նրա հրեական ծագումը հաստատելու համար անընդհատ հիշեցում էին վեզիրի՝ «Ռաշիդ ադ-դուլե», նրա հոր՝ «Օմադ ադ-դուլե», հորեղբոր՝ «Ամին ադ-դուլե» և պապի՝ «Մովաֆադ ադ-դուլե» կոչվելու փաստերը: Հրեաները մոնղոլական դարաշրջանում պետական գրասենյակի դիվանի աշխատակիցներ են եղել և ջանացել են «դուլե» մականունը ունենալ, քանի որ «դին» (կրոն) անվանումը ոչ մուսուլմանը ունենալ չէր կարող: «Դուլե» անվանումով հայտնի հրեաներից կարելի է հիշատակել իլխանության վեզիր Սաադ ադ-դուլեին և նրա եղբայրներին, Տախր ադ-դուլեին՝ Բադդադի կառավարչին և Շամս ադ-դուլեին՝ Շիրազի տիրակալին, Նաջիբ ադ-դուլեին՝ Ռաշիդ ադ-դինի ժամանակակցին: Մեկ այլ հրեայի՝ Ռաշիդ ադ-դուլեին հանձնված էր իլխանական խոհանոցի ղեկավարումը: Պատմվում է նաև Ռաշիդ ադ-դուլե անունով հրեայի մասին, որն իր ընդունակությունների շնորհիվ մեծ հաջողությունների էր հասել և զբաղված էր Գեյխաթուի իլխանի (1291-1295)

¹⁷¹ *Հաֆեզ Աբուլն*, նշվ. աշխ., էջ 65:

¹⁷² *Հաբալի*, Մեյֆ Մոհամմադ իբն Յադուբ, Հերաթի ժամանակագրություն, Կալկաթա, 1934, էջ 27:

¹⁷³ *Հաֆեզ Աբուլն*, նշվ. աշխ., էջ 69:

¹⁷⁴ *Քաշանի*, Աբուլդասեմ, նշվ. աշխ., էջ 96:

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 8, 28, 44, 70, 73, 74, 76, 120, 122:

պալատի կարիքները բավարարելով¹⁷⁶: Հրեաներից բացի, «դոուլե» կարող էին անվանվել նաև քրիստոնյաները: Այսպես օրինակ, հենց Ռաշիդ ադ-դինի «Ջամա' ալ-Թավարիխ» (Տարեգրությունների ժողովածու) աշխատությունում պատմվում է իլխան Գեյխաթուի առողջական վիճակի վատթարացման մասին, և թե ինչպես հայտնի բժիշկներ Ռաբիբ ադ- դոուլեն և Սաֆի ադ-դոուլեն, որ բարեպաշտ քրիստոնյաներ էին, օգնեցին նրան ապաքինվել¹⁷⁷:

Արդի պատմագիտության մեջ ընդունված է, որ «դոուլե» անվանումը կրելը մոնղոլական ժամանակաշրջանում հատուկ է եղել միայն ամիրաներին և տերության տարբեր շրջանների տիրակալներին¹⁷⁸: Ավելի վաղ ժամանակներում «դոուլե» են կոչվել թուրք ամիրաները՝ Հեսամ ադ-դոուլե, Մեյֆ ադ-դոուլե, Յադին ադ-դոուլե, Շամս ադ-դոուլե և այլն¹⁷⁹:

Միջնադարյան Իրանի պատմության մեջ առաջին վեզիրը, որի պատվանունը կրոնական երանգավորում էր կրում, Նեզամ ալ-Մուլքն էր: Նրան շնորհվել էր Ղավամ ադ-դին անվանումը: Այսօրինակ պատվանունները խորհրդանշական բնույթ ունեին և տրվում էին թագավորին, վեզիրին, հոգևորականին և ամիրային, որը պայքարում էր իսլամի հաղթանակի համար: Հնարավոր է, որ Ռաշիդ ադ-դինը հրեադավան եղած ժամանակ կոչվել է «ադ- դոուլե», իսկ իսլամը ընդունելուց հետո նրան շնորհվել է «Ռաշիդ ադ-դին» պատվանունը: Հետևաբար, պատահական չէ, որ նրա կողմնակիցները վեզիրին կարող էին անվանել «Ռաշիդ ադ-դին» կամ «Ռաշիդ ադ դոուլե վա ադ-դին»¹⁸⁰: Եթե Ռաշիդ ադ-դինի յուրայինները և հավատարիմները ձգտել են ընդգծել նրա «ադ-դին» պատվանունը, ապա հակառակորդներն ու թշնամիները շեշտը դրել են «ադ-դոուլե» բաղադրիչի լրացուցիչ իմաստի վրա՝ հակակրանք ու կասկածամտություն առաջ բերելու հրեական արմատներ ունեցող վեզիրի նկատմամբ:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ իսլամ ընդունելուց հետո Ռաշիդ ադ-դոուլեն չէր կարող այլ կերպ կոչվել, քան Ռաշիդ ադ-դին Տազլալահ, չնայած որ առանձին միջնադարյան հեղինակներ շարունակել են վեզիրին «ադ-դոուլե» անվանել: Այսպիսի դեպքերում պատմիչների միտումնավոր վերաբերմունքը ավելի քան ակնհայտ է և բացատրվում է քաղաքական բնույթ ունեցող հակակրանքով: Օրինակ, Քաշանին եղել է Սաադ ադ-դին Մավեջիի մտերիմներից մեկը, իսկ վերջինիս մահից հետո սերտ հարաբերություններ է հաստատել Ռաշիդ ադ-դինի հակառակորդներից Թաջ ադ-դին Ալի շահ Գիլանիի հետ: Այսպիսով, պատմիչը պատկանել է Ռաշիդ ադ-դինի թշնամիների ճամբարին և իր աշխատությունում բոլոր հնարավոր և անհնար միջոցներով ձգտել է անվանարկել Ռաշիդ ադ-դինին: Հեղինակը անդադար նգովել և անիծել է Ռաշիդ ադ-դինին, շեշտելով նրա հրեական ծագումը՝ իր գրքում ամենուր նրան անվանելով Ռաշիդ ադ-դոուլե և ոչ Ռաշիդ ադ-դին¹⁸¹: Քաշանիի կերպարը ամբողջացնելու նպատակով պետք է նշել, որ նա իր մեկ այլ գրքի նախաբանում հանդես է գալիս Ռաշիդ ադ-դինի գերդաստանի սպասավոր, քանի որ այդ ժամանակ վեզիրի դիրքերը իլխանական արքու-

¹⁷⁶ Նույն տեղում:

¹⁷⁷ *Ռաշիդ ադ դին Տազլալահ*, Ջավա' ալ-Թավարիխ, Թեհրան, 1995, էջ 1195:

¹⁷⁸ *Վասաֆե ալ-Հազերե*, նշվ. աշխ., էջ 124:

¹⁷⁹ *Նեզամ օլ-Մուլք*, Սիասաթ-նամե, Թեհրան, 1970, էջ 230:

¹⁸⁰ Նույն տեղում:

¹⁸¹ *Քաշանի*, Աբուլղասեմ, նշվ. աշխ., էջ 8, 28, 44, 70:

նիքում բավականաչափ ամուր էին: Սակայն վեզիրի մահապատժից հետո Քաշանին սկսել է լիովին ազատ զգալ իրեն և զարկ է տվել չարախոսությանը:

Ինչպես նշվեց, Ռաշիդ ադ-դինի հակառակորդներից էր նաև դարաշրջանի նշանավոր հոգևորական Ղոթբ ադ-դին Շիրազին: Երբ նա լսել է Ռաշիդ ադ-դինի՝ Ղուրանը մեկնաբանելու փորձերի մասին, չարախնդալով հայտարարել է, թե ինքն էլ այսուհետև Թորաթը կմեկնի¹⁸²:

Գաղտնիք չէ, որ պետական բարձրագույն պաշտոններ վարող Ռաշիդ ադ-դինը բազմաթիվ թշնամիներ է ունեցել և շարժել է շատերի նախանձն ու ատելությունը: Ռաշիդ ադ-դինը իր որդուն՝ Շիրազի տիրակալ Իբրահիմին ուղղված նամակում, առանց թաքցնելու իրականությունը, խոսում է իր հանդեպ թշնամաբար տրամադրված մարդկանց և քաղաքական հակառակորդների մասին¹⁸³: Վեզիրը հատկապես բողոքում է Հերդադ անունով մի մոնղոլից (վերջինս Օլջայթուի հրամանով հետագայում սպանվել է), որն ամեն կերպ ձգտում էր վարկաբեկել վեզիրին¹⁸⁴:

Ռաշիդ ադ-դինը ձգտել է փարատել իր անձնավորության, կերպարի ու համոզմունքների շուրջ առաջացած կասկածները և արժանի հակահարված հասցնել իր թշնամիներին¹⁸⁵: Թերևս հենց այդ նպատակով է նա սկսել զբաղվել Ղուրանի այաթների մեկնաբանությամբ: Նրա բոլոր աշխատություններում ականերնորեն զգացվում է անկեղծ նվիրվածությունը իսլամին և կրոնական արժեքներին: Նա իր որդիներին ևս հորդորել է օգնել հոգևորականներին ու հաշվի առնել նրանց շահերը, հարգանք դրսևորել իսլամի նկատմամբ¹⁸⁶: Սակայն նրա քաղաքական հակառակորդները երբեք չեն խորշել շահարկել Ռաշիդ ադ-դինի՝ հրեական ծագում ունենալու փաստը և նրա դեմ քարոզչական լայն գործողություններ են ձեռնարկել:

Ռաշիդ ադ-դինի հակառակորդների կողմից հաճախ ներկայացվել է մեկ այլ մեղադրանք: Շահարկելով վեզիրի՝ փիլիսոփայությամբ հրապուրվելու հանգամանքը և մատնանշելով այս ասպարեզում նրա բազմաթիվ ստեղծագործությունները, նրանք այստեղ ևս չարամիտ դիտավորություն են տեսել: Զրպարտիչներն պնդել են, որ այդ ճանապարհով Ռաշիդ ադ-դինը իսլամը թուլացնելու և հրեական կրոնը ուժեղացնելու գաղտնի նպատակ է հետապնդել: Հավատ ընծայելով այսօրինակ անհիմն ամբաստանություններին՝ Ռաշիդ ադ-դինին նույնիսկ անհավատ Թորաթի հետևորդ են անվանել¹⁸⁷:

Այսպիսով, անկասկած է, որ Ռաշիդ ադ-դինը սերել է հրեա տոհմիկ բժիշկների ընտանիքից: Նրա հայրը և հորեղբայրը սկզբում ծառայել են իսմայիլականներին, իսկ մոնղոլների արշավանքների շրջանում իսմայիլական պետության կործանումից հետո իրենց ծառայությունը շարունակել են իլխանյան արքունիքում: Նախնիների կրոնից հրաժարվելուց և իսլամ ընդունելուց հետո նա հայտնի է դարձել Ռաշիդ ադ-դին պատվանունով, ընդ որում նրա օրինակին են հետևել մի շարք համախոհներ և կողմնակիցներ: Բայց նրա հակառակորդները համոզ-

¹⁸² Նույն տեղում, էջ 245:

¹⁸³ *Ռաշիդ ադ դին Ֆազլալահ*, Սավանե ալ-Աֆքար, Թեհրան, 1358/1979, էջ 293:

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 198:

¹⁸⁵ *Ռաշիդ ադ դին Ֆազլալահ*, Լաթայեֆ ալ-Հադայեդ, Թեհրան, 1353/1974, էջ 90:

¹⁸⁶ *Ռաշիդ ադ դին Ֆազլալահ*, Մոքաթեբաթե Ռաշիդի, Լահոր, 1945, էջ 13, 18, 19, 26, 27, 28, 29, 39, 80:

¹⁸⁷ *Իբն Հաշեբ*, Ալդարալքամանե, Կահիրե, 1990, էջ 203:

ված են եղել, որ Ռաշիդ ադ-դինը երբեք էլ չի հրաժարվել իր նախկին կրոնից և հանդիսացել է իսլամի գաղտնի թշնամի:

Կասկածամտությունը և մոլեռանդությունը իրենց գագաթնակետին են հասել թեմուրյան տիրակալ Միրանշահի օրոք (1404-1409), երբ վերջինի հրամանով Ռաշիդ ադ-դինի աճյունը դուրս են բերել մզկիթից և վերաթաղել հրեական գերեզմանոցում¹⁸⁸:

Այսպիսով, վերլուծելով սկզբնաղբյուրներում առկա փաստերն ու տվյալները կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը. Ռաշիդ ադ-դինը ազնվաբար ընդունել է իսլամը, սակայն չի կարողացել իրենից հեռու վանել նախնիներից ժառանգած հրեական մշակույթը, ինչն էլ հիմք է դարձել նրա հակառակորդների չարախոսությունների և չարագործությունների համար, որի արդյունքում ի վերջո մտավորականն ու քաղաքական գործիչը հատուցել է մահապատժով:

Kourosh Salari – *Religion and religious Belief of Khawja Rashid al-Din Fazlollah hamedani The Khawja Rashid al-Din.* – Fazlollah hamedani was a famous minister in the Elkahnan mongol's period and he was born in Jewish family. But he left his father's religion and he accepted islam religion so his name got changed from Rashid Doleh to Rashid al-Din. His political enemies called that his islam has been dissimulative and nominal. It seems that believe of Rashid al-Din in Islam was on the devotion And it is because of a his valuable service to the Islamic culture.

Курош Салари – *Религия и религиозная вера Хауджа Рашид ал-дин Фазлоллах Хамедани.* – Хауджа Рашид ал-дин Фазлоллах Хамедани был известным священником в период Элкахнанских монголов. Он родился в семье евреев, однако отказавшись от религии своего отца, принял исламскую религию. Поэтому его имя изменилось на Рашид ал-дин вместо Рашид Даула. Его политические враги говорили, что его ислам был маскировочным и формальным. Кажется вера Рашида ал-дин в ислам была основана на преданности. И это благодаря его ценным услугам в исламской культуре.

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 330:

**ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1915 – 1916ԹԹ.**

ՆՈՐԱՅԻ ՀԱԿՈՒՅԱՆ

Արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կազմակերպած աննախադեպ իրադարձությունների ընթացքում ստեղծվում են նաև զանազան ամերիկյան օգնության կազմակերպություններ, որոնց նպատակն էր ստույգ կործանումից, սովից, համաճարակներից, ինչպես նաև, ըստ հնարավորության, կոտորածներից փրկել արևմտահայության կամ թուրքաբնակ հայության ներկայացուցիչներին:

Չի սխալվում պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը, գրելով, որ «Սկզբնապես Հայաստան հասած ամերիկյան բարեգործությունը մասնավոր էր»¹⁸⁹:

Դեռևս 1915թ. սեպտեմբերի 3-ին Հ. Մորգենթաուն, Կ. Պոլսից մի գրություն է ուղարկում ԱՄՆ-ի պետքարտուղարություն, ուր շեշտում էր, որ «Հայոց ազգի բնաջնջումը Թուրքիայում արագ թափով առաջ է գնում»¹⁹⁰:

Ի պատասխան այս գրության, պետքարտուղարը հարցնում է դեսպանին, թե՞ կարող է արդյունավետ օգտագործել 50-100 000 դոլար, այն եթե հատկացվի հայերին¹⁹¹:

Մորգենթաունի կոչի վրա միսիոներների, բարեգործների, արդյունաբերողների և հայտնի մանկավարժների մի խումբ ստեղծում է Հայկական կոմիտեն, որի նախագահ է դառնում Ջեյմս Բարտոնը: Այն կոչվում էր Armenian Relief Committee - ARC¹⁹²: Այս կոմիտեն հետագայում կոչվեց Հայկական Նպաստամատույց Կոմիտե: Այս կազմակերպությունն արագորեն հավաքում է 100.000 դոլար, որպես նպաստ, որը պետք է բաշխեին Կ. Պոլսո և Սիրիայի ամերիկյան պաշտոնյաները:

Այս կոմիտեի մեջ մտնում էին բացառապես ամերիկացիներ, որոնց թվում՝ Նյու Յորքի կաթոլիկ կարդինալ Գիբբոնսը, Սթիվեն Ուայզը և ուրիշներ:

«Երբ հայկական ողբերգության ծավալները բացահայտվեցին, - գրում է Ռ. Հովհաննիսյանը, - Կոմիտեն ընդարձակեց իր գործողությունները՝ 1915թ. վերջերին, Սիրիայի և Պարսկաստանի համար կազմակերպված նպաստամատույց խմբերը միավորելով Հայկական և Սիրիական նպաստամատույցի մեջ: Հաջորդ երկու տարիներին ապահովվեց դրամի և նպաստների մի հաստատուն հոսք՝ մասնավորապես Մերձավոր Արևելքի քրիստոնյա փախստականների խիստ կարիքները մեղմացնելու համար, ովքեր տեղահանվել և քշվել էին արաբական նապաստներ: Միաժամանակ, ամերիկյան միսիոներներն ու ուսուցիչները Անա-

¹⁸⁹ Տե՛ս Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, Հատոր I, Առաջին տարին, 1918-1919, Երևան, 2005, էջ 143:

¹⁹⁰ Նույն տեղում, նաև՝ Papers Relating to the Foreign Relations of the United States, 1916, Supplement, The World War, Washington, 1929, p. 988.

¹⁹¹ Նույն տեղում:

¹⁹² Տե՛ս Barton James L., Story of Near East Relief (1915-1930), New York, 1930, p. 7.

տողիայում փորձում էին հատ ու կենտ հայերի փրկել անխուսափելի մահվան ճիւղաններից: Նույնիսկ, երբ 1917թ. Թուրքիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ, այս մարդկանցից շատերը մնացին իրենց տեղերում»¹⁹³:

Անհրաժեշտ է շեշտել, որ թե՛ այս և թե՛ այլ կազմակերպությունները չափազանց զգույշ են եղել Թուրքական իշխանությունների նկատմամբ վերաբերմունքի հարցում և **զերծ են մնացել հակաթուրքական որևէ քարոզչությունից**: Հասկանալի է դարձյալ, որ նրանք առաջնորդվել են զուտ մարդասիրական նպատակներով:

Ցեղասպանությունից փրկված հայերին նյութական աջակցություն ցուցաբերելու նպատակով բավական արդյունավետ աշխատանքներ են տանում Հայկական և Սիրիական նպաստամատույց կոմիտեն, որը հետագայում գործեց Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտե (ACRNE – ՄԱԱՆԿ) անունով, և որը ծրագրել էր հավաքել 30 մլն. դոլար¹⁹⁴:

Բարտոնի հանձնախմբի մի քանի դաշտային խմբեր անցնում են Սիրիա, Պաղեստին, Պարսկաստան, Թուրքիայի ներքին շրջաններն և Կովկաս: Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեի գործողությունները հիմնականում կենտրոնացվում են Կ. Պոլսում, Սիրիայում, Պաղեստինում և Արևմտյան Հայաստանում՝ մինչև Սվազ-Խարբերդ-Դիարբեքիր-Մարդին գիծը¹⁹⁵:

Բուն Արևմտյան Հայաստանում հայանպաստ ընկերությունների գործունեության մասին կարևոր տեղեկությունների կարևոր տեղեկություններ են հանդիպում ժամանակակից մամուլում: Հայկական Նպաստամատույց կոմիտեին է վերաբերվում հետևյալ տեղեկությունը.

«Կյանքը երկրի մեջ

Վան, 23 հոկտ. 1916

Ամսի 8-ի երեկոյան քաղաքապետարանի մեջ թեյասեղան սարքվեց և ի պատիվ Ամերիկյան և Անգլիական հայանպաստ ընկերությունների ներկայացուցիչներ Տր. Յարոյի և Տր. Պաքիաուզի:

... Հավաքույթի նպատակն էր ծանոթություններ տալ Ամերիկյան հայանպաստ կոմիտեի ներկայացուցիչներին՝ Վանի մեջ գոյություն ունեցող նպաստաբաշխ մարմինների գործունեության մասին»¹⁹⁶:

Այնուհետև տեղեկանում են, որ Վանի գյուղացիությանը մեծ թվով (37 և 50 հազ. ո. չափով) սերմացան և դրամ է բաշխվել¹⁹⁷:

Ահա մեկ ուրիշ տեղեկություն. «Ամերիկյան հայանպաստ կոմիտեն այստեղ (Երևանում – Ն. Հ.) բացել է կանանց բուրդ զգելու արհեստանոց, ուր աշխատում են օրական մոտ 80 անտեր կանայք: Իսկ մանելու և գուլպա գործելու համար՝ մոտ 600 անտեր կին: Ամեն մեկին 1 ֆունտ մարդ է տրվում, աշխատավարձը՝ 80 կոպ – 1 ո.»¹⁹⁸:

¹⁹³ Ռ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 143-144, նաև՝ Barton, նշվ. աշխ., p. 13-17, 51-69:

¹⁹⁴ Barton, նշվ. աշխ., p. 209:

¹⁹⁵ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 23 մարտի, 1919:

¹⁹⁶ «Վան-Տոսպ», նոյեմբերի 13, թիւ 51, 1916:

¹⁹⁷ Նույն տեղում:

¹⁹⁸ «Գաղափար», թիվ 83, Հոկտեմբերի 12, Երևան, 1916:

«Հորիզոնից» տեղեկանում ենք, որ Ամերիկյան նպաստամատույցը 1916թ. բացել է «բրդի աշխատանոց փախստական չքավոր ընտանիքներին գործ հայթայթելու համար»: Այնտեղ աշխատում էին 500 հոգի¹⁹⁹:

Ամերիկյան կազմակերպությունների օգնությունն, այսպիսով չէր սահմանափակվում միայն Մերձավոր և Միջին Արևելքի ու Թուրքիայի հայերի փրկությանմբ, այլ՝ տարածվում էր նաև Արևելյան Հայաստան և Կովկաս անցած փախստականների վրա:

Ահա այդ մասին վկայող մեկ այլ փաստաթուղթ. «Երևանաբնակ Ամերիկյան Հայանպաստ Կոմիտեն իր բարեսիրական գործունեության ցանկը ընդլայնելով օգնության հասավ այս հեռավոր անկյունում (Նոր Բայազետում – Ն. Հ.) ապաստանած, գրեթե մոռացության մատնված բազմահազար հայ և ասորի փախստականների: Մասնավորապես որբերին և վերջին գաղթերի առթիվ Պարսկաստանից և Հայաստանի գուլումի վայրերից թուրք և քուրդ յաթաղանից հրաշքով ճողոպրած և Կովկաս ժամանած մերկ և հյուծված նորեկներին»²⁰⁰:

Հայության բեկորներին փրկելու և նրանց ապաստան տալու ուղղությամբ Հայկական նպաստամատույց կոմիտեի աշխատանքները շարունակվում են մինչև Հայաստանի I Հանրապետության գոյության շրջանը:

Այժմ փորձենք նոր փաստեր մեջբերել Նպաստամատույց Կոմիտեի միջոցառումների մասին: Այսպես, «Ասպարեզի» 1917թ. դեկտեմբերյան համարներից մեկում կարդում ենք. «Ամերիկյան հայանպաստ հանձնախումբը կ'անկնկալե, որ Ֆրեզնո գավառից 36 000 դոլարի գումար մը հանե՝ Կովկասի և Միջագետքի մեր կարոտյալների համար»²⁰¹: Այդ նպատակով ժողովը ըստ լրագրի, պետք է տեղի ունենար առաջիկա կիրակի օրը:

«Հորիզոնի» մի թղթակցությունից պարզվում է, որ ԱՄՆ-ի սենատը հատուկ բանաձև է ընդունում պատերազմից տուժած հայերի մասին, որը գտնելով «որ պատերազմիկ երկրների մեջ հազարավոր հայեր կան, որոնք սննդի, հագնելիքի և պատսպարանի կարիք ունեն», խնդրում է ԱՄՆ նախագահին, որը նպաստի, «որ այս երկրի քաղաքացիները իր համակրությունը հայտնե իր մասնակցությւնը բերելով պատերազմիկ երկրների մեջ գտնվող հայերի ի նպաստ հավաքված ֆոնդերին»²⁰²:

Մեկ ուրիշ աղբյուրում Ամերիկյան «նպաստի նավը» վերնագրով թղթակցության տակ կարդում ենք. «Հոկտեմբերի 21-22-ին ԱՄՆ-ում ի նպաստ հայ և ասորի փախստականների օգտին կատարած նպաստի օրերի ամբողջ արդյունքը անցել է 2 մլն. ռուբլուց: Ամերիկյան կառավարության հավանությամբ, ամերիկյան, հայկական և ասորական նպաստամատույց կոմիտեն վարձել է մի նավ ուտեստ և հագուստ ուղարկելու Սիրիա և Միջագետք: Մի քանի հազար տոննա կարողություն ունեցող նավ մեծ քանակությամբ պահածո միս, ալյուր, խտացրած կաթ, բրինձ, թեյ, շաքար և հագուստեղեն, դեկտ. 25-ին ԱՄՆ-ից մեկնել է դեպի Բեյրութ»²⁰³:

¹⁹⁹ «Հորիզոն», նոյեմբերի 16, Թիֆլիս, 1916:

²⁰⁰ «Աշխատանք», էիվ 10, հունիսի 3, Երևան, 1917:

²⁰¹ «Ասպարեզ», թիվ 488, դեկտեմբեր 14, Ֆրեզնո, 1917:

²⁰² «Հորիզոն», թիվ 197, սեպտեմբերի 3, 1916:

²⁰³ «Համբավաբեր», թիվ 5, Թիֆլիս, փետրվար, 1917:

Որ սենատն իսկապես ընդունել է վերոհիշյալ որոշումը, հաստատվում է նրանով, որ 1916թ. օգոստոսի 31-ին ստորագրում է մի հրամանագիր, որով նույն տարվա հոկտեմբերի 21-ն ու 22-ը հայտարարվում էին հայերի ու սիրիացիների օգտին կազմակերպվող հանգանակությունների օրեր²⁰⁴:

Քանի որ մեր ուսումնասիրության գլխավոր խնդիրը չէ ճշտել և ներկայացնել, թե կոնկրետ թվերով ինչքան գումար են հավաքել հանգանակություններից, այլ՝ բացահայտել հայ-ամերիկյան հարաբերությունների բնույթը, ուստի չենք անդրադառնում այդ թվերին:

Ավելացնենք նաև, որ բացի նպաստամատույց կազմակերպությունից, գործում էին նաև ուրիշները: Դրանցից անհրաժեշտ է հիշատակել 1915թ. սեպտեմբերի 29-ին Նյու-Յորքում ստեղծված Ամերիկայի հայ բժշկական նպաստամատույց ընկերությունը (Armenian Medial Relief Association of America)²⁰⁵:

Ամերիկյան օգնության բաշխման նպատակով մեկ այլ կազմակերպություն էլ ստեղծվում է 1915թ. սեպտեմբերին Կովկասում²⁰⁶: Սրա նպատակը նույնպես արդեն ռուսական զորքերի կողմից գրավյալ Արևմտյան Հայաստանի շրջանների կարոտյալներին օգնություն հասցնելն էր: Ցեղասպանությունից մազապուրծ հայության բեկորներին մարդասիրական օգնություն էին ցույց տալիս նաև դեռևս 1914թ. դեկտեմբերին ստեղծված Պաղեստինա-Սիրիական օգնության կոմիտեն (Palestine-Syrian Relief Committee) և Պարսկաստանի օգնության կոմիտեն (Persian Relief Committee), որն ստեղծվել էր 1915թ. սկզբներին: Նույն թվականի վերջերին այս երկու կոմիտեները միավորվում են Հայկական օգնության կոմիտեի հետ, ձևավորելով Հայկական և Սիրիական Օգնության Ամերիկյան կոմիտեն (American Comitete for Armenian and Syrian Relief): Բարտոնի վկայությամբ՝ այս կոմիտեն գործել է Թուրքիայում, Կովկասում, Պարսկաստանում, Եգիպտոսում²⁰⁷:

Բավարարվելով այս փաստերով, ավելացնենք միայն, որ հայերի նկատմամբ ամերիկացիների մարդասիրական գործունեությունը շարունակվեց նաև հետագայում, Հայաստանի I Հանրապետության տարիներին, այն տարբերությամբ միայն, որ այն կրեց նաև պետական բնույթ:

Ամփոփելով նշենք, որ այսպիսով ա) հայոց համատարած ջարդերի ընթացքում և դրանցից հետո ամերիկյան մարդասիրական կազմակերպությունները ջանք ու եռանդ չեն խնայել դրանցից մազապուրծ հայերին օգնելու նրանց սննդով, հագուստով և կացարաններով ապահովելու համար, բ) այդ նույն գործունեությունը չի իրականացվել միայն հայերի առումով, այլ տուժած ուրիշ քրիստոնյաների, գ) նրանց գործունեությունը չի կրել քաղաքական բնույթ, կազմակերպությունները չեն հետապնդել որևէ քաղաքական նպատակ:

Հայության նկատմամբ նրանց տարած աշխատանքները միայն ու միայն արժանի են դրվատանքի:

²⁰⁴ The Armenian Genocide, Dokuments and Declarations, 1915-1995, compiled and by *H. Sassounian*, Glendale, 1992, p. 22.

²⁰⁵ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 28, ց. 1, գ. 545, թ. 45:

²⁰⁶ “Армянский вестник”, N 40, Москва, 1917, с. 18.

²⁰⁷ Barton, նշվ. աշխ., p. 13:

Норайр Акопян – *Создание и деятельность, американских общественных организаций 1915 – 1916 гг. в целях оказания помощи армянам.* – В статье представлена деятельность американских гуманитарных организаций 1915 - 1916 гг., созданных на территории Османской империи в целях оказания помощи западным армянам, спасшихся от геноцида и носившая гуманитарный характер.

Сделана попытка освящения усилий, которые были приложены последними для спасения армян по средствам обеспечения продуктами питания, обеспечением проживания, занятостью. Благодаря чему в последствии, спаслось большое кол-во армян. Деятельность данных организаций носила только гуманитарный характер, и не преследовала политических целей.

Norayr Hakobyan – *The foundation and activities of the U.S non – governmental organizations targeting to aid Armenia from 1915 – 1916.* – The article presents the activities of Armenian humanitarian organizations from 1915 – 1916 found to deliver relief to Western – Armenians who survived the Genocide in the Ottoman Empire. An attempt is made to illustrate the efforts of these organizations to save Armenians ensuring food supplies, housing and employment. Thanks to these efforts a great number of Armenians survived as a result. The activities of such organizations were humanitarian and did not pursue political goals.

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԳՈՐԾՐԼԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ

Հայաստանում ժողովրդավարության հաստատումից հետո կառավարությունը անմիջապես ձեռնամուխ եղավ գյուղատնտեսական հողերի, իսկ այնուհետև պետական (հանրային) բնակարանային ֆոնդի և, որպես շուկային անցման գլխավոր պայման՝ պետական ձեռնարկությունների ու անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման ծրագրերի իրականացմանը:

Անցումային շրջանի կարևոր վերափոխումներից մեկը պլանային տնտեսությունից անցումն է շուկայական տնտեսության, որի կարևոր բաղադրիչն է պետական գույքի մասնավորեցումը: Արագացված մասնավորեցումը նպատակաուղղված էր պետության հեռացմանը ձեռնարկությունների կառավարումից, սահմանել բյուջետային խիստ սահմանափակումներ, ապահովել ձեռնարկությունների վերակառուցումը²⁰⁸:

Պետական գույքի ապապետականացման կարևոր դրդապատճառներից մեկը տնտեսական կյանքի ազատականացումն է: Նախկին խորհրդային երկրներում սեփականության իրավունքների ոլորտում տնտեսական բարեփոխումները դիտվեցին որպես ժողովրդավարական պետություն ստեղծելու անհրաժեշտ պայմաններից մեկը, որը, միևնույն ժամանակ, պետք է կատարվեր շատ արագ: Անհրաժեշտ էր հաշվի առնել, որ նախկին սոցիալիստական երկրներում դեռևս բավականին ուժեղ էր «հավասարության» մտածողությունը, առանձնապես պետական ձեռնարկություններում, ինչպես նաև տնտեսական հավասարության մտածելակերպը պետական կառույցներում և ընդհանրապես հասարակության գիտակցության մեջ:

Չնայած ձեռնարկությունների ապապետականացումը նախկին սոցիալիստական երկրներում իրենից ներկայացնում է սեփականության իրավունքների վերաբաշխում, սակայն, շատ հաճախ, այդ ընթացքում տնտեսական միջավայրը էականորեն չի փոփոխվում: Նման իրավիճակի պատճառն այն է, որ անցումային տնտեսություն ունեցող երկրներում շուկայի անցման սկզբնական փուլում ավելի շատ ուշադրություն է դարձվում սեփականատիրական հարաբերությունների փոփոխման քաղաքական գաղափարախոսության ապահովմանն, ինչպես նաև բնակչության (հատկապես՝ չապահովված) սոցիալական պայմանների բարելավմանը: Այսինքն, ձևավորվում է քաղաքական և սոցիալական որոշակի միջավայր, որտեղ իրականացվում է պետական գույքի մասնավորեցման քաղաքականությունը:

Մասնավորեցման գործընթացի հաջողությունը և ոչ մի երկրում չի կարելի երաշխավորել առանց քաղաքական կամքի դրսևորման և տնտեսական գործու-

²⁰⁸ *Մամսոն Դավդյան, Աշոտ Մարկոսյան, Հայկ Մարգարյան* Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Երևան, 2003, էջ 130:

նեության համար նպաստավոր պայմանների ստեղծման: Ըստ որում, մասնավորեցման ոլորտում առաջադրված նպատակների իրականացումը մեծամասամբ կախված է տնտեսական կառույցներին ներկայացված սահմանափակումներից և մասնավորեցման սխեմաների (մեթոդների, մոդելների) կիրառման ժամանակ առաջացած խոչընդոտներից: Մյուս կողմից, առանց պետական գույքի մասնավորեցման անհնար կլինեին շուկայական հարաբերությունների անցումը, քանի որ, նախ և առաջ, այդ գործընթացի դրական արդյունք է համարվում շուկայական ենթակառուցվածքների ստեղծումը, և երկրորդ, որպես շուկայի ձևավորման պայման և գործելու հայտանիշ անհրաժեշտ է տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցությունը, տնտեսական հարաբերություններում պետության միջամտության նվազեցումը: Վերջինս պահանջում է ինքնակառավարվող և մրցունակ ձեռնարկությունների բավականաչափ քանակություն, որոնք ընդունակ են արձագանքելու շուկայի պահանջներին և որոնց ղեկավարները ընտրված են ելնելով ոչ թե քաղաքական դրդապատճառներից, այլ նրանց մասնագիտական հատկանիշներից և շուկայում գործելու հմտությունից:

Վերը նշված պատճառներն էին, որ հաշվի առնվեցին Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից, երբ 1991 թվականից նախաձեռնվեց պետական գույքի մասնավորեցման գործընթացը: Դրա առաջին քայլը «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի ընդունումն էր և «փոքր» օբյեկտների²⁰⁹ առաջին խմբաքանակի մասնավորեցման մասին որոշման ընդունումը:

Պետք է նշել, որ պետական գույքի մասնավորեցումը տնտեսական բարեփոխումների այն ոլորտներից է, որն իրականացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ծրագրերին՝ օրենքներին համապատասխան: Դրանցից առաջինն ընդունվել է 1991 թվականին, այնուհետև գործողության մեջ են դրվել 1992, 1993, 1994, 1995 թվականի տարեկան ծրագրերը, իսկ սկսած 1996 թվականից մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են մասնավորեցման եռամյա ծրագրերը: 1997 թվականին²¹⁰ փոփոխվեց նաև սեփականաշնորհման գործընթացը կարգավորող «մայր» օրենքը, որն անվանվեց «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենք և որը նույնպես տարիների ընթացքում բազմաթիվ փոփոխությունների ենթարկվեց²¹¹, ինչը վկայում է այն մասին, որ մասնավորեցման գործընթացն իրականացվում է ոչ թե կարծրացած մեխանիզմներով, այլ հաշվի է առնում ի հայտ եկած նորանոր պահանջները՝ թե՛ մասնավորեցման ձևերի կիրառման, թե՛ գույքի գնահատման, թե՛ մասնավորեցման գործարքների արդյունավետության բարձրացման հարցերում:

Մասնավորեցման լայնածավալ ծրագրեր իրականացնող երկրներում, որպես կանոն, եթե չի նախատեսվում ձեռնարկությունների լուծարումը նախքան մասնավորեցումը, պետական և պետական մասնակցությամբ ձեռնարկությունները վերակառուցվել են բաց կամ փակ բաժնետիրական ընկերությունների (ինչն

²⁰⁹ «Փոքր» օբյեկտներ են համարվում առևտրի, սպասարկման և հանրային սննդի ոլորտում մասնագիտացված օբյեկտները:

²¹⁰ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 17-ին, ՇՕ-188:

²¹¹ Տվյալ օրենքում էական փոփոխություններ են կատարվել յոթ անգամ:

անվանում են «բաժնետիրացում»): Հայաստանի Հանրապետությունում այդ խնդիրը հիմնականում լուծվեց մասնակի անհատույց սեփականաշնորհման միջոցով, որի արդյունքում տնտեսության տարբեր ոլորտների 1010 միջին և խոշոր պետական ձեռնարկություններ վերակազմավորվեցին փակ բաժնետիրական ընկերությունների 20/80 հարաբերակցությամբ կանոնադրական հիմնադրամներով: Իսկ մինչև 1997թ. դեկտեմբերի 31-ը պետական բոլոր ձեռնարկությունները պետք է վերակազմավորվեն պետական բաժնետիրական ընկերությունների:

Հայաստանի Հանրապետությունում, մասնավորեցում իրականացնող կառավարություններն ունեին մեկ ընդհանուր չլուծված խնդիր՝ պետական ձեռնարկությունների մեծ մասի չափազանց վատ ֆինանսական վիճակը: Այդ ձեռնարկություններից շատերը մինչև սեփականաշնորհումն ունեին մեծ պարտքեր, մյուսները սկսել էին լուրջ վնասներ կրել անցումային փուլում, որը խորացնում էր նրանց ժամկետանց պարտքերը, երբ սկսեցին գործել շուկայական գներն ու մրցակցությունը և նախկին սոցիալիստական համակարգի շուկան փլուզվեց: Առևտրային բանկերը բարեփոխումների սկզբից շարունակում էին չապահովված վարկեր տրամադրել իրենց ավանդական հաճախորդներին, իսկ երբ ավելի «կոշտ» դրամական և բանկային վերահսկողության քաղաքականության պատճառով, ձեռնարկություններին պարտադրվեցին ֆինանսական պատժամիջոցներ, նրանց մի մասը շարունակում էր ապրանքներ առաքել «իրենց» ավանդական հաճախորդներին՝ մեծացնելով «ձեռնարկությունների միջև պարտքերը»՝ դրանք վճարելու փոխարեն, ակնկալելով, որ «իրենց» բանկերը նորից իրենց կփրկեն՝ արտոնյալ վարկեր տրամադրելով: Թեև սեփականաշնորհման և ապապետականացման մասին ՀՀ օրենքով ֆինանսական վերակառուցման հնարավորություն նախատեսված էր²¹², սակայն և ոչ մի ձեռնարկության համար դա չկիրառվեց: Հանրապետությունում տնտեսության առողջացման նշանակալի միջոցառումներ չեն իրականացվել նաև արդեն մասնավորեցված ըներություններում, ինչը զգալի բացթողում կարելի է համարել:

Միջին և խոշոր չափերի արդյունաբերական ձեռնարկությունների մասնավորեցումը Հայաստանում սկսվեց 1995 թվականից: ՀՀ կառավարության կողմից 1994թ. նոյեմբերի 17-ի թիվ 530 որոշմամբ՝ հաստատվեց բաժնետիրացման ենթակա առաջին 10 միջին և խոշոր ձեռնարկությունների ցանկը: Առաջին 10 ձեռնարկությունների սեփականաշնորհումը բաց բաժնետիրական ընկերությունների ձևով սկսվեց 1995թ. մարտի 14-ին: Հետագայում բաժնետիրացման նախապատրաստվեցին ևս 50 ձեռնարկություններ²¹³: Կարելի է փաստել, որ ներկայումս զանգվածային մասնավորեցման գործընթացն ավարտվել է (աղյուսակ 1):

²¹² «ՀՀ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի («ձեռնարկության նախապատրաստումը սեփականաշնորհման») համաձայն. «3. Ձեռնարկության ֆինանսական վիճակի կարգավորումը տեղի է ունենում ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի ներկայացման հիման վրա և կարող է բովանդակել ձեռնարկության գույքի վերագնահատումը դրա մի մասի դուրսգրմամբ, ինչպես նաև ձեռնարկության պարտավորությունների կամ դրանց մի մասի մարումը, վճարումների հետաձգումը, նպատակային վարկավորումը, ինչպես նաև այլ ձեռնարկությունների միջոցների օգտագործմամբ ֆինանսական կարգավորումը»:

²¹³ Ա.Խ. Մարկոսյան, Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը, տեսության և պրակտիկայի հարցեր, Երևան, 1995, էջ 75:

Հայաստանի Հանրապետությունում միջին և խոշոր ընկերությունների մասնավորեցման արդյունքներն ըստ տարիների և մասնավորեցման ձևերի, առ 01.01.2011թ. դրությամբ, աճողական կարգով²¹⁴

N	Մասնավորեցման ձևերը	Ժամանակահատվածը								
		առ 01.01. 1996թ.	առ 01.01. 1998թ.	առ 01.01. 2000թ.	առ 01.01. 2002թ.	առ 01.01. 2004թ.	առ 01.01. 2006թ.	առ 01.01. 2008թ.	առ 01.01. 2010թ.	առ 01.01. 2011թ.
1	Պետական բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, այդ թվում՝	173	945	1109	1143	1147	1147	1147	1147	1147
	բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն	135	884	1047	1081	1085	1085	1085	1085	1085
	լոտային աճուրդ	38	61	62	62	62	62	62	62	62
2	Ուղղակի վաճառք, այդ թվում՝	67	262	319	377	537	617	628	637	642
	վարձակալին	34	139	187	200	206	209	209	209	209
3	Մրցույթ	-	28	61	102	133	170	175	175	175
4	Աճուրդ	-	15	18	20	39	50	55	60	60
5	Մասնագիտացված շուկաներում պետական բաժնետոմսերի վաճառք	-	-	-	1	1	1	1	1	1
	<i>Ընդամենը</i>	240	1250	1507	1643	1857	1985	2006	2020	2025

Առ այսօր Հայաստանում մասնավորեցվել է նաև 7308 «փոքր» օբյեկտ և 101 անավարտ շինարարության օբյեկտ: Պետական գույքի մասնավորեցումից 01.07.2011թ. դրությամբ ապահովվել են 164 054,8 մլն դրամի և 108,5 մլն ԱՄՆ դոլարի պետական բյուջեի եկամուտներ: Մասնավորեցման գործարքներից դրամական մուտքեր են ապահովվում նաև ՀՀ համայնքային բյուջեներում՝ համապատասխան համայնքի տարածքում գտնվող մասնավորեցվող անշարժ գույքի վաճառքի գնի 30%-ն ուղղվում է համապատասխան համայնքի բյուջե:

Մեկուկես տասնամյակից ավելի է, ինչ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է պետական գույքի մասնավորեցում (սեփականաշնորհում): Ժամանակի ընթացքին զուգահեռ փոփոխվել են այդ գործընթացի նպատակները, նախապատվություններն ու հայեցակարգերը: Բարեփոխումների սկզբնական

²¹⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչության տվյալներով:

շրջանում կրելով առավելապես զանգվածային բնույթ, վերջին տարիներին մասնավորեցման հիմնական նշանակետը ներդրումների ներգրավումն է տնտեսության «աշխատող» հատված և երկրում ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծումը:

Մեր կարծիքով, մասնավորեցման ներկա փուլը շատ ավելի բարդ է, բազմագործոն, քանի որ, բացի գույքի գնահատման և կազմակերպչական միջոցառումներից, անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք տնտեսական ու սոցիալական գործոններ, լուծել այնպիսի խնդիրներ, որոնք կապված են աշխատատեղերի պահպանման և աշխատողների բարեկեցության մակարդակի, արտադրության տեմպերի պահպանման ու ավելացման, մատուցվող ծառայությունների ծավալների և որակի հետ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ մասնագետները միակարծիք չեն մասնավորեցման արդյունքների գնահատման հարցում: Մեզանում առավել հաճախ հնչում են մասնավորեցվող պետական գույքի գնի վերաբերյալ հարցադրումները, որոնք միայն պոպուլիստական հնչերանգ ունեն և վկայում են այն մասին, որ հարցադրում անողը պատկերացում չունի (կամ էլ չի ուզում ունենալ) մասնավորեցման նպատակների մասին: Մինչդեռ, մասնավորեցման արդյունքների գնահատումը, դրա արդյունավետությունը չի կարելի ամփոփել մի քանի թվային ցուցանիշներով, ինչը փորձում են անել հաճախակի: Երևույթը բարդանում է նրանով, որ իրականացված գործարքների արդյունքները ի հայտ են գալիս ոչ անմիջապես, այլ տարիների (սովորաբար 3-5) ընթացքում:

Այսպես, փորձագետների մի մասն այդ արդյունքները գնահատում է մակրո- մակարդակով՝ երկրի տնտեսության համար ձեռքբերված արդյունքներով, մյուս մասը՝ միկրո- ընկերությունների զարգացման համար ստեղծված պայմաններով: Երրորդ խումբ փորձագետները գտնում են, որ մասնավորեցման արդյունավետությունը պետք է գնահատվի մասնավորեցման ծրագրերով սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից: Մեր կարծիքով ցանկացած գնահատական տալիս պետք է ձեռնպահ մնալ զուտ քանակական գնահատականներից՝ առաջնությունը տալով ձեռքբերված որակական փոփոխություններին և զարգացման հեռանկարներին:

Մասնավորեցումը Հայաստանում ձևավորեց ոչ պետական հատված, որն այժմ գերակայում է և՛ արտադրության, և՛ սպասարկման ոլորտում (ներկայումս ՀՆԱ-ի 85%-ը ստեղծվում է ոչ պետական հատվածում): Մյուս կողմից, անցումային տնտեսությունները, շուկայական բարեփոխումների առաջին փուլի ավարտից հետո, ստիպված են լուծել տնտեսության պետական և մասնավոր հատվածների չափի, համագործակցության ձևերին վերաբերող հիմնախնդիրներ, ինչպես նաև քննարկել մասնավորեցման այլընտրանքային ձևերի կիրառման հնարավորությունը կամ պետական հատվածում մասնավոր կապիտալի ընդգրկման եղանակները:

Ընդհանուր առմամբ, «հաջողված» մասնավորեցման համակարգի ստեղծումը մեծապես կախված է տվյալ երկրին բնորոշ տնտեսական և քաղաքական պայմաններից. քաղաքականություն իրականացնողների նպատակային և անկողմնակալ գործունեությունից, որը հարմարեցվում է յուրաքանչյուր երկրի որոշակի՝ առանձնահատուկ պայմաններին: Մասնավորեցման գործարքներն իրականացվում են տարբեր պետական հատված ունեցող երկրներում, ուստի և

դրանք չեն կարող ստանդարտ, համընդհանուր դեղատոմսի դեր ու կիրառություն ունենալ²¹⁵:

Վերջին 8-10 տարիներին Հայաստանում առաջնությունը տրվում է մասնավորեցման այն եղանակներին, որոնք թույլ են տալիս ներդրումներ ներգրավել ընկերություններում, ինչպես նաև պետական գույքի գնորդներին «պարտադրել» զբաղվել սոցիալական առանձին խնդիրների լուծմամբ: Այսպես, մրցույթների և ուղղակի վաճառքների լայն կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս ճանապարհով մասնավորեցված ընկերությունների նոր սեփականատերերը ներդրումային և սոցիալական որոշակի պարտավորություններ են ստանձնում հետմասնավորեցման տարիների համար: Այդպիսի պարտավորությունների կատարումը չափազանց կարևոր է ինչպես գործարարության խթանման, այնպես էլ սոցիալական մի շարք խնդիրների լուծման, և դրանցից ամենակարևորի՝ աշխատատեղերի պահպանման կամ նորերի ստեղծման տեսանկյունից:

Ինչպես մեր, այնպես էլ տարբեր երկրների փորձը վկայում է այն մասին, որ պետական գույքի վաճառքի գները միշտ ենթարկվել են քննադատության: Համաձայնեք, որ պետական գույքը վաճառել այնպիսի գնով, որ միաժամանակ բավարարված լինեն գնորդը, վաճառողը և հասարակությունը շատ դժվար, գրեթե անլուծելի խնդիր է: Դարձյալ անդրադառնանք մասնավորեցման մեր փորձին և հիշենք, որ երբ 1997 թվականին գրեթե երկու անգամ բարձրացվեցին մասնավորեցվող «փոքր» օբյեկտների գները, գնորդները չկարողացան ձեռք բերված գույքի դիմաց վճարումները կատարել և հետագայում պետական գույքի մասնավորեցման ծրագրի մասին օրենքով նախատեսվեց զեղչերի և տարածամկետ վճարումների նոր համակարգ (այն կիրառվում էր շուրջ 4 տարի), որից օգտվեց հազարից ավել մասնավորեցման սուբյեկտ, իսկ զեղչված գումարը կազմեց մոտավորապես 9,5 մլրդ դրամ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է, որպեսզի պետական գույքի և գործարքների գնային քաղաքականության յուրաքանչյուր փոփոխություն կատարելիս հնարավորինս կանխատեսել դրանց հետևանքները և նոր միայն ձեռնարկել համապատասխան քայլեր:

Հայաստանի Հանրապետությունը, որպես նախկին խորհրդային համակարգի մի մաս, չկարողացավ խուսափել մասնավորեցման գործընթացի հիմնական փուլում տարածված այնպիսի սխալներից, որոնք բնութագրական են հետխորհրդային տնտեսական տարածքում ստեղծված նորանկախ երկրներին: Ռուսաստանում վերոհիշյալ խնդիրների լուծումն այսօր էլ հրապարակ է և համընդհանուր լուծումներ գտնելը անհեռանկար աշխատանք է²¹⁶:

Կարելի է ասել, որ պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացի հետ կապված ժողովրդի սպասելիքներն առ այսօր չեն արդարացվել:

²¹⁵ Օրինակ, մասնավորեցում իրականացնող երկրներից ՀՆԱ-ի կառուցվածքում պետական հատվածի բաժինը փոքր էր 5%-ից Իսպանիայում (4,1%), Նիդերլանդներում (3,6%), ԱՄՆ-ում (1,3%) և Պարագվայում (3,1%), այս ցուցանիշը 5-10%-ի միջակայքում էր Պորտուգալիայում (9,7%), Դանիայում (6,3%), Հունաստանում (6,1%), Հարավային Կորեայում (9,0%), Պակիստանում (6,0%), Պապուա-Նոր Գվինեայում (10,0%), Նիգերիայում (10,0%), 10-25% այն կազմում էր Ֆրանսիայում, Ավստրիայում, Իտալիայում, Թուրքիայում, Արևմտյան Գերմանիայում, Միացյալ Թագավորությունում, Մալազիայում, Սինգապուրում, Բոլիվիայում, Յամայկայում, Շրի-Լանկայում, Քենիայում և մի շարք այլ երկրներում, իսկ այդ ցուցանիշը ամենաբարձրն էր նախկին սոցիալիստական երկրներում (65-ից 100%):

²¹⁶ *Աշուտ Մարկոսյան, Համազասպ Գալստյան*, Մտավոր սեփականություն, Երևան, 2004, էջ 127

չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի լայն խավ, չստեղծվեց արդյունավետ շուկա, ավելացավ գործազուրկների թիվը, զգալիորեն նվազեց գործող ձեռնարկությունների թիվը:

Չնայած ՀՀ-ում 1991-2000թթ. իրականացված պետական գույքի մասնավորեցման գործընթացը թողեց բացասական հետևանքների ոչ միայն տնտեսության, այլ նաև սոցիալական ու քաղաքական ոլորտներում, սակայն դրա իրականացումը պատմական անհրաժեշտություն էր՝ պայմանավորված ժամանակի քաղաքական և տնտեսական առանձնահատկություններով:

Армине Еприкян – Процесс приватизации государственного имущества в Республике Армения. – Массовая приватизация предприятий Республики Армения не привела к повышению результативности, к развитию конкуренции и обеспечению занятости.

Большая часть приватизированных предприятий оказалась на пороге бездействия и банкротства, не создался эффективный рынок.

Armine Eprikyan – The process of privatization of State property in the Republic of Armenia. – In the Republic of Armenia the mass privatization of industrial companies didn't influence on the increase of products productivity, development of competition and progress of employment. The most part of the privatized corporations appeared at the of either unemployment or bancruptcy and effective market wasn't formulated.

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՒԿԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵԶ (ԸՍՏ XIX–XX ԴԱՐԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՑՈՒԹԵՐԻ)

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«Ակունք»-ի 2011 թվականի թիվ 2-3 համարներում անդրադարձել ենք «ազգի» արենակցական խմբի կառուցվածքին, գաղափարական-հասարակական և տարածքային միասնությունը բնութագրող դրսևորումներին: Սույն հաղորդման մեջ, բացառապես դաշտային ազգագրական նյութերի հիմամբ ներկայացվում է ազգակցական խմբի տնտեսական-արտադրական ընկերակցությունների դերն ու նշանակությունը հայերի տնտեսական, արտադրական, ինքնապաշտպանության բնագավառներում:

Հայաստանում դեռ XIX դարում գյուղացիական տնտեսությունը կազմակերպվում էր գերդաստանների կամ ազգակից ընտանիքների համատեղ ջանքերով, իսկ ավելի բնորոշը հարևանական սկզբունքով կազմակերպվող արտադրական ընկերակցությունների կազմակերպման եղանակն էր: Գերդաստանների տրոհումից առաջացած դուստր ընտանիքները, դառնալով ինքնուրույն տնտեսական միավորներ, միմյանց միջև պահպանում էին գերդաստանական տնտեսական և արտադրական համատեղ գործունեության, փոխադարձ օգնության հարաբերությունները: Ընդ որում, դա իրականացվում էր առավել աշխատատար պրոցեսների՝ անտառահատական և բրիչային երկրագործության՝ վար ու ցանքսի, հերկի, արտերը պարարտացնելու, բերքահավաքի, կալսոցի, մթերքի վերամշակման, անասունների արածեցման, ընդհանուր խոտհարքը հնձելու, հաց թխելու, բնակաշինարարության՝ հիմքեր փորելու, հողանք կատարելու, շինանյութեր տեղափոխելու, տարերային աղետների՝ ձնահյուսքի, հրդեհների հետևանքների վերացման, փլուզումների վերականգնման և այլ դեպքերում:

Ազգակցական կապերը Հայաստանի տարբեր շրջաններում տարբեր ձևով են արտահայտվել: «Ազգ» արենակցական կապերն ավելի հաստատուն բնույթ են կրել հատկապես լեռնային, նախալեռնային և մասամբ՝ անտառաշատ շրջաններում²¹⁷: Մրա հիմնական պատճառն այն էր, որ հին նահապետական հարաբերությունների կենսունակության պայմաններում շարունակում էին պարզունակ մնալ աշխատանքի գործիքներն ու միջոցները, աշխատող ձեռքերի պակաս էր զգացվում, առաջին պլան էր մղվում ազգի ընտանիքների՝ միմյանց տնտեսական նեցուկ լինելու հանգամանքը:

Երկրագործա-անասնապահական համալիր տնտեսաձևը Հայկական լեռնաշխարհի բարդ, երբեմն դաժան բնակլիմայական և աշխարհագրական պայ-

²¹⁷ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ (XIX դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ), «Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), 1979, թիվ 1, էջ 198–206:

մաններում, աշխատանքի գործիքների ու միջոցների պարզունակության և պետականության երկարատև բացակայության, ռազմաֆեոդալական հետամնաց հասարակությունում հնարավոր էր իրագործել միայն սոցիալական կազմակերպվածությամբ, արտադրական ընկերակցությունների ստեղծման, տնտեսությունների փոխադարձ օգնության կազմակերպման եղանակով: Տոհմային հասարակությունից ժառանգված նման շատ վերապրուկներ հարատևեցին մինչև XIX դարը և անգամ XX դարի սկզբները: Աշխատանքային կոլեկտիվիզմը, փոխօգնության ավանդական ձևերը, հասարակական գործերի համատեղ որոշման սովորությունները, արտադրության որոշ միջոցների և հողային ընդհանուր սեփականությունն օգտագործելու ձևերը ազգի և համայնքի հարաբերությունների ամենաբնորոշ կողմերն էին:

Կոլեկտիվ ուժերով գյուղատնտեսական աշխատանք իրացնող խումբը Հայաստանում հայտնի էր մեծ մասամբ **հարակաշ** կամ **համկալ**, **տանստանու**, **աղսընկեր**, **խոճկամուզ**, **փոռնակ**, **շրիք-շերիք** (արաբերեն է նշանակում է ընկեր), **օրթաղ** (թուրքերեն է, ընկեր նշանակությամբ), **կիստվի ընկեր**, **ընկերովի**, **կիսրար**, **բաժնեկից** անվանումով, ինչպես նաև՝ ²¹⁸: Միջնադարյան աղբյուրներում այդպիսի ընկերակցությունը կոչվել է «հաղկից»²¹⁹: Այսպես օրինակ՝ 1251 թ. Կոստանդին Ա Բարձրաբերցի կաթողիկոսի խրատական կանոններից մեկում զգուշացվում է, թե հանդերձյալ կյանքում մեծ պատժի կարծանանան բոլոր նրանք, ովքեր այս կյանքում կգրկեն, կխաբեն ու կնենգեն իրենց ընկերներին: Արվեստակիցների, այսինքն՝ միևնույն արհեստով զբաղվող և համքարության մեջ ընդգրկված արհեստավորների, զինվորակիցների, գնողների ու վաճառողների հետ միասին կանոնի մեջ հիշատակվում են նաև «հաղկից» և «խաբկից» եզրույթները: Այնտեղ ասված է. «Ի գրկանաց և ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստոնեայքն և ի նենգելոյ զիրեարս՝ արք և կանայք, հաղկիցք, և խաբկիցք, և զինուորակիցք, և արուեստակիցք, գնալոք և վաճառալոք, զի որ մարմնական իրաւք գրկէ բռնութեամբ կամ խաբելով, զինքն հոգտով գրկէ և յաւիտենական կենաւքն»²²⁰:

Երկրագործական բնագավառ. Կոլեկտիվ, երբեմն անգամ համայնական ձևի աշխատանքն ավելի զանգվածորեն կիրառվում էր երկրագործության ասպարեզում: Բավարար քանակությամբ լծկան, գործիքներ, սերմացու, աշխատող ուժ չունենալով՝ արտադրական, աշխատանքային ընկերակցություններ էին կազմակերպում: Դրանք հաճախ համընկնում էին ազգակցական թաղի մեջ մտնող ընտանիքների խմբի հետ:

Երկրագործությունը եղել է հայ ժողովրդի տնտեսության առաջատար ճյուղը, որն անցյալում արտադրական միջոցների և աշխատավոր ձեռքերի միավորման և աշխատանքի կոլեկտիվ կազմակերպման կարիք ուներ: Իհարկե, այդպիսի աշխատատար տնտեսություն վարելը անցյալում ավելի հեշտ էր նահապետական մեծ ընտանիքների կողմից: Միայն գերդաստանական տներն էին, որոնք ապահովված էին աշխատանքի գործիքներով, լծկան անասուններով, բավարար թվով աշխատուժով և պատահական չէ, որ մեծ ընտանիքների տնտեսական

²¹⁸ Տե՛ս **Վ. Բրդյան**, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 304-321:

²¹⁹ Հայ բարբառներում պահվել է «հախկ» բառը՝ «ընկերակից գույթանավորներից ամեն մեկին ընկած վարելու հողի բաժին» իմաստով (տե՛ս **Ստ. Մալխասյան**, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան 1944, էջ 12):

²²⁰ **Լ. Նաչիկյան**, XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1958, 1, էջ 128:

առավելությունը խաղում էր վճռական դեր երկրագործական աշխատանքների հաջող կատարման համար: Այդ է պատճառը, որ կոլեկտիվ աշխատանքի տվյալ ինստիտուտի առաջանալը հիմնականում կապում են գերդաստանների քայքայման հետ²²¹:

Երկրագործական աշխատանքների ժամանակ փոքր ընտանիքները համախմբվում էին ոչ միայն միջնադարում, այլև XIX-XX դարերում²²²:

Գերդաստանների տրոհումից առաջացած անհատական փոքր ընտանիքները ինքնուրույն տնտեսական միավորների վերածվելով և կորցնելով երբեմնի արտադրական և սպառողական միասնությունը՝ անկարող էին գոյատևել առանց տնտեսական և արտադրական փոխադարձ օգնության: Ահա թե ինչու երկրագործական բոլոր աշխատանքների ժամանակ կատարում էին մարդկային ուժերի, բանող անասունների և գործիքների միավորում:

Հայաստանի լեռնային սակավահող շրջաններում նոր հող յուրացնելու նպատակով օգտագործվում էր անտառահատման համակարգը, և այդ նույն սակավահողության պատճառով լանջային տեղանքներում ստեղծվում էին դարավանդային արտեր,²²³ որոնց ժամանակ պահանջվում էր հարևանությամբ ապրող մերձավոր ազգականների տղամարդկանց և կանանց կոլեկտիվ, համատեղ ծանր աշխատանք: Ինչպես հավաստում են մեր դաշտային ազգագրական նյութերը, Աղձնիքում, օրինակ՝ վարուցանքի ժամանակ եզները **բաղել** էին անում, այսինքն՝ մի-մի եզ ունեցող ազգակից տնտեսությունները համախմբում էին իրենց քաշող ուժերը, կազմում էին մեկ կամ մի քանի լուծ: Սասունի և Ագնվացձոր գավառների գյուղերում վարուցանքի ժամանակ ազգակիցները միավորելով իրենց լծկան անասունները, արորն ու լծասարքերը կազմակերպում էին **ցանքսի գուրաբար**: Մոկսում, Տավուշում՝ Իջևան-Շամշադին-Դիլիջան շրջաններում ազգակից ընտանիքների մեկական գույզ լծկանով և կամ մեկական եզներով և մեկական արորով համկալ էին դառնում²²⁴: Նման դեպքերում մերձավոր ազգականները համատեղ ուժերով, հերթականությամբ կատարում էին վարն ու ցանքը: Վարն սկսվում էր ազգանդամի՝ ձյունից առաջինն ազատված արևահայաց հողից, որպեսզի հողը քեշից դուրս չընկներ:

Աղձնիքի հովտային շրջաններում՝ Արզն (Խարզան), Նփրկերտ (Սլիվան), աշնանացան ցորենի մշակության ժամանակ հողը հերկում էին երկու անգամ՝ կրկնավարի նպատակով, իսկ նույն հողում նաև բոստանային կուլտուրաների և աշնանային ցորենի մշակության համար՝ 4-5 անգամ: Դաշտային աշխատանքներում հողահանդակը ցանքի համար նախապատրաստելն ամենաաշխատատար գործընթացն էր: Ցանքը սովորաբար անում էին 1 գույզ լծկանով և փոքր արորով, մինչդեռ զարնանացանի և աշնանացանի հերկը, տեղանքի դիրքից և հողի տեսակից կախված, պահանջում էր կրկնավար:

Կրկնավարը անում էին այնքան անգամ, մինչև որ մոլախոտերն ամբողջապես վերանային: Յուրաքանչյուր վար **իքես** (երես) էր կոչվում: Հերկոցն ուներ եր-

²²¹ Տե՛ս **Ա. Բոբաкиձե**, *Супряги как одна из форм эксплуатации в дореволюционной Грузии, «Мамохивепи», том II, 1951, с. 409, 418; Т.А. Чиковани*, *формы взаимопомощи у цалских урумов, «Кавказский этнографический сборник», Тбилиси, 1972, с. 92.*

²²² Տե՛ս **Լ. Խաչիկյան**, XIV-XV դդ. Հայկական գյուղական համայնքի մասին, էջ 127:

²²³ Այդ մասին ուշագրավ տեղեկություններ տե՛ս **Թ. Արծրունի**, *Պատմություն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 202-203:*

²²⁴ Տե՛ս **Վ. Բղդյան**, նշվ. աշխ., էջ 306:

կու սեզոն՝ գարնան վերջերից մինչև ամռան կեսերն ընկած ժամանակամիջոցը և աշնանը: Հերկի մեծագույն մասն արվում էր առաջին սեզոնում: Հողի արևահարումը համարելով բերքատվության կարևոր երաշխիքներից, որոշ ընդմիջումներից հետո հերկատեղերը կրկնակի, երբեմն եռակի ու քառակի էին վարում: Ցանքի շրջանը հայտնի էր **ցանոց** և հերկինը՝ **հերկոց** անունով: Գութանի հերկածը հաճախ 1-2 անգամ արորով կրկնավար էին կատարում: Առաջին վարը, որ կատարվում էր հողի փափուկ ժամանակին, **կաթնավար** էին անվանում, իսկ կրկնավարը՝ **շրջվածք էնել**: Սովորաբար հերկելն սկսում էին անձրևից հետո: Վարը օրվա ընթացքում երկու, իսկ երկար օրերին՝ երեք հերթով էր կատարվում: Ուստի նման պայմաններում հերկը թելադրում էր ընկերակցություններ ստեղծել²²⁵: Այստեղ աշնանացանի ժամանակ 5 և ավելի տնտեսություն՝ յուրաքանչյուր տնից մի աշխատավոր, իր լծկանով միավորվում և օգնության էր գնում այն հարևանին, որի աշնանացանը ուշանում էր: Տիգրան Մկունդը հավաստում է, որ Դիարբեքիի մոտակա հայկական գյուղերում «բնագոյումով իրարու օգնող նեցուկ էին: Եթե մեկի եզը հիվանդանար, ամենեն մոտ դրացին փոխ պիտի տար իրենն՝ իր արտն հերկելեն վերջ, որչափ կարելի է շուտ... ժամանակի սղության կամ աշխատության վարձատրություն գոյություն չունեի ասոնց համար»²²⁶: Աղձնիքի Ալմատինա շրջանի Գալիոկ գյուղից Հ. Մերջիկյանը հավաստում է, որ իրենց գյուղում որևէ ազգանդամ ընտանիքում եթե պակասեր լծկան անասունը, նրա համար եզ գնելու նպատակով ազգակից ընտանիքներից դրամ էր հավաքվում: Եթե ազգակիցները դժվարանում էին կազմակերպել նյութական այդ օգնությունը, իրենց հողամասերի հետ վարում և ցանում էին նաև նրա արտերը:

Աղձնիքում հողը հերկվել է արորով, 1-2 գույզ լծկանով, որտեղ գութանի բացակայությամբ էր պայմանավորված այնպիսի հարակաշությունների կազմակերպման անհնարինությունը, որոնք կիրառելի էին Վասպուրականում և Արևելյան Հայաստանում:

Այստեղ կոլեկտիվ աշխատանքը երևում է նաև սերմանելու ժամանակ, երբ ազգակից սակավ աշխատավոր ձեռքեր ունեցողի տան ցորենի հորը առաջինն էր բացվում և գտվում ու տեղափոխվում արտերը²²⁷:

Գութանը թանկ գործիք էր, և ամեն ընտանիք ունենալ չէր կարող: Այս դեպքում հարակաշի ազգանդամները համատեղ ուժով գութան էին գնում և ստեղծում իրենց արտադրական միավորումը: Եթե նրանք միավորվում էին գութանատիրոջ շուրջը, տեղը ստանում էր որոշակի առավելություններ. առաջինը նրա հողը պետք է վարվեր, իսկ հողը վարելու հաջորդականությունը կախված էր հարակաշում յուրաքանչյուրի ունեցած ներդրումից: Հարակաշի անդամների հողը

²²⁵ Առաջին վարը՝ ցրտահերկը, կատարում էին փետրվարին, որը կոչվում էր **քրաք**, երկրորդ վարը կատարում էին մարտին՝ խաչաձև կրկնավար կատարելով, այն կոչվում էր **դգիսին**: Կրկնավարի ժամանակ սերմում էին գարնանացան ցորենը կամ գարին: Երրորդը՝ կատարվում էր ապրիլի կեսերից մինչև մայիսի վերջերը: Երրորդ վարը դարձյալ կրկնավար էր՝ զգլի և կորեկի արտերը սերմելու համար: Այդ վարն էլ կոչվում էր **սեզիսն**, իսկ չորրորդը՝ **չարգիսը**, կատարում էին մայիսի կեսերից հետո: Չորրորդ անգամ վարում էին սեխի, ձմերուկի, վարունգի, բամբակի արտերը, որը պետք է ավարտվեր մինչև անձրևներ տեղալը՝ սեպտեմբեր ամսին: Աշնանային ցորենի ցանքսը կատարվում էր սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և կոչվում էր **խուբար** վար: Այն կատարում էին բերքահավաքից հետո (տե՛ս ԴԱՆ, տ 3, Արարատի մարզ, գ. Վանաշեն, Այնթափ, 1971-1973, էջ 120-123):

²²⁶ **Տիգրան Մկունդ**, Ամիտայի արձագանքները, հ. Ա, Ուիհօքն նրա ճերգի, 1950, էջ 11:

²²⁷ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ, էջ 201:

վարելուց հետո մի օր էլ անվճար օգնության էին հասնում սակավ աշխատուժ ունեցող կամ բոլորովին չունեցող ընտանիքին: Անվարձ հերկելու գործողությունը չէր անցնում կես օրվանից: Հիմնականում այրի, տկար կնոջ հունձը, կալսումը, փոխադրումներն էին կատարում: Գոյություն ունեւ **մատաղի վար** կոչված սովորույթը. ընկերությունը վարում էր նաև հարակաշի մեջ չմտնող ընտանիքի հողերը որոշ գումարով, որով գնում էին մատաղացու անասուն և աշխատանքի ավարտը նշում մատաղացուի զոհաբերմամբ՝ այն համայնքի ընտանիքներին բաժանելով: Ըստ սովորության իրավունքի չափանիշների՝ ում հողը վարում էին, տվյալ ընտանիքը պետք է հոգար հարակաշի անդամների սնունդը: Երբ հողատերը ժլատություն էր ցուցաբերում, արժանանում էր համայնքի ծաղրանքին ու նախատինքին: Հարակաշը դիտվել է որպես արտադրական միավորումների կամ կոոպերացիաների նախնական ձև:

Նման ընկերակցությունների ձևերի ազգագրական ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտելու հասարակական հնավանդ կազմակերպությունների գոյակցության ձևերը և դրանց խաղացած դերերը հայկական գյուղում²²⁸:



Նկ. 1. Վասպուրական, XX դ. սկիզբ: ՊՊԹ, նեգ. № 2144

Համաձայն Վ. Բդոյանի և մեր դաշտային ազգագրական նյութերի՝ Արևմտյան Հայաստանում՝ Վասպուրականում (նկ. 1), Սոկսում, Արձեշում, Մասունում և այլուր, մինչև կոլտնտեսային կարգերը նրանց վերաբնակիչներով բնակեցված

²²⁸ Հիմնախնդիրը լավագույնս ուսումնասիրել է նշանավոր ազգագրագետ **Վ. Բդոյանը**՝ «Երկրագործական մշակույթը Հայաստանում» անչափ արժեքավոր աշխատությունում: Հարակաշ ձևով կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման մասին ուշագրավ նյութեր են պարունակում Ս.Եղիազարովի ուսումնասիրությունները, մասնավորապես՝ **Շ. Երևազարով**. Административно-экономический очерк сельской общины в Эриванской губернии. «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1887, с. 50-53 և այլն»: Տե՛ս նաև Գ. Վանցյան, Հում նյութեր հայ համայնքի ուսումնասիրության, **Ս. Հակոբյան**, Գյուղական համայնքը 15-18-րդ դարերում, ՊԲՀ, 1973, թիվ 2, **Լ. Խաչիկյան**, XIV-XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին, ՊԲՀ, 1958, թիվ 1 և այլն:

Թալինի, Աշտարակի շրջաններում (նկ. 1) այդ ընկերությունները կազմվում էին ազգակցական սկզբունքով, մինչդեռ Արարատյան հովտի պարսկահայերի մեջ, ընդհակառակը, նախընտրելի էին օտարները, որոնք իրավապահանջության տեսակետից ավելի համեստ էին²²⁹:

Ազգի ընտանիքների կողմից կոլեկտիվ հողամշակման այս ձևը հայոց մեջ է «ազգ» արենակցական խմբի ամենավաղ շրջանին բնորոշ միասնական հողօգտագործման և հողատիրության մնացուկների պատմական ոչ վաղ անցյալում գոյություն ունենալու վկայությունն է: Այդ մասին է վկայում նաև ազգակից ընտանիքների ոչ միայն տների, այլև հողերի կից լինելը, մի երևույթ, որը չէր խախտվել անգամ այնտեղ, որտեղ ազգակցական թաղերը վերածվել էին հարևանական կցաթաղերի: Ս. Հակոբյանը գրում է, որ միջնադարյան Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջանների «գյուղական համայնքներում դեռևս XV-XVIII դդ. տիրապետող ձևը հողի կոլեկտիվ-համայնական սեփականությունն էր»²³⁰: Անհատական ընտանիքների կողմից ազգովի համատեղ մշակված որոշ հողային տարածքների, ինչպես նաև տնտեսական կառույցների և գործիքների համատեղ օգտագործումը նպաստում էր մայր գերդաստանից ճյուղավորված ընտանիքների միջև տնտեսական շահերի ընդհանրությունների պահպանմանը: Այդ ընդհանրությունն իր արտահայտությունն էր գտնում հողերի համատեղ կոլեկտիվ մշակման, անասունների համատեղ արածեցման, կաթնատնտեսության համատեղ կազմակերպման, փոխօգնության ամենատարբեր ոլորտներում:

Փոխադարձորեն իրար աշխատավոր տալով հունձ կատարելը շատ տեղերում հայտնի էր **աղսընկերություն** անվամբ, այլ տեղերում՝ **ընկերովի, համփա** (պարսկերեն է, նշանակում է ընկեր)՝ հարակաշ նշանակությամբ: Համփաները կազմվում էին հիմնականում ազգանդամ ընտանիքներից:

Սասունում հացահատիկային մշակաբույսերի՝ գլզի և կավարսի բերքահավաքի ժամանակ հրավիրվում էին ազգի ջահել աղջիկներն ու հարսները, որոնք էլ առանց վարձատրվելու, կոլեկտիվ կատարում էին հունձը: Աշխատանքն ուղեկցվում էր աշխույժ երգերով և ավարտվում առատ հյուրասիրությամբ: Աղձնիքի հարավային շրջաններում՝ Ղուբին և շրջակա այլ գյուղերում, ցորենի հունձը կատարվում էր հարակաշի կարգով, առանց վարձատրության, հերթականությամբ, երբ օգնության էին գալիս ինչպես ազգակիցները, այնպես էլ ոչ ազգակից հարևանները²³¹: Համանման միավորում պահանջվում էր կալսման ժամանակ, որը Աղձնիքի գրեթե ողջ տարածքում կատարվում էր եզներով՝ տրորելու եղանակով: Այն Սասունում հայտնի էր **կոռի**, իսկ նրա հարավային շրջաններում **գեւլա** անունով²³²: Այստեղ ազգական-հարևանները միավորում էին իրենց լծկան անասունները և հերթականությամբ կատարում կալսոցը: Գալիոկ և շրջակա մյուս գյուղերում կալսելու և մաղելու աշխատանքները կատարվում էին կոլեկտիվ ջանքերով, համայնքի լայն աջակցությամբ, 1-2 գիշերվա ընթացքում: Կալսվածը երկար դեզ էին անում և թիերով քամուն տալու՝ **էրնելու** միջոցով ցորենը առանձնացվում էր հարդից: Այս աշխատանքը արագ՝ մեկ կամ երկու գիշերվա

²²⁹ Տե՛ս Վ. **Բոթյան**, նշվ. աշխ., էջ 309:

²³⁰ Տե՛ս Ս. **Հակոբյան**, Գյուղական համայնքը 15-18 դարերում, էջ 27:

²³¹ Տե՛ս ԴԱՆ, տ. 7, էջ 230, 251, տ. 6, էջ 61, տ. 7, էջ 274:

²³² Այն կատարվում էր 8-10 եզներ կամ զամեշներ կողք կողքի, միմյանց կապված կալի կենտրոնում պտտեցնելու եղանակով: Տե՛ս Ռ. **Նահապետյան**, Աղձնիք (պատմաաշխարհագրական ակնարկ), «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևան, 1974, էջ 169:

ընթացքում ավարտելու համար արդեն ոչ միայն ազգի ընտանիքները, այլև որոշ դեպքերում համայնքի տղամարդիկ և կանայք գնում էին օգնության: Աշխատանքը սկսվում էր արևմուտից մեկ ժամ առաջ և տևում մինչև արևածագ, որովհետև փչող քամին սկսվում և ավարտվում էր այդ ընթացքում: Ընդ որում, էրնելու աշխատանքը կատարում էին միայն տղամարդիկ, որոնք մեկի կալի գործն ավարտելուն պես անցնում էին հաջորդի կալը, որից հետո կանայք մաղում էին, իսկ երիտասարդները շալակով ցորենը տեղափոխում տները: Գործն ավարտելիս աշխատավորները հյուրասիրվում էին: Այս աշխատանքը հայտնի էր **կալը քամին տալ** անունով²³³: Համախմբվածության այս ձևը մասամբ պայմանավորված էր նաև գյուղական բնակավայրերի փոքրությամբ:

Ազգակցական, երբեմն նաև հարևանական օգնությունն ավելի լայն չափերով դրսևորվել է ընտանեկան այն աշխատանքներում, որոնք կանանց ձեռքին են կենտրոնացված եղել: Դրանք բնույթով թեև թեթև են եղել, բայց ծավալով այնքան մեծ, որ մեծ ընտանիքի կանայք անկարող էին միանգամից կատարել: Առաջ էր գալիս կոլեկտիվ աշխատանքի անհրաժեշտություն: Երկկողմանի օգնությունը հայոց մեջ կոչվում է **փոխարա**, նաև՝ թուրքերեն **քյումազ**՝ օգնել իմաստով: «Աշխատանքային փոխօգնությունը առհասարակ առանց հրաւերի կ'ըլլային: Մթերքներու պատրաստութիւնը, ինչպէս գյուղական աշխատանքի բազմաթիւ տեսակներ օգնական ձեռք կը պահանջէին: Փոխօգնութիւնը գիւղին ամենէն գեղեցիկ երեսներէն մէկը կը ներկայացնէր: Դուռ-դրացի կիներ ի հարկին ձեռք կ'երկարէին դրացուհին, երբ ան տուեալ պարագային ուրիշ անյետաձգելի գործ ունենար կամ օգնական ձեռքի մը կարօտ զգար: Դրացուհին կը վագեր՝ խնոցին կը վերցնէր, թոնիր կը մտնէր, շաղը կ'ընէր, մաղը կը վերցնէր, կապ մը ծխախոտ կը շարէր...: Բայց կային նաեւ այնպիսի աշխատանքներ, որոնց հաւաքական բնույթը աւանդութեամբ սրբագործուած էր: Այդպիսի աշխատանքներուն ձայն մը տալը բաւական էր, որ կիներ ու մարդիկ փութային և աշխատանքի մեջ բաժին վերցնէին: Այս պարագաները ինքնաբերաբար կը վերածուէին կերուխումի, ուրախութեան, երգի, պարի առիթներու»²³⁴: Դրանցից մեկը **մեջի** կամ **միջի** անվամբ բուրդ գգելու և մանելու աշխատանքն էր: Երբ ոչխարի բուրդը խուզված պատրաստ էր, տանտիրուհին կանչում էր դրկից ազգի կանանց՝ բուրդը գգելու և մանելու համար: Մանելը սովորաբար հասակավոր կանայք էին անում՝ իբրև ավելի փորձառություն պահանջող աշխատանք, իսկ գգելը՝ աղջիկները: Հրավիրվում էին այնքան կանայք, որ մի օրում հասցնէին ավարտել աշխատանքը:

Այդպիսի խմբակային ջանքեր էին պահանջում նաև էրիշտա կտրելու, ցորենը մաղելու, ձավարը ծեծելու, աղալու, այգեկութին մասնակցելու, տհալ, քաղցրեղեն պատրաստելու աշխատանքները: Արևմտյան Հայաստանի հովտային շրջաններում տներն իրար կից էին, տանիքները՝ կպած: Այդ պատճառով էլ այդ շրջաններում էրիշտան կտրում էին տանիքների վրա, որը մինչև եղեռնն ու արտագաղթը կատարվում էր ազգակիցների և հարևանների մասնակցությամբ:

Էրիշտա պատրաստելու ուշագրավ նկարագրություն է թողել Գր. Վանցյանը: Նա գրում է, թե երեկոյան հավաքվում էին հարևան աղջիկները, որոնք խմորն էին հունցելու: Նախ այլուրը «բաղադ» էին անում, ապա, երբ փոքր-ինչ ջուր առած

²³³ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ, էջ 201:

²³⁴ **Յակոբ Չոլաքեան**, Քնսապ, հ. Բ, Ազգագրություն, բանահյուսություն, Հալեպ, 1998, էջ 157-158;

էր լինում, հանում էին տաշտից և դնում հատկապես դրա համար պատրաստված **տավարճողձերի** մեջ, որը սովորաբար արծի մորթուց էր լինում: Այս աղջիկները երկու-երկու բարձրանում էին այդ տիկերի վրա, սկսում էին ոտներով տորթել, վարժ, ռիթմիկ հավասարաչափ, մինչև խմորի հունցելը: **Մէշին** (կոլեկտիվ աշխատանքը) տեղի էր ունենում գիշերը, որպէսզի խմորն առավոտյան կանուխ պատրաստ լինէր: Աղջիկները գործն ու ընթրիքն ավարտելուց հետո գիշերում էին հրավիրողի տանը: Առավոտյան կանուխ նրանք ցրվում էին, և նրանց փոխարեն հավաքվում էին կանայք, որոնք էրիշտա կտրել գիտէին: Կանանցից ոմանք գնդում էին պատրաստի խմորը, ոմանք բաց էին անում այն, մյուսներն էլ արդեն բացած խմորը, մի քանի ծալ անելով, կտրում էին էրիշտան, մի քանիսն էլ տանում էին արևի տակ չորացնելու և ապա բովելու²³⁵: Նույնպիսի համերաշխությամբ էին աշնանը պատրաստվում նաև ձավարն ու բլդուրը:

Աշխատանքների ընթացքում օգնության ձեռք մեկնողները օրական մեկ-երկու անգամ հյուրասիրվում էին առատորեն՝ բացառությամբ այն ընտանիքների, որոնք այդ կատարելու հնարավորությունը չէին ունենում:

Ուշագրավ է բլդուրը կոլեկտիվ կարգով ծեծելու սովորությունը Ղուբին գյուղում (Դաշտային Աղձնիք): Յուրաքանչյուր ընտանիք ծեծում էր 1 քիլա (20 կոտ), իսկ ունևոր ընտանիքները՝ ավելին: Ընդ որում, բլդուր պատրաստելու աշխատանքը համայնքում կատարվում էր հերթականությամբ: Պոլինձ ունեցող տնտեսություններն իրենց պոլինձները դնում էին թաղի հրապարակում, որ մյուսներն էլ օգտագործեն: 10-15 պոլինձներում, հերթականությամբ, յուրաքանչյուր օր մեկ ընտանիքի համար համատեղ ուժերով խաշում էին ցորենը և չորացնելուց հետո ծեծում սանդում, որը թաղի երիտասարդներն անում էին առանց հրավերի: Սա նաև հարսնացու և փեսացու ընտրելու լավ միջոց էր. դիտվում էին կողմերի աշխատասիրությունը, նրանց ֆիզիկական տվյալները, կորովիությունը:

Սասունի Բերմ, Գելիգուզան և մյուս գյուղերում նույնպես սանդով և վարսանդով ազգի տղամարդիկ կամ երբեմն էլ կանայք խմբով երկանքով բլդուր քաշելու կամ տղամարդիկ սանդով կորկոտ ծեծելու սովորությոն ունեին: Նախապես հրավիրվում էին 4-12 հոգի և չորսական հոգով խաչաձև ծեծում էին կորկոտը, որին ուղեկցում էր աշխատանքային ռիթմիկ երգը: Այս սովորությոը սասունցիների մեջ պահպանվում էր մինչև վերջերս²³⁶: Համանման սովորությո պահպանվում էր նաև Հայաստանի այլ շրջաններում: Լեռնային Դերսիմում «պուլղուր քաշելը (աղալ) ևս տան երիտասարդ աղջիկների ու հարսների պարտականությունն էր: Նրանց օգնության էին գալիս դրացի կամ ազգական հարսներն ու աղջիկները և մեկ, երբեմն մինչև վեց երկունքով տարվում էր աշխատանքը... այն տոնական բնույթ էր ստանում, երգում, պարում, կատակներ էին անում...»²³⁷:

Քեսապում ձավար կամ բլդուր ծեծելը և աղալը խաղի, երգի ու պարի առիթ էր կանանց և աղջիկների համար: Ձավարը սանդում ծեծում էին թաղի ջահել տղաները՝ իրար նախապես լուր տալով: Հավաքվում էին նաև կանայք և աղջիկներ: Հաճախ «քանի մը տան ձաւարը մէկ գիշեր կը ծեծէին: Այդպիսի գիշերները տօնի կը վերածուէին: Յետոյ կը բացուէր [ուտեստեղենով և խմիչքներով լի.- Ռ.Ն.]

²³⁵ Տե՛ս **Գր. Վսեցյան**, նշվ. հոդվածը:

²³⁶ ԴԱՆ, տ. 7, էջ 243, 273-274:

²³⁷ **Գ. Հայաջյան**, Դերսիմի հայերի ազգությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 5, Երևան, 1973, էջ 119-120, տե՛ս նաև **Վ.Թեմուրճյան**, Գամիքի հայերը, ՀԱԲ, հ. 1, 1970, էջ 129:

սեղան: Յետոյ յանկարծ կը փչեր սրինգը, քանի մը հոգի շուրջպարի կ'անցնէին: Շարքը կ'երկարանար, պարերգներուն և շուրջպարերուն կը մասնակցէին նաև կիներն ու աղջիկները: Իսկ «ձաւար աղալը կանանց ու աղջիկներու հաւաքական գործն էր...»²³⁸: Արցախում «հաց ու խմորին» փոխադարձ օգնության էին հասնում դրկից ազգականները: Այստեղ սովորություն կար հաց թխել այնքան, որ 20-30 օր բավարարեր ընտանիքին, սովորույթ, որ բնորոշ էր նաև Արարատյան դաշտավայրի բնակչությանը (նկ. 2, 3):



Նկ. 2. Հացի գնդերն են տանում թոնրատուն
(Արցախ)

Կաթնատնտեսության մեջ ևս գոյություն ուներ ընկերակցություն՝ **խաբու-խազ, խաբ, կաթ-չափ** անվանումներով: Դա կաթը փոխ տալու մի ձև էր, երբ հինգ-վեց և երբեմն էլ ավելի դրկից ընտանիքներ որոշակի ժամկետում իրենց ունեցած կաթը փոխ էին տալիս միմյանց: Սովորույթի համաձայն, քիչ թվով կաթնատու անատուններ՝ կով, ոչխար, այծ, ունեցող ընտանիքները օրվա ընթացքում երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան, կթված կաթը ամանով հերթով փոխ էին տալիս միմյանց՝ ամբողջ տարվա յուզն ու պանիրը այդ եղանակով ապահովելու համար: Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, թուրքերեն լեզվով կոչվում էր «ղաբ»-«խապ»²³⁹, այստեղից էլ «խապկցիք» եզրույթը փոխօգնության ընկերակցության մեջ մտած ընտանիքների համար: Եթե գյուղը մեծ էր, նրանք մի քանի խումբ էին կազմում, եթե փոքր՝ 1-2 խումբ²⁴⁰: Ամեն մեկն ուներ կաթը չափելու իր փայտե ճիպոտը, որը մտցնում էին կաթով լի դուլի մեջ՝ կաթի չափին համապատասխան ճիպոտի վրա խազ անելով: Հասկանալի է, որ փոքրաթիվ ազգակից կամ հարևան ընտանիքները զրկված պետք է լինեին յուր ու պանիր պատրաստելու հնարավոր-

²³⁸ Տե՛ս **Յակոբ Չոլաքեան**, Քեսապ, էջ 158- 159;

²³⁹ Տե՛ս **Հ. Աճադյան**, Արմատական բառարան, հ. III, էջ 303-304:


²⁴⁰ Տե՛ս ԴԱՆ, տ. 19, 2005, Արագածոտնի մարզ, էջ 26-29, 47-50 և այլն:

րությունից: Սակայն հայ ժողովուրդը դարերի ընթացքում իր արտադրական կեն-
ցադրում մշակել էր այդ դրությունից դուրս գալու՝ կաթ փոխ տալու ուշագրավ
եղանակը: Այս սովորույթը մինչև վերջին ժամանակներս պահպանվում էր հայ-
կական գյուղերի մեծ մասում, նաև Ջավախքում:



*Նկ. 3. Թոնրի տաք հացը հացթուխ կիներ փռում է արևի տակ
(Արցախ)*

Շինարարական բնագավառ. – Հայոց մեջ գրեթե ամենուրեք բնակարանա-
յին շինարարությունը՝ հիմք փորելը, շինանյութերն անտառից և դաշտից տեղ
հասցնելը, պատերը շարելն ու տները ծածկելը և հողանք կատարելն արվում էր
ազդի և համայնքի լայն աջակցությամբ: Փոխադարձ օգնության այդ ձևը, որ իրա-
գործվում էր երիտասարդների և տղամարդկանց միջոցով, դրամական հատու-
ցում չէր ենթադրում: Այն հայտնի էր **գուբարա** անունով՝ փոխօգնություն, հարա-
կաշ նշանակությամբ: Շինարարական նյութերի, հատկապես անտառանյութի
տեղափոխումը բնակարանաշինության ամենադժվարին աշխատանքն էր հա-
մարվում: Այդ տեսակետից ուշագրավ է ծածկի ժամանակ կիրառվող «մարթակի
գուբարան» (Ազնվացձոր գավառ) կամ «գերան բերել» կոչված գուբարան (Մա-
սուն): Աղձնիքում, հատկապես լեռնային շրջաններում, տները շատ ամուր էին
կառուցվում. տանիքի վրա լցվում էր 80-100 սմ հաստությամբ հող, որպեսզի
կտուրները դիմանան հաստ շերտով նստող ձյանը և նրանց վրա կայսոցին՝ կո-
ռիով կալ անելուն: Այդպիսի գերդաստանական տներում ապրում էր 30-80 անձ:
Ուստի անհրաժեշտ էին հաստ պատեր և հսկա գերաններ, որոնց տեղափոխումը
և շենքի վրա բարձրացնելը պահանջում էր 50-60 տղամարդու ծանր աշխատանք:
Գերանները լեռնային տեղանքում տեղափոխում էին զուտ մարդկանց ուժերով,
հարթություններում՝ լծկանով: Ամեն մի գերանի տեղափոխման համար պա-
հանջվում էր առնվազն 16 հոգի:



Նկ. 4,5. Ուջան գյուղ

Ազնվացձորի Կարբե և Սագ գյուղերում **մարթալի զուբարայի** ժամանակ համայնքից յուրաքանչյուր տուն տրամադրում էր մեկ տղամարդու՝ 1 զույգ եզնե-րով և իր լծասարքով: Լճկանագուրկ տնտեսության օգնությունը պարտադիր էր դառնում հողանքին՝ իրենց քթոցներով: Զուբարային մասնակցողների թիվը հատկապես մեծ էր լինում հողանքի օրը՝ հասնելով 40-50 և ավելի հոգու:



Նկ. 6. Բնակարանաշինության զուգարան (հացփորը) Ուջան գյուղում



Նկ. 7. Հացփորը Ուջան գյուղում (1972)

Այսպես օրինակ՝ Գելիեգուզան գյուղացի Արշակ Առաքելյանի հավաստմամբ՝ նախքան եղեռնը իրենց գյուղում Մարտիրոսի Առաքելի (Ըռքոյի) գոմի հողանքին հավաքվել էին 70 հոգի, իսկ Ազնվացձոր գավառի Մագ գյուղացի Խաչատուր Ներսիսյանի հավաստմամբ՝ Մագ գյուղում՝ 50 քթոցավոր։ Այդ նույն շրջանի Կարբ գյուղում հողանքին հավաքվում էին շինարարության տիրոջ տանը իրենց կողովներով և թիակներով՝ յուրաքանչյուր տնից մեկ աշխատավոր։ Նրանք բաժանվում էին առանձին խմբերի, որոնցից մեկը հող էր փորում և կողովները լցնում, երկրորդը կողովներով հողը կտուրն էր բարձրացնում, երրորդը թիեռով ներսից ու դրսից հողը կտուրն էր նետում և չորրորդը հարդարում էր կտուրը տեղափոխած հողը։ Շալակողները և հողը սանդուղքներով կտուրը

բարձրացնողները երիտասարդներն ու պատանիներն էին, հողը լցնողները՝ տղամարդիկ, և կտուրը հարդարողները՝ հասակավորները: Աշխատանքի ընթացքում հանգստանալու նպատակով աշխատանքային դերերը փոխում էին²⁴¹:

Աշխատանքի այս բաժանումն ավանդական բնույթ ուներ ոչ միայն Ադձնիքում, այլև ողջ Հայաստանում: Համայնքային այս փոխօգնությունը դեռ այսօր էլ շարունակվում է կիրառվել Թալինի և Աշտարակի տարածաշրջանների սասունցիներով բնակեցված գյուղերում: Հողանքը, որ կատարվում էր մինչև 1950-ական թվականները, արվում էր հետևյալ կերպ. ծածկելիս թողնվում էին կառույցի մեծությամբ համապատասխան թվով բացվածքներ, որտեղից կտուրի վրա էր գցվում հատակում կիտված և կտուրի համար պատրաստված հողը: Աշխատավորների մի խումբ հարդարում էր կտուրին կիտված հողը: Այս գործողությունը սասունցիները անվանում են **հող մանել**: Մեր օրերում բարեկամների և հարևանների կողեկտիվ ջանքերով, դարձյալ առանց վարձատրության է կատարվում «բետոն թափելը». ներկայումս տները բետոնածածկ են և հիմնականում երկհարկանի: Աշխատանքի ընթացքում տեղ են գտնում կատակներ, զվարճություններ, որտեղ հասակավորները ոգևորում են ջահելների աշխատանքը:

Մեր կողմից Աշտարակի տարածաշրջանի սասունցիներով բնակված Ուշան գյուղում 1972 թ. զգալի նյութեր գրառվեցին և լուսանկարահանումներ կատարվեցին: Ստորև ներկայացվում է բետոն թափելու զուբարան և հյուրասիրությունը, որն այստեղ անվանում են **հացփոր**:

Զուբարա հրավիրողը շինարարության տերն էր. յուրաքանչյուր տուն, ըստ բարոյական նորմերի և սովորության իրավունքի, մի աշխատավոր էր տրամադրում, իսկ ազգականները՝ մեկից ավելի: Ըստ որում, հիմքը փորելու, պատերը շարելու աշխատանքներին մասնակցում էին առանձնապես ազգականները: Ազգակցական փոխօգնությունն առավելապես արտահայտվում էր շինարարության ժամանակ տան հիմքերը փորելիս և պատերը շարելիս, երբ ազգակից երիտասարդները առանց հրավերի հավաքվում, բանվորություն էին անում. տանտիրոջ միակ ծախսը նրանց կերակրելն էր: Հողանքի ժամանակ, բացի ազգական տղամարդկանցից, ձրի օգնության համար հավաքվում էր գյուղի երիտասարդության մեծ մասը:

Ազգի և համայնքի օգնությունն անխուսափելի էր ջրաղացի և ձիթհանքի քարերի տեղափոխման ժամանակ: Տեղափոխումը կատարվում էր գլորելով, ուսելով, բալխիրներով քաշելով և «ճախարակ» կոչվող սարքի միջոցով:

Նշված բոլոր դեպքերում պահպանվում էր ազգակիցների համախմբումը, եթե այն չէր բավարարում, ստացվում էր համայնքի լայն աջակցությունը: Խմբակային այս աշխատանքն ուղեկցվում էր զվարճությամբ, իսկ վերջում կերակրվում էին ջրաղացի տիրոջ հաշվին: Համանման կոռպերատիվ աշխատանքներ էին պահանջում հասարակական նշանակություն ունեցող բազմաթիվ կառուցումները և կառուցապատումները՝ եկեղեցի, ճանապարհ, հասարակական օդա-հյուրանոցներ, կալեր, առուներ և այլն: Յուրաքանչյուր տուն պարտավորվում էր տրամադրել մեկ կամ մեկից ավելի աշխատավոր:

Փոխօգնության նման դրսևորումները՝ կողեկտիվ աշխատանքները հաճախ ներառում էին նաև ոչ արյունակից հարևաններին. բնության տարերքին են-

²⁴¹ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Գերդաստանական տունը և կենցաղը Ադձնիքի Ազնվացձոր գավառում, ԲԵՀ, թիվ 1, էջ 237-238:

թարկված տնտեսությունը, փլուզված շինությունները, ամառանոց և կամ ձմեռանոց արոտավայրային կացարանները, գոմերը և այլն կառուցելիս, հեղեղուտները, առուների հունը մաքրելիս, աղորիքի, ջրաղացի, ձիթհանքի քարերը տեղափոխելիս, որոնց անհարմար տեղանքներով տեղափոխելիս պահանջվում էր 30-40 մարդ միաժամանակ: Իսկ դրա փոխարեն կառուցողը ամառանոցային սեզոնում օգնում էր ազգականին կամ հարևանին կաթնամթերքներ պատրաստելիս և այլն: Փոխօգնությունը պարտադիր էր տարերային աղետների՝ խոտի դեզի կամ տան հրդեհման, համաճարակի հետևանքով անասունների կորստի և այլ դեպքերում, որին մասնակցում էր նաև ողջ համայնքը:

Առավել մեծ օգնություն էր ցուցաբերված տարեց և անգավակ մարդկանց ընտանիքներին: Կանայք և աղջիկներն օգնում էին տնային գործերում, բուրդ մշակելիս, իսկ տղամարդիկ դրսի աշխատանքներում:

Ինքնապաշտպանական բնագավառ. Նախնադարյան տոհմային համերաշխության այդ վերապրուկները և կոլեկտիվ գործողություններն առավել ուժգնությամբ էին դրսևորվում օտար հարձակումների ժամանակ: Մասունցի կին թե տղամարդ դուրս էին գալիս իրենց կամ հարևան գյուղերը խուժած քրդական ավազակային խմբերի դեմ՝ ինքնապաշտպանության և թալանը ետ բերելու համար՝ հաճախ տալով նաև մարդկային զոհեր: Ուստի և զարմանալի չէ, որ այստեղ այդ նպատակով գոյություն ունեւր կոլեկտիվ կազմակերպվածություն, ռազմական միջոցների՝ զենքի և զինամթերքի պատրաստման համար: Մասունում ընդհանրապես ռազմական նպատակներով նյութը լեռնավայրերից ձեռք բերելը, տեղափոխելը և տեղում մշակելը պահանջում էր կոլեկտիվ աշխատանք: Մասունում «տեղ-տեղ հովիտների մակերևույթը ծածկված էր լինում սպիտակ բորակով, որից սասունցին կարողանում էր ինքնուրույն եղանակով վառող ևս պատրաստել»²⁴²: Սպիտակ այդ բորակը ծծմբի, իսկ ծծմբի բացակայության դեպքում՝ սպիտակ սոխի և կաղամախու էմուլիի հետ խառնում էին ուտենու չոր փայտից պատրաստած ածուխին և համայնքային ինքնապաշտպանության նպատակով վառող ստանալու համար 8-12 տղամարդկանց, իսկ պատերազմական տարիներին նաև կանանց կոլեկտիվ ջանքերով սանդուղ ու վարսանդով ծեծում այն²⁴³:

Երկաթահանքերի հարուստ պաշարների շնորհիվ քաջակորով տալվորիկ-ցիների հիմնական զբաղմունքներից մեկը երկաթամշակությունն էր, աշխատանքային գործիքների, կենցաղային առարկաների և զենքի տարբեր տեսակների պատրաստումը: Նրանք այդ առարկաներն ու գործիքները վաճառում էին Մշո, Բշերի և Տիգրանակերտի դաշտերի բնակչությանը: Սակայն քրդական հափշտակություններից ապահով մնալու համար գյուղի երիտասարդները՝ յուրաքանչյուր տնտեսությունից 1-2 հոգի, շուրջ 40 տղամարդով մեկնում էին վաճառելու կամ մթերքների հետ փոխանակելու²⁴⁴:

Ոչ միայն Մասունը, այլև ամբողջ Հայաստանը նկատի ունենալով՝ Գր. Վանցյանը գրում էր. «Մի ազգ, որ դարերով գուրկ է եղել ինքնապաշտպանությունից, ճնշվել, հալածվել և կոտորվել է, չէր կարող իր գոյությունը պահպանել, եթե նորա մեջ իսպառ մեռած լինեւր հասարակական, համայնական ոգին, որ... հա-

²⁴² Մասուն (նրա նկարագրությունը, բնակիչները և նոցա բարք ու վարքը) «Արաքս», Պետերբուրգ, 1894-95, Գ. Ա, էջ 70:

²⁴³ Տե՛ս ԴԱՆ, տ. 12, էջ 26:

²⁴⁴ Տե՛ս ԴԱՆ, տ. 12, էջ 25:

մայնական և ասոցիացական սովորությունները հայ գյուղացու բարոյական տոկունության խնդրում առաջնակարգ դեր են խաղացել և դեռ խաղում են»²⁴⁵:

Լեոնային շրջաններում վաղ զարնանը, ահավոր ուժգնությամբ շարժվում էին ձյան հսկա բլուրներ՝ **հուսիներ**, որոնք հաճախ ծածկում էին անասուններով լեցուն գոմերը և փարախները՝ մարդկանցով հանդերձ: Այդպիսի պատահարների դեպքում, մարդիկ անմիջապես, առանց տարիքի ու սեռի խտրության, թիերով ու փորող գործիքներով շտապում էին դեպքի վայրը, ցրում ձյան հսկա շերտերը և փրկում ծածկվածներին:

Եղեռնից մազապուրծ ազգակիցները Հայաստանի Առաջին Հանրապետության և ապա Խորհրդային Հայաստանի սկզբնական տարիներին մինչև կոլեկտիվացումը համախմբվում և փոքր խմբերով համատեղ ժամանակավոր տնտեսություններ էին հիմնում: Դրանք երբեմնի խոշոր գերդաստանները հիշեցնող տնտեսություններ էին, որոնց հիմքում ընկած էր մերձավոր ազգանդամների՝ միմյանց միջև տնտեսական, արտադրական և բարոյական կապերն ապահովելու նպատակը: Անհրաժեշտ անասուններով և գործիքներով ապահովված չլինելով՝ ազգակից մի շարք տնտեսություններ միացնում էին իրենց մեկական եզները և արտադրամիջոցներն ու հերթով կատարում վարուցանքը, կալտումը: Թալինի և Աշտարակի սասունցիները բնակարանաշինության, այգեթողի, այգեկույթի, բերքահավաքի աշխատանքներում պահպանում էին կոլեկտիվ փոխօգնությունը, որն այժմ կատակով **հացկոք** են անվանում: Այդ նշանակում է, թե դրամական հատուցում չպահանջող աշխատավորներին պարտավոր են ըստ պատշաճի հյուրասիրել (նկ. 5)²⁴⁶:

Ազգակից ընտանիքների միասնության տարրերը վերապրուկային ձևով պահպանվեցին մինչև կապիտալիստական տարրերի վերջնական վերացումը՝ մինչև 1930-ական թվականների կեսերը: Գյուղատնտեսության կոլեկտիվացմամբ և մասնավոր սեփականության ոչնչացմամբ, ձևավորվեցին հասարակական-բարոյական նոր չափանիշներ, ներազգակցական և միջազգակցական միանգամայն նոր հարաբերություններ: Իհարկե, հին հարաբերությունները միանգամից չվերացան: Ազգակցական խմբի տնտեսական շահերի միասնությունը ձգվեց մինչև կոլեկտիվացման ավարտը, շարունակվում էին ազգակցական խմբավորումների հակամարտությունը, **թայֆական** կոիվները: Վերևից պարտադրվող կոլեկտիվացումը, սոցիալիստական համակեցության կանոնների պարտադիր կիրառումը վերջ դրին թայֆայական կամ նման բնույթի կապերին ու հարաբերություններին, որոնք դասակարգային հասարակության պայմաններում դարեր շարունակ պահպանվել էին՝ ժամանակի ընթացքում կրելով համապատասխան փոփոխություններ: Իսկ մեր օրերում փոխօգնության վերոհիշյալ ձևերի մասին այլևս խոսք չի կարող լինել, թեև ավանդապահ շրջաններում որոշ աշխատանքների ժամանակ՝ տուն կառուցելիս, այգու կամ բոստանային կուլտուրաների մշակության տեղ բացելիս և հատկապես տնային կենցաղում նկատելի է ազգակցական և հարևանական օգնությունը: Արևմտահայերով բնակեցված գյուղերում 1970-ական թվականներին մեր կողմից կատարված դաշտային ազգագրական հետազոտությունները ցույց են տալիս, որ ազգակցական և համայնքային փոխօգնության սովորությունները, ի տարբերություն հարևան այլ բնակավայրերի, նրանց կենցաղում

²⁴⁵ **Գր. Վանցյան**, Հում նյութեր հայ համայնքի ուսումնասիրության, էջ 88-89:

²⁴⁶ Տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 64-65, տ. 12, էջ 106-109:

երկար պահպանվեցին, ընդհուպ ներկա ժամանակները: Թեև դրանք արդեն կորցրել են զուտ ազգակցական փոխօգնության հին իմաստը:

Համերաշխության և համագործակցության այս սովորույթները արևմտահայոց կյանքում նրա որոշ տարրեր մինչև մեր օրերն են հարատևել խոր հնադարից, քանզի արտադրողական ուժերի ցածր աստիճանը և տեխնիկայի պարզունակությունը նրանց նաև կախման մեջ են պահել բնությունից, շրջապատող աշխարհագրական պայմաններից: Հայտնի է, որ թույլ զարգացած և անբարենպաստ բնակլիմայական պայմաններում գտնվող հասարակության կողմից բավարար քանակությամբ կենսամթերքների արտադրությունը, բնակարանային ու արտադրական կառույցների շինարարությունը, բռնակալական ռեժիմի, օտար ասպատակությունների և բնության տարերքների դեմ պայքարելը, անհնարին կլինեին առանց ազգի և համայնքի անդամների և ընտանիքների կոլեկտիվ, փոխադարձ օգնության կազմակերպման: Առանց դրան հայությունը չէր կարող տոկալ գոյության համար մղվող դաժան պայքարում: Ա.Քալանթարը դիպուկ է նկարագրել հանուն գոյատևման սասունցիների գործադրած ջանքերը. «Մասունը իր մեջ պարունակում է բնության հարստություններ, որոնց ձեռք բերելը, մարդկային ապրուստին ծառայեցնելը՝ ըստ մեծի մասի կատարվում է միայն աշխատանքով և այն էլ՝ մեծ, աննկարագրելի ծանր աշխատանքով: Եվ դա մի այնպիսի աշխատանք չէ, որ մի անգամ գործադրվեց ու վերջացավ, դա մի տաճար, մի կամուրջ, մի բուրգ շինել չէ, որ մի անգամ կատարվեց և երկար տարիների համար ծառայեց: Դա մշտական, տոկուն գործունեություն է, անքուն հսկողություն, անդադար խնամք, որոնց պակասության, որոնց բացակայության միջոցին կորչում է այդ երկրի բազմազան արդյունաբերությունը»²⁴⁷: Կ. Մարքսը աշխատանքային այդպիսի կոոպերացիաների կազմակերպմանը մեծ նշանակություն տալով գրում է. «Կոմբինացված աշխատանքի արդյունքը նման բոլոր դեպքերում կամ բոլորովին չի կարող ստացվել մեկ անհատի ջանքերով, կամ է կարող է իրագործվել միայն շատ ավելի երկար ժամանակամիջոցում, կամ միայն գաճաճային մասշտաբով»²⁴⁸:

Իսկապես հսկայական է եղել փոխօգնության դերը հայ գյուղացիության արտադրական կյանքում: Այդ պատճառով էլ ազգակցական կապերը հարևան հարաբերությունների հետ հաճախ հանդես էին գալիս միահյուսված ձևով: Ազգագրագետ Է. Կարապետյանը, քննարկելով համայնական համանման ազգագրական նյութերը, հանգել է այն եզրակացության, որ «տնտեսական փոխօգնության ձևերը՝ ինչպես հողի մշակության, այնպես էլ անասունների արածեցման ընկերությունների կազմակերպումը, իրագործվում էին հիմնականում հարևանական-տերիտորիալ սկզբունքով, սակայն ազգակցական հարաբերությունների պահպանման հետևանքով այդ ընկերությունները հաճախ համընկնում էին ազգակցական խմբերի հետ»²⁴⁹:

Այսպիսով, պատմական և ազգագրական նյութերի համադրումը ցույց է տալիս, որ XIX դարում և XX դարի սկզբների գյուղական համայնքն իր նախորդից ժառանգել էր այնպիսի գծեր, որոնք դրել էին իրենց կնիքը գյուղական համայնքի անդամների փոխհարաբերությունների վրա: Գյուղական համայնքի ներսում, նրա անդամների փոխհարաբերություններում, չնայած գույքային շերտավոր-

²⁴⁷ Ա. Քալանթար, Մասուն, Թիֆլիս, 1895, էջ 33:

²⁴⁸ Տե՛ս Կարլ Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 346:

²⁴⁹ Զ. Կարապետյան, Родственная группа «азг» у армян, Ереван, 1966, с. 95.

մանն ու սոցիալական անհավասարությանը, պահպանվում էին տոհմային կարգերից ժառանգված փոխօգնությանը և համերաշխությանը վերաբերող մի շարք սովորույթներ: Գյուղական համայնքի արտադրական հարաբերությունների մակարդակն այնպիսին էր, որ հանգում էր նրա անդամների շահերի միահյուսմանը, աշխատանքի ընթացքում սերտ կապին, համերաշխության որոշ կանոնների պահպանմանը:

Рафик Нагапетян – *Пережиточные проявления производственно-экономических товариществ родственной группы среди армян (на этнографическом материале XIX-XX вв.)*. – За прошедшие тысячелетия в производственно-экономической жизни армянского народа исключительное значение имели родственная и общинная взаимопомощь, организация производственных товариществ, совместной самообороны. Наиболее традиционной формой организации подобных товариществ, которая просуществовала до конца XIX – начала XX века, был кровный, родственный принцип. Всем родом осуществлялись такие земледельческие, животноводческие работы, как сооружение оросительной системы, вспашка и посев, сбор урожая, молотьба, доставка урожая домой, переработка продуктов, организация животноводства, молочного хозяйства, строительство жилищ, перевозка стройматериалов, прокладывание дорог, а также организация самообороны.

В сложных, порой жестоких природно-климатических условиях Армянского нагорья, при наличии лишь примитивных средств, орудий производства, в условиях постоянной угрозы жизни армянского населения и отсутствия государственности организация комплексной земледельческой, животноводческой формы хозяйствования была возможна лишь при наличии социальной организованности, создании производственных товариществ и организации взаимопомощи. Эта проблема, к сожалению, недостаточно изучена в арменоведении.

Rafik Nahapetyan – *The reflections of the remnants of the economic, productive companies, consisting of kindred groups in Armenia. (Based on the 19th- 20th centuries ethnographic data.)*. – In the last millennia the forms of kinship, communal mutual assistance as well as the management of productive companies and joint self-defense were seen as essential factors in the Armenians' lifestyle. The most archaic forms of the management of the aforementioned activities lasted up to the end of the 19th century and the beginning of the 20th and were seen as kinship, kindred principle. Such difficult labor-intensive activities demanding joint efforts like cultivation, stock raising, creation of irrigation system, ploughing and sowing, harvesting, threshing, transportation of the harvest, food processing, dairying, house building, transportation of construction materials, road building as well the act of self-defense were fulfilled jointly, i.e. by all the members of the kin.

Severe climatic and geographic conditions of Armenian highlands, the simplicity of tools and devices, the constant threats to the Armenians, the long-lasting lack of statehood, the retarded foreign social system of military feudalism were the essential obstacles that largely hindered the development of the complex economic structure of agriculture and stockbreeding. The existence of the aforementioned economic structure was only possible due to the social unity, the creation of productive companies, as well as by means of mutual assistance. The given issued is not investigated sufficiently within the scope of Armenological studies.

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր ՈՒԹ Յ ՈՒՆ

ԱՅԼԱԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵԻՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Այլադավանություն հասկացողությունը կարելի է որակել որպես որևէ ժողովրդի համար պետականորեն ընդունված կրոնական գաղափարախոսությունից կամ պետականության բացակայության դեպքում համայնքի համար պատմականորեն ձևավորված տարաբնույթ պատճառներով ընդունելի դարձած այդ նույն գաղափարախոսությունից շեղում՝ այն կազմաքանդելու և տվյալ պետությանը, ժողովրդին կամ համայնքին ազգային, հոգևոր-մշակութային արժեքներից, միակամությունից աստիճանական զրկման միտում՝ հիմնականում քաղաքական նպատակներով պայմանավորված: Անժխտելի ճշմարտությունն է, որ հոգևոր անվտանգության ապահովումն է ազգային անվտանգության ամենակարևոր պայմաններից մեկը. եթե անձի հոգին բաց լինի ազգային գաղափարախոսության քայքայմանը միտված տարաբնույթ կրոնական այլախոհ հոսանքների առջև, ապա՝ կփլուզվի նրա ազգային միասնությունը, վտանգի տակ կառնվի նրա ինքնության ապահովման խնդիրը: **Հոգու հավատի տաճարի փլուզումն ուղիղ համեմատական է ազգային հավաքականության գաղափարի փլուզմանը, որն ինչ որ տեղ նշանակում է ազգի անվտանգության խոցելիություն:**

Այլադավանության առաջացմանը պետք է մոտենալ երկու՝ պատմական անհրաժեշտության և միտումնավորության տեսանկյուններից:

Այլադավանությունը պատմական անհրաժեշտություն է դառնում, երբ արդեն իրեն սպառում է իշխող կրոնական գաղափարախոսությունը, որը միառժամանակ շարունակում է պահպանել իր իշխող դիրքը: Նրա դեմ ցանկացած նոր կրոնական այլախոհություն համարվում է դատապարտելի և նրա հեղինակներն ենթարկվում են անողոք հալածանքների: Իշխող գաղափարախոսության պայմաններում հանդես եկող նորը արդեն պետք է դիտարկել այլադավանություն, բայց այնպիսին, որի հիմքում ընկած են ժողովրդասիրությունը, մարդասիրությունը, արդարությունը, հավասարությունը: Նման այլադավանությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է: **Անկախ այն հանգամանքից, որ այն տվյալ իրավիճակում որակավորվում է աղանդավորություն, իշխող կրոնական հասարակական գիտակցությունից շեղում կամ անջատողություն, միևնույն է՝ նա հաղթում է, քանզի բերում է նորը, որի ճշտությունն ըմբռնում է ժողովուրդը և որը տեղի է ունենում կամոք Աստծո:**

Համոզվելու համար այս տեսակետի ճշտության մեջ, մի փոքր խորանանք Քրիստոնեության առաջացման նախադրյալների մեջ: Փորձենք ապացուցել, թե ինչու գնահատվելով որպես աղանդ կամ այլադավանություն իր սկզբնավորման պահին, Հիսուսի Քրիստոսի գաղափարախոսությունը այնուհետև դարձավ համաշխարհային ուսմունք: Դրա համար կարելի է բավարարվել ընդամենը երկու

փաստի մեջբերելով Նոր Կտակարանից՝ Հիսուսի Լերան քարոզը և նրա մուտքը Երուսաղեմ: Եվ սա այն պատճառով, որ դրանցով, ոչ առանց աստվածային կամ-քի Աստծո որդին դնում էր մարդկության հոգեբարոյական վերափոխման գեր-խնդիր, որը տվյալ պատմական իրականության մեջ չէր կարող ընդունելի լինել իշխող գաղափարախոսության կրողների կողմից, ուստի Հիսուսի քարոզները պետք է դիտարկվեին ոչ ընդունելի այլադավանություն և համարվեին մերժելի, բայց ոչ հանրության կողմից, որի համար նա ընդունելի էր ի սկզբանե՝ որպես Մեսիա: Ուրեմն՝ **նրա ուսմունքը տվյալ պահին դատապարտվելով որպես այլա-դավանություն, իրականում պատմական անհրաժեշտության հետևանք էր:** Այժմ ներկայացնենք հիշյալ երկու փաստերը և վերլուծելով ապացուցենք հիշյալ տե-սակետը: Այսպես, իր հետևից գնացող ժողովրդի մեծ բազմությունը տեսնելով, Հիսուսը լեռն է բարձրանում և իր մոտ են գնում իր աշակերտները, որոնց ներկա-յացնում է փաստորեն իր գաղափարախոսության հիմքերը: Դրանք են.

Առաջին. Սգավորների մխիթավելու, հեգության, արդարության, մաքրությ-յան, խաղաղության անհրաժեշտության կարգախոսներ, որոնք համամարդկային արժեքներ են²⁵⁰:

Երկրորդ. Արդարությունը կենսագործունեության ամենագլխավոր պա-մանն է, որի՝ իր աշակերտների քարոզությունը պետք է գերազանցի իշխող գա-ղափարախոսների՝ դպիրների և փարիսեցիների արդարության քարոզչությանը, որը կեղծ էր: Կասկած չի կարող լինել, որ այդ կեղծության համոզմունքն ուներ ժողովուրդը, որի ըմբռնողականությամբ էր գործում Հիսուս:

Երրորդ. Սպանությունը դատապարտելի արարք է, եղբայրասիրությունը՝ դրվատելի՝ «Ով իր եղբորը պարապ տեղը սրդողի, դատաստանի պարտաւոր պի-տի ըլլայ: Ով որ իր եղբորը Յիմար ըսէ, ատեանին պարտաւոր պիտի ըլլայ: Ով որ **իր եղբորը** անմիտ ըսէ, գեհենի կրակին պարտաւոր պիտի ըլլայ»²⁵¹:

Չորրորդ. Ապաբարոյականությունը կամ շնությունը դատապարտելի երևույթներ են, յուրաքանչյուր ոք պետք է կամք ունենա իր մեջ զսպելու նման ցանկությունը:

Հինգերորդ. Չարին բարությամբ հաղթահարելու, թշնամուն սիրելով նրան բարեփոխելու գաղափարը:

Վեցերորդ. Բարի և ողորմած լինելու անհրաժեշտության ներշնչումը և այլն:

Մեկնության կարիք ունեն Լերան Քարոզի վերջում Հիսուսի արտասանած հետևյալ խոսքերը. «Այն որ այս իմ խօսքերս կը լսէ ու չի կատարեր, կը նմանի անխելք մարդու մը, որ իր տունը ավազի վրա շինեց»²⁵²:

Սա նշանակում է՝ հորդոր լսելու Աստծու նոր խոսքը, որն ուղղված է այլա-սերված բարքերի և սպառված հոգևոր քարոզների դեմ, որը բերում է Հիսուս Քրիստոսը, նշանակում է այդ հնի պահապանների կողմից նորի հանդեպ ան-հանդուրժողականության աճ, որը պետք է հասներ մեսիան դատապարտելի այ-

²⁵⁰ Նոր Կտակարան Մեր Տէր Հիսուս Քրիստոսի, Աւետարան ըստ Մատթէոսի, տե՛ս Աստուածա-շունչ, Գիրք Հին Եւ Նոր կտակարաններու, Հրամանաւ Տ. Տ. Վազգենի Առաջնոյ Վեհափառ Եւ Սրբազ-նագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Եբրայական Եւ Յունական բնագիրներէն Թարգմանուած, Moscow, «Zeus», «Major», itd.. 1994, էջ 5:

²⁵¹ Նույն տեղում, էջ 5 – 6:

²⁵² Նույն տեղում, էջ 9:

լադավանություն մատուցելու անհրաժեշտության թյուր ըմբռնմանը: Այլադավանություն, որը ժողովրդի սրտից էր գալիս և մտքից, բայց ոչ իշխող հոգևոր իշխանության: Ահա այս այլադավանությունը պատմական անհրաժեշտություն էր, որի ընդհանրության հասնելը կասկածից զերծ էր, քանզի հոգևոր, ֆիզիկական անվտանգության ամրապնդման նոր հիմքեր էր բերում, որոնք հետո պետք է բերեին ազգային անվտանգության ամրապնդման:

Իսկ իր Երուսաղեմ մուտքով Հիսուս արդեն ծառանում է իրեն սպառող գաղափարախոսության դեմ բացահայտորեն: Դրանում համոզվելու համար բավարար կարելի է համարել հետևյալ մեջբերումը. «Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ որ որբեւայրիներուն տուները կ'ուտեք ու մարդոց երեւնալու համար աղօթքը կ'երկնցնէք, անոր համար աւելի դատապարտութիւն պիտի ընդունիք: Վա՛յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը պարտիք մէկը նորահաւատ ընելու ու երբ ըլլայ, զանիկա ձեզմէ երկու անգամ աւելի գեհեների որդի կ'ընէք: Վա՛յ ձեզի կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք թէ՝ Ով որ տաճարին վրայ երդում ընէ, նան մը չէ, բայց ով որ տաճարին մէջի ոսկիին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: Ով յիմարներ եւ կոյրեր, ո՞րը մեծ է, ոսկի՞ն, թէ տաճարը, որ կը սրբացնէ ոսկին: Եւ թէ. “Ու որ սեղանին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: Յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է՝ պատարա՞գը, թէ սեղանը, որ կը սրբացնէ պատարագը: Ուստի ով որ սեղանին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ եւ անոր վրայի ամէն բաներուն վրայ: Եւ ով որ տաճարին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ եւ անոր մէջ բնակողին վրայ: Եւ ով որ երկնքի վրայ երդում կ'ընէ, երդում կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ եւ անոր վրայ նստողին վրայ...»²⁵³:

Իշխող գաղափարախոսության սպասավորների կեղծավորությունը բացահայտելու Հիսուսի աստվածահաճո համարձակությունը, այսպիսով, միանգամայնորեն հիմնավորված էր, քանզի այդ գաղափարախոսությունը իրեն լրիվ սպառել էր հոգևոր և ազգային անվտանգությունների առումներով: Նոր, այլընտրանքային գաղափարախոսությունը դարձել էր անհրաժեշտություն, որը տվյալ պահին ժողովրդի համար աստիճանաբար դառնալով ընդունելի, չէր կարող լինել հանդուրժելի, ուստի այն դիտվեց վտանգավոր այլախոհություն և Հիսուս մատնվեց խաչի: Բայց նրա գաղափարախոսության համամարդկային վեհ արժեքների ընդհանրության հասնելու նախապայմաններն արդեն ստեղծված էին և նրա ուսմունքը առավել կյանք առավ իր իսկ խաչելությամբ և հիմք դարձավ հասարակական նոր գիտակցության:

Այս ամենից եզրակացությունն, այսպիսով հետևյալն է՝ այլադավանությունը կարող է հանդես գալ որպես պատմական անհրաժեշտություն այն դեպքում, երբ իշխող գաղափարախոսության ինքնասպառման միտումներն արդեն մեծամասամբ ընկալելի են և տեսանելի: Այն արդեն դադարել է հոգևոր անվտանգության երաշխիք հանդիսանալ, իսկ սա նշանակում է՝ նաև ազգային, քանզի հոգևորի փլուզումը ենթադրում է ազգայինի փլուզում նաև, քանի որ յուրաքանչյուր ազգի անվտանգության հիմքը նրա համար ընդունելի դարձած գաղափարախոսությունն է:

²⁵³ Նույն տեղում, էջ 34:

Այսպիսով, այլադավանության դեմ պայքարը միշտ էլ եղել է, բայց նրա պատմական անհրաժեշտությամբ պայմանավորված լինելու դեպքում, այդ պայքարը ավարտվել է պարտությամբ: Եվ դրա լավագույն ապացույցն է Հիսուս Քրիստոսի առաքելության օրինակը:

Այժմ փորձենք գտնել այն հարցի պատասխանը, թե որ դեպքում է այլադավանության մերժումը և դատապարտումը պատմական անհրաժեշտություն: Բնականաբար, այն դեպքում, **երբ ի հայտ է գալիս ոչ իրեն սպառած, այլ՝ կենսունակ հոգևոր գաղափարախոսության առկայության պայմաններում և ունի միավաճություն՝ քայքայելու այն:**

Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունելուց հետո, աստիճանաբար այն դարձավ ազգային, որին քիչ չնպաստեց հայոց գրերի գյուտը: Այս մեծ իրադարձությանը հաջորդեց Թարգմանչաց շարժումը, որի արդյունքում ծնվեց հայատառ Աստվածաշունչը՝ Թարգմանությունների Թագուհին: Աստվածաշնչի թարգմանությամբ ժողովրդի ավելի լայն զանգվածներին հասու դարձավ Հիսուսի ուսմունքը: Քրիստոնեության ազգայնացմանը նպաստեցին նաև հայոց եկեղեցական ժողովները, որոնցից մասնավորապես 354թ. Աշտիշատի ժողովը հեթանոսական շատ ծեսեր սրբագործելով, քրիստոնեական գաղափարախոսությունն էլ ավելի մոտեցրեց հայոց հոգիներին: Աստիճանաբար հայոց մեջ սերմանվելով, այս ուսմունքը դարձավ հայապահպանության երաշխիք, որի ամրակոտ պահելու գիտակցությունը ուղիղ համեմատական էր դառնում ազգապահպանության գիտակցությանը: Այս պայմաններում ցանկացած այլադավանություն կամ կրոնական այլախոհություն պետք էր դիտարկել որպես վտանգ պետականությանը կամ ազգապահպանությանը, այլ արտահայտությամբ՝ ազգային անվտանգությանը: Ուստի, պայքարը դրանց դեմ քրիստոնյա Հայաստանի և հայության ողջ պատմության ընթացքում պետք է դիտարկել անհրաժեշտ և օրինաչափ: Փորձենք ապացուցել այս ամենը՝ անդրադառնալով հայոց ազգովին քրիստոնյա լինելու պայմաններում առաջ եկած հերձվածների, այլադավանության կամ աղանդավորության էությունը և նպատակներին, քանզի կհամոզվենք, որ իրոք դրանք վտանգում էին հայի ինքնությունը և անվտանգությունը:

Կրոնական գաղափարախոսության որևէ ժողովրդի գերակշռող մեծամասնության կողմից ընդունելի լինելու դեպքում, այլադավանությունն, ինչպես պարզ դարձավ, հետամուտ է մեկ գլխավոր նպատակի՝ որքան հնարավոր է քայքայել այդ գաղափարախոսությունը և վտանգել տվյալ ժողովրդի ազգային անվտանգությունը: Հարկավ, կարող են լինել այնպիսի կրոնական այլախոհներ, որոնք խնդրին մոտենում են իմաստասիրական տեսանկյունից, առանց արտաքին ներշնչող ուժերի, փորձելով տեսական հիմքեր կառուցել՝ ժխտողականության սկզբունքով: Բայց կարծում ենք, որ դրանք նույնպես դատապարտելի են՝ եթե պետական կրոնը ժողովրդի համար բացարձակապես ընդունելի է:

Քրիստոնեության՝ որպես հայոց պետական և ազգային կրոնի ամրապնդման գործընթացին զուգընթաց, մեր պատմության ընթացքում ծագել են նրա որոշ դրույթներ ժխտող կամ նրանից շեղվելու անհրաժեշտությունը հիմնավորել փորձող այլադավան ուսմունքներ: Փաստորեն դրանք վերաբերվել են՝ ա. ամբողջ գաղափարախոսությանը, բ. նրա առանձին ծեսերին, հիմնավորումներին և բնականաբար նաև Եկեղեցուն:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ դրանք ծագել են Հայաստանի ներսում կամ եղել են արտաքին ազդեցությունների հետևանք: Հարկավ, մենք այս հոդվածի շրջանակներում չենք անդրադառնա այս այլադավանությանն ամենայն մանրամասնությամբ, այլ՝ կփորձենք բացահայտել բացասական հետևանքները ազգային անվտանգության առումով:

Այսպես, 7-րդ դարում սկզբնավորվում է պավլիկյան շարժումը, սկզբնական շրջանում կարծես սոսկ դավանաբանական այլակարծության հիմքով, բայց աստիճանաբար այն կրում է քաղաքական ուղղվածություն: Պավլիկյան շարժումը ծագել է Արևմտյան Հայաստանում, ապա՝ տարածվել է Բյուզանդական կայսրության արևելքում, նաև թափանցել է Արևելյան Հայաստան: Այս աղանդի պատմությունն սկզբից մինչև 869-870թթ. գրել է հույն վանական Պետրոս Սիկիլիացին²⁵⁴:

Հարկ ենք համարում շեշտել, որ պավլիկյան աղանդը իր էությամբ հակաքրիստոնեական չէր, բայց միտվածություն ուներ հարվածելու Հայ Եկեղեցուն, որը որպես հոգևոր իշխանություն, կատարում էր ազգահավաքման և ազգապահպանման դեր: Մակայն, ընդունելով Հիսուսին, նրանք միանգամայն այլ կերպ էին բացատրում նրա ծագումն ու էությունը: Հայտնի է, որ նրանք ընդունում էին երկու՝ Բարի և Չար աստվածների: Այն ինչ տեսանելի էր, նրանք համարում էին Չար Աստծո ստեղծածը, իսկ անտեսանելին՝ Բարու, որը վերաբերվում էր բանականությանը: Ըստ նրանց՝ Քրիստոսը Բարի, երկնային Աստծո որդին էր: Նրանց կարծիքով Քրիստոս իր մարմինն իր հետ բերում է երկնքից, իսկ Մարիամը սոսկ խողովակի դեր կատարեց, որի միջով նա անցավ, ուստի նա աստվածածին չէ²⁵⁵: Սրանով, նրանք փաստորեն հակադրվում էին Նոր Կտակարանի դրույթներին, որոնք ընդունելի էին Հայոց Եկեղեցու կողմից: Նրանք Հին Կտակարանն ամբողջությամբ մերժում էին՝ համարելով սատանայի ստեղծագործություն, մարգարեներին համարում էին ավազակներ և մոլորեցնողներ, չարի սպասավորներ, մերժում էին նաև եկեղեցին՝ այն համարելով՝ «դների կացարան», ինչպես նաև հոգեվորականների ամբողջ դասը, մկրտությունը, հաղորդությունը և այլն: Նրանց գաղափարախոսության մանրամասն վերլուծությունը թողնելով այլ առիթի, պարզապես ուզում ենք հետևյալ եզրակացությունները մատուցել.

Առաջին. Մի կողմ թողնելով այդ գաղափարախոսության վիճահարույց կողմերը, պետք է պնդել, որ կրոնը չի կարող իր ազգապահպանման առաքելությունը իրագործել՝ առանց ունենալու իր հաստատությունը, տվյալ դեպքում եկեղեցին: Առանց հոգևոր հաստատության և նրա գործառնությունների՝ չի կարող ընդհանրության հասնել հոգևոր միավորման անհրաժեշտության գաղափարը:

Երկրորդ. Նրանց գաղափարական «առաքելությունը» իրականում միտված էր քաղաքական առաքելության, այսինքն՝ փոխարինել Հայոց Եկեղեցուն կամ իշխող կրոնական գաղափարախոսությանը՝ աստիճանաբար իր ձեռքը վերցնելով նրա հոգևոր իշխանության գործառնությունները:

²⁵⁴ Բնագրի քննությունը տե՛ս *Ch. Astrue, W. Conus – Wolska, J. Gouilllard, P. Lemmerle. D. Papachrysanthou, J. Paramelte*, Les sources grecques pour l'histoire des Pauliciens d'Asie Mineure, „Travaux et Memoires”, du Centre de Recherche d'Histoire et Chivilisation byzantines, No 4, Paris, 1970, p. 7-67, **Ք. Բարտիկյան**, Источники для изучения истории павликянского движения, Ережан, 1961, с. 117-150, Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. 1-ին, Երևան, 1981, էջ 743 – 769:

²⁵⁵ **Ք. Բարտիկյան**, նշվ. աշխ., ժ. 205-207:

Երրորդ. Պավլիկյանները բերում էին այլադավանություն, որը վտանգավոր էր ոչ միայն հոգևոր, այլև՝ ազգային - անվտանգության տեսանկյունից, ուստի և մերժելի էր:

Ասվածն ավելի հիմնավորելու համար անդրադառնանք նաև Թոնդրակյան աղանդին: Այն ծագել է 9-րդ դարում՝ հիմնադիր ունենալով Օադկոտն գավառի Զարեհավան գյուղից Սմբատ Զարեհավանցուն, որն իր աղանդի կենտրոն դարձրեց Թոնդրակ ավանը: Ըստ Գրիգոր Մազիստրոսի՝ նա իր «չար մոլորությունը» սովորել է «ումեմնե պարսկական բժշկե և յաստղեբաշխե մոգե գոր Սջուսիկդ կոչեք»²⁵⁶:

Զանց առնելով նրա գործունեության մանրամասները, ներկայացնենք այս աղանդի գաղափարախոսության այն կողմերը, որոնք դարձյալ վնաս էին ազգապահպանման այն հայեցակարգին, համաձայն որի **քրիստոնեությունն է մեր արժեքային համակարգի հիմքը, նա է մեր ազգային անվտանգության հիմնական երաշխիքը, մանավանդ պետականության բացակայության ժամանակաշրջանում**: Իսկ ահա Գրիգոր Նարեկացու վկայությամբ, թոնդրակյանները ուրացել էին «բազում ինչ աստվածային և ամենայն ինչ առաքելական» էր²⁵⁷:

Փաստորեն, նրանք ժխտել են Հայ Առաքելական Եկեղեցին և հավատամքը: Նույն Նարեկացին 14 կետերով թվարկելով նրանց ուսմունքի հիմնական կողմերը, վերջին կետով հաստատում է, որ աղանդի կողմնակիցները Քրիստոս են համարել իրենց աղանդի գլխավորին, այսպիսով այն համոզմունքը փորձելով առաջ բերել, որ Քրիստոս Աստված չէր և Զարեհավանցին պահանջել է, որ իրեն երկըրպագեն որպես Աստծու և Քրիստոսի²⁵⁸:

Զարեհավանցու կրոնական գաղափարախոսության առանձին դրույթների քննադատությունը հիմնավոր էր այն տեսանկյունից, որ նրանք նույնպես, ինչպես պավլիկյանները, ընդդեմ Հայոց Եկեղեցու, որը ժողովրդի կողմից ընդունելի հոգևոր հաստատություն էր, ստեղծում էին իրենց սեփական հաստատությունները, փաստորեն պառակտելով հավատի և ազգի միասնությունը: Դրանում մի ավելորդ անգամ համոզվելու համար, բավական է Լաստիվերցու այն վկայությունը, որ թոնդրակյանները ձևացնելով, թե մեր կրոնին են հետևում, մոլորեցնում էին անմեղների միտքը, քանի որ նրանց խոսքերը քաղցկեղի նման էին և ինչպես դժվար էր այդ ախտի բուժումը, այնպես էլ նրանց գաղափարախոսությամբ բռնվածների, որոնք «հազիւ կարեն կալ յակաստանի» (հազիվ թե անվտանգ մնան – Գ.Ա. Խ.)²⁵⁹:

Ինչպես դարձյալ համոզվում ենք՝ նրանք խփում էին հայի հոգևոր և ազգային անվտանգությանը, արհեստականորեն գործելով ինքնամատուցման այն ճանապարհով, որ իրենք կարող են լինել այդ անվտանգության երաշխիքը:

Այսպիսով, **թոնդրակյանների այլադավանությունը հակադարձ համեմատական էր հայ ժողովրդի հոգևոր միասնության գաղափարին, որի բացակայությամբ սասանվում են նրա ազգային անվտանգության հիմքերը**:

²⁵⁶ Գրիգոր Մազիստրոսի թղթերը, ի լույս ընծայեց **Կ. Կոստանեանց**, Աղեքսանդրոպոլ, 1910, էջ 153:

²⁵⁷ Գիրք թղթոց, Տփղիս, 1901, էջ 499:

²⁵⁸ Նույն տեղում, էջ 499-501:

²⁵⁹ Պատմություն Արիստակեսի Լաստիվերցվոյ, աշխ. **Կ. Յուզբաշանի**, Երևան, 1963, էջ 133:

Այլադավանությունը հաճախ ներմուծվում է նաև դրսից՝ պայմանավորված թշնամի տերության աշխարհաքաղաքական շահերով: Դրանում համոզվելու համար բավական է բերել Կիլիկիայի հայկական թագավորության վերջին շրջանում ժողովրդի հոգևոր կյանքում առկա խմորումների օրինակը, որոնք հրահրում էր Բյուզանդական կայսրությունը: Խնդիրը վերաբերվում էր նրան, որ իշխող քաղաքական ուժերը 14-րդ դարի սկզբներից լուրջ տարաձայնություններ ունեին հարևան տերությունների նկատմամբ կողմնորոշումների երկփեղկվածության պատճառով: Մասնավորապես Օշինի (1308 - 1320) գահակալման շրջանում երկրում ուժեղացան լատինամոլ տարրերը, որոնց թաքուն հրահրում էր Բյուզանդիան: Վերջիններս, որոնց մեջ մտնում էին արքունիքի հեղինակավոր անձինք, նույնիսկ որոշ բարձաստիճան հոգևորականներ, սկիզբ դրեցին այսպես կոչված ունիթորական հոսանքին, որը կարելի է դիտել որպես այլադավանություն, քանզի փորձում էր հիմնավորել Հայ Եկեղեցուն Հռոմի պապին ենթարկելու անհրաժեշտությունը: Մա նշանակում էր հրաժարում առաքելահաստատ հավատից, որի դեմ դուրս եկավ հոգևորականության և ժողովրդի մեծ մասը: Նույնիսկ 1307թ. Միս քաղաքում տեղի ունեցած ժողովը որոշում է կայացնում այդ մասին, որն հանգեցնում է ընդլզումների Ադանայում 1308 և 1309թթ.²⁶⁰: Պապի դրդմամբ 1316թ. Ադանայում տեղի ունեցավ նոր ժողով, որի նպատակն էր ընդունել տալ նրան ենթարկվելու կամ փաստորեն կաթոլիկություն ընդունելու որոշումը, որին ձգտում էր Օշինը, ինչպես նաև Կոստանդին կաթողիկոսը: Այն նույնպես հանգեցրեց ցույցերի և բողոքների, որոնք թագավորի կողմից ճնշվեցին, բայց բացառեցին սեփական հավատը փոխելու քայլերի հնարավորությունը նաև հետագայում: Այս ամենը ներմուծված լինելով դրսից և ազգային անվտանգության կեղծ երաշխիքի հույսեր ներշնչելով, միայն այն հետևանքն ունեցավ, որ մեծ հարված հասցրեց այդ անվտանգությանը, հասրակությամբ, իշխող քաղաքական և հոգևորական ուժերին պառակտեց, ինչն իր նշանակությունն ունեցավ այդ ինքնատիպ և հզոր պետականության անկման գործում 1375 թ-ին: Այսպիսով, այլադավանության արտաքին և ներքին քարոզչությունը ուժգին հարված հասցրեց հայ ժողովրդի հոգևոր և ազգային միասնության գաղափարին, որի հետևանքները ավելի ուշ գիտակցվեցին: Այն համոզմունքն ավելի ամրապնդվեց, որ **Հայոց Առաքելական Եկեղեցու հանդեպ հավատի անսասանության մեջ պետք է փնտրել նրա գոյատևման հիմնական երաշխիքներից մեկը:**

Եվ վերջապես, կարևոր ենք համարում նաև անդրադառնալ այն խնդրին, թե այլադավանությունն ինչպիսի հարված է հասցնում մեր հոգևոր և ազգային անվտանգությանն այսօր: Խորհրդային Միության փլուզումից հետո, հայտնի է, որ նախկին խորհրդային շատ հանրապետություններ, այդ թվում նաև Հայաստանը հայտնվեց այլադավանության գրոհի վտանգի տակ: Դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ.

Առաջին. ԽՍՀՄ փլուզումով արտերկրի բազում աղանդավորական կամ այլադավանական կազմակերպություններ իրենց համար գտան գործունեության լայն և խոպան դաշտ:

Երկրորդ. Այդ գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծեցին մարդու իրավունքների գերակայության վերաբերյալ կարգախոսները, որոնք բնականաբար տարածվում էին նաև դավանանքի ազատության վրա:

²⁶⁰ Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1813 - 1814:

Երրորդ. Հայ ժողովրդի սոցիալական դժվարին կացությունը, որի պայմաններում հեշտանում է հոգևորությունը, մանավանդ, եթե ընթանում է նյութապես շահագրգռելու զուգորդությամբ:

Չորրորդ. Քաղաքական նպատակադրումներով պայմանավորված այլ կրոնական գաղափարախոսություն կրող դրսի կազմակերպություններ ձգտում են պառակտել մեր ազգը, սասանել նրա հավատը, որը մասամբ նրանց այսօր հաջողվում է:

Եվ եթե այսօր Հայաստանում տասնյակ հազարավոր հայեր շեղվել են իրենց Եկեղեցուց և հավատից, ապա նրանց համար երկրորդական է դարձել ազգային անվտանգության խնդիրը: Նրանց հոգևոր վերադարձը դեպի Հայ Առաքելական Եկեղեցու գիրկ՝ հայոց նորանկախ պետականության անսասանության ամենակարևոր գրավականներից է:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը, գալիս ենք հետևյալ հիմնական եզրահանգումներին.

Առաջին. Այլադավանությունը պատմական անհրաժեշտություն է դառնում այն ժամանակ, երբ իշխող կրոնական գաղափարախոսությունն իրեն արդեն սպառում է հոգևոր և ազգային անվտանգության տեսանկյուններից:

Երկրորդ. Կրոնական գաղափարախոսությունը երբ ժողովրդի մեջ հասնում է ընդհանրության, նրա դեմ ուղղված բոլոր այլ գաղափարախոսությունները պետք է դիտարկել որպես ազգային ինքնության քայքայմանը միտված վտանգավոր և դատապարտելի փորձեր:

Երրորդ. Դավանանքի ազատությունը այնքան ժամանակ կարող է լինել հանդուրժելի, եթե այն չի վնասում այնպիսի հոգևոր – մշակութային արժեքների, որոնք հատուկ են տվյալ ազգին, ժամանակի մեջ քննություն են բռնել, դարձել են ինքնության պահպանման երաշխիք:

Այլադավանության դեմ պայքարի գիտակցությունը պետք է հասցնել ընդհանրության, եթե հայության ազգային անվտանգությանը վտանգ է սպառնում:

Григор Абега Хачатрян – *Борьба против иноверия как важнейшее условие духовной и национальной безопасности.* – В статье обсуждаются основы происхождения иноверия, указываются, в каких же случаях эти проявления закономерны, а в каких осуждаемы. В итоге философского анализа делается попытка доказать в каких же случаях иноверность вредит национальной безопасности. Борьба против иноверия считается важнейшим условием для духовной и национальной безопасности.

LES CARACTÉRISTIQUE FONDAMENTALES DU DISCOURS POÉTIQUE

ANGELA VANESYAN

Le langage poétique représente un phénomène compliqué qui n'est pas bien étudié par la linguistique et par la littérature. Un texte poétique possède une organisation spécifique où tous les éléments dépendent successivement l'un de l'autre.

Parmi les caractéristiques les plus importantes de la poésie on pourrait mentionner:

1. La couleur émotionnelle, l'attitude subjective du sujet de la parole envers les faits, idées et événements que la poésie relate.

2. La structure compositionnelle homogène des vers qui forment le poème, le rôle prépondérant de la mélodie, les répétitions fréquentes.

3. L'importance de l'aspect imagé, une relation étroite entre l'organisation sémantique et stylistique du poème et le genre poétique (ballade, élégie, poème lyrique etc).

4. La couleur émotionnelle du lexique, la mise en valeur des mots grâce à la place qu'ils occupent au sein du vers.

On pourrait mentionner aussi la présence des pauses, le rythme lent et scandé de la lecture etc.

La différence entre la prose et la poésie consiste, avant tout, en une relation spécifique qui s'établit en poésie entre tout le poème et ses fragments. Pour la prose les propriétés rythmiques et phonétiques du texte n'ont pas aussi d'importance que pour la poésie où chaque élément sert à former le rythme spécifique du poème et sa rime. Un poème possède un sens achevé, complet même quand il ne se compose que de deux lignes. Le sens poétique se caractérise par la suggestivité et l'impressivité (termes de Jules Marouzeau), ce qui veut dire qu'il évoque des images et produit une impression esthétique sur le lecteur.

L'essence d'une oeuvre poétique est formée par ses aspects émotionnels et rythmiques. La poésie reflète un «mouvement de l'âme» par une combinaison spécifique des éléments verbaux avec l'intonation poétique. L'image qui est la notion de base pour la poésie est souvent ambivalente et engendre une multitude d'interprétations.

Le rythme et la rime dans le discours poétique.

Le caractère fixe de l'accent en français explique le fait que les stylisticiens français lient avant tout le rythme avec la mise en place des accents parce que ce sont des syntagmes qui structurent les poèmes français.

Le système syllabique sous son aspect classique prévoit le nombre équivalent des syllabes dans chaque ligne poétique. La rime masculine prédomine parce que le plus souvent le vers se termine par l'accent mis sur la syllabe finale. La rime féminine

apparaît grâce à la prononciation du «e» muet qui déplace l'accent sur l'avant-dernière syllabe (Marouzeau, p.172): *Sous le vent qui chasse/Sous le vent qui chante;/Le coeur lourd dépasse/L'esprit qui le hante* (P.Reverdy).

Le discours poétique se subdivise en segments de longueur identique qui divisent l'information poétique en quelques fragments. Cette division ne tient pas toujours compte de la segmentation syntaxique du discours:

*Je crains pas cette nuit Je crains pas le sommeil
absolu ça doit être aussi lourd que le plomb
aussi sec que la lave aussi noir que le ciel
aussi sourd qu'un mendiant bêlant au coin d'un pont*
(R.Queneau)

Le rythme l'emporte sur toutes les autres particularités du texte poétique. Le contenu logique et conceptuel du poème, son organisation verbale et syntaxique, son potentiel esthétique sont soumis au rythme des vers. Les mots mis en relief au moyen du rythme et de la rime grâce à l'assonance phonétique ou la parenté sémantique acquièrent une valeur symbolique et un poids notionnel considérable qui se trouvent à la base du code poétique, de l'ambiguïté voulue du sens des poèmes.

Dans le fragment qui suit du poème «Ballade» de P.Claudel le rythme du poème traduit le mouvement des vagues et en même temps la dynamique des émotions humaines:

*Rien que la mer à chaque côté de nous, rien que cela qui monte et qui descend!
Assez de cette épine continuelle dans le coeur, assez de ces journées
goutte à goutte!
Rien que la mer éternelle pour toujours, et tout à la fois d'un seul coup !
la mer et nous sommes dedans!
Il n'y a que la première gorgée qui coûte.*

La répétition consiste en réutilisation d'un élément formel ou sémantique dans le cadre du même contexte. Le parallélisme qui représente une variété de la répétition consiste en réutilisation d'une combinaison des éléments.

La poésie emploie des répétitions spécifiques de la formation du rythme, des combinaisons de sons et de lettres, des images verbales et des parallélismes syntaxiques:

*J'ai vécu dans ces temps et depuis mille années
Je suis mort. **Je vivais** non déchu mais traqué.
Toute noblesse humaine était emprisonnée
J'étais libre parmi les esclaves masqués.*
(R. Desnos)

La répétition poétique est un moyen de la structuration des vers et de la mise en relief des images poétiques : *Bouquet du premier jour lilas lilas de Flandres* (L.Aragon); *Passent les jours et passent les semaines* (G.Apollinaire) ;y); *La mer, la mer, toujours*

recommencée (P.Valéry); *O mois de floraisons mois de métamorphoses* (L.Aragon); *Que voulez-vous la porte était gardée/ Que voulez-vous nous étions enfermés/Que voulez-vous la rue était barrée* (P.Eluard); *Je crains pas cette nuit Je crains pas le sommeil...*(R.Queneau).

Quant à la rime, elle peut être définie comme une répétition conventionnelle des sons à l'issue d'une ligne poétique. Toutes ces rimes forment une série des formes liées par des relations de similitude sonore. La parenté phonique de certaines formes présente un risque de banalisation d'un texte poétique : les rimes les plus faciles à trouver, les plus repérables et trop reconnaissables privent la communication poétique de son caractère original et novateur. Un répertoire assez stéréotypé des rimes peut être illustré par la poésie suivante et sa traduction:

Il se peut qu'un rêve étrange
Vous aît occupé ce soir
Vous avez cru voir un ange
Et c'était votre miroir
(M .Jacob)

Le rythme, la rime et l'assonance contribuent à structurer l'architecture poétique:

Il aurait voulu ce bouquet comme la gloire
Jouer dans d'autres mers parmi tous les dauphins

Et l'on tissait dans sa mémoire
Une tapisserie sans fin
Qui figurait son histoire
(G.Apollinaire)

Il existe des variétés différentes de la rime; p.ex. rime paire (couplée) ou rime croisée, rime nominale ou rime verbale:

Et l'âme sans gloire
Qui demande à boire,
Le fil de nos jours
Chaque jour plus mince,
Et le coeur plus sourd
Les ans qui le pincent
(J.Supervielle)

Il existe aussi des vers libres qui se construisent sans rimes étant entièrement basés sur le rythme poétique.

Le lexique traduit le sens du poème alors que l'organisation métrique relate la tradition poétique à laquelle un poème s'inscrit. En général, moins le rythme est compliqué, plus le poème est proche du chant folklorique. Cl. : les deux quatrains du poème de Tardieu:

*Dépêche-toi de rire
il est encor' temps
bientôt la poêle à frire
et adieu le beau temps.*

*D'autres viendront quand même
respirer le beau temps
c'est pas toujours les mêmes
mais y a toujours des gens.*

La structure du poème cité repose sur la strophe à six syllabes typique pour les chansons populaires. Les moyens d'expression familiers (*encor'*, *y a*) accentuent cet aspect. Evidemment le vers alexandrin (8 syllabes) correspond à des structures poétiques plus compliquées.

BIBLIOGRAPHIE

1. Bally Ch., *Traité de stylistique française*, Paris : La collection «Que sais-je?» – Paris : Presses universitaires de France, 1994. – 128 p.
2. Adam J.M., *Le style dans la langue*, Delachaux/Nestlé, Lausanne-Paris, 1997.
3. Jakobson R., *Essais de linguistique générale*, Paris: Editions de Minuit, 2003. – 222 p.
4. Barthes R., *L'ancienne rhétorique*, Communications n° 16, sept. 1978, pp. 7-12.
5. Beacco J.C. et Darot M., *Analyse de discours et lecture de textes de spécialité*, multigr, Paris: BELC, 1977. – 84 p.
6. Benveniste E., *Problèmes de linguistique générale*, tome 1, Paris : Gallimard, 2001. – 207 p.
7. Bruneau Ch., *Les théories de la stylistique*, «Romance Philology», V, 1951, pp. 45-78.
8. <http://dic.academic.fr/dic.nsf/logic/>

Անժելա Վանեսյան – Բանաստեղծական խոսքի հիմնական առանձնահատկությունները: – Ընդհարապես բանաստեղծությունն իրականության զգացմունքային վերապրումն է, այսինքն՝ օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ վերարտադրություն: Սակայն ամեն մի բանաստեղծություն առանձնահատուկ և անկրկնելի է առաջին հերթին բանարվեստային (պոետիկական) հատկանիշներով, իր արտահայտության ձևով, որը և դարձրել ենք քննության առարկա:

Հոդվածում քննարկվում են բանաստեղծության ժանրային, ոճական ու տաղաչափական հիմնական առանձնահատկությունները՝ ձևը և բովանդակությունը՝ բանաստեղծության ոճն ապահովող գրողի լեզվամտածողության համակարգը, պատկերավորության միջոցները, բանաստեղծական խոսքի կառուցվածքային հատկանիշները՝ վանկը, հանգը, ռիթմը և այլն:

ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

ԱԼԻՄԱ ՀԱՍԱՆՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայրենիքի պաշտպանության գաղափարը բարձրագույն չափանիշ էր ու խոր հավատամք: Վտանգի ահեղ պահին կատարվեց հայրենիքի վերահայտնագործում: Հայ ժողովուրդը պատերազմին մասնակցում էր իր պատմության հեռավոր ու մոտավոր անցյալի վերհուշը սրտում: Մեզ համար Երկրորդ համաշխարհային ընկալվեց իբրև արյունոտ եղեռնի օրգանական շարունակություն, մի պայքար, որ մղվում էր հանուն գոյության իրավունքի և ազատության, հանուն մշակույթի և բարձրագույն հոգևոր արժեքների: Բազում սխրանքներ դարձան հերոսամատյանի մխացող էջեր, դարձան դյուցազնապատում: Մայր հայրենիքն էր կանչում, ու նրա քաջարի որդիները համախմբվեցին, բռնեցվեցին, հզոր պարիսպ դարձան հայրենի օջախի սրբությունը պահպանելու համար: Հայրենիքը հայերի համար դարձավ մեկ միասնական ընդգրկում՝ Հայաստան ու Սփյուռք:

Գրականությունը որդեգրեց «Երբ որոտում են թնդանոթները, չեն լռում մուսաները» կարգախոսը: Պատերազմը կյանքի կոչեց հայրենասիրական սխրանքների, քաղաքացիական ասպետության, բարոյական սկզբունքների բոլոր հին ու նոր ավանդները, ամրապնդեց ժողովրդի և գրականության անքակտելի միասնությունը: Գրականությունը «սպառազինվեց», ճակատ մեկնեց ահեղ կռվի առաջին խսկ ժամին: Հայկազուն գնդերը փոթորկվեցին ի մարտ, հարյուրավոր գրողներ մեկնեցին ռազմաճակատ՝ որպես հասարակ զինվոր, հրամանատար, թղթակից: Պատերազմական գործողությունների առաջին գծում էին բանաստեղծներ Թ. Հուրյանը, Դ. Չարիսյանը, Հ. Հովհաննիսյանը, Վ. Դավթյանը, Ա. Սարոյանը, Հ. Սահյանը: Արյան, տառապանքի, գրկանքների, գոհերի վշտի ու հառաչանքի մեջ ծնվում էր գեղարվեստական խոսքը՝ բանաստեղծությունը, հյուսվում սիրո և ատելության արտասովոր շիկացմամբ, որի մեջ խտանում էին տառապանքի կապարե զգացմունքները ու արիության մոտիվները:

Թնդանոթների համազարկը չխլացրեց գրականության կենդանի թրթիռը: Առաջին կրակոցներն ունեցան իրենց անմիջական արձագանքները: Դաժան աշխարհամարտի սկիզբը գուժող կառավարական հաղորդագրությանը զուգահեռ հնչեցին մարտակոչի ռիթմով գրված բանաստեղծություններ՝ շիկացած ու հրեղեն խոսքերով, ցասման, վրեժի և ատելության տրամադրություններով: Ապոլոնյան քնարի ավանդական հատկանիշներին՝ քնքշությանն ու մեղմությանը գումարվեցին հռետորական ու հրապարակախոսական բոցավառ շեշտվածություն ունեցող ռազմակոչերը: Հայ գրողները սրբազան ուղերձ հղեցին ռազմաճակատում մարտնչող մեր զինվորներին՝ մեր հերոսական ու ողբերգական պատմության մշուշներից ոգեկոչելով մեր փառապանծ նախնիներին, նրանց վսեմ օրինակով ոգեշնչելով ֆաշիստական վայրագ հեղեղի դեմ կանգնած հայ զինվորին: Հայրենիքի սիրո և ուխտադրուժ թշնամու հանդեպ ատելության զգացումները դարձան բանաստեղծական ինքնատիպ ձևեր՝ չափածո մարտակոչեր, ուղերձ-հոր-

դորներ, բարի երթի մաղթանքներ, մարտական պատգամախոսություններ՝ ոռմանտիկական գունավորմամբ ու մեղմ քնարականությամբ թաթախուն: Քնքուշ ելևեջումով հյուսվեց նաև սիրո ու կարոտի մեղեդին:

Թեմատիկ ինքնատիպություն և խորհրդանիշ-պատկերների հարուստ հյուսվածք ունեւ պատերազմական բանաստեղծությունը, որ հենվում էր դասական ավանդների վրա: Ահեղ սպառնալիքի ու տագնապի օրերին իմաստավորվեց հավատը, եղբայրությունն ու համերաշխությունը, սիրո զգացումը դրսևորվեց հոգեբանական բազում իմաստներով, ուրույն հմայք ստացան հայրենի եզերքը, կապույտ երկինքը, խոխոջուն ջրերը, սրբազան օջախը, հարազատների կերպարները, կատարվեց հայրենիք հասկացության խտացում: Ապրված զգացումների, կոնկրետ դեպքերի ու իրադարձությունների մեջ ձևավորեց խորհրդանիշների խոսուն ու տարողունակ համակարգ՝ մայր հայրենիք՝ վշտոտ մոր կերպավորմամբ, ժպտուն ու թոթովախոս մանուկ, սպասող կին, սիրած աղջիկ, մեսրոպատառ հայոց լեզու, երկնասույզ Մասիս, Մասնա տուն, տառապալից անցյալ, եղեռնի ցավոտ հիշողություն, նախնիների զգաստացնող պատգամ, նաիրյան դալար բարդի, բերքառատ խնձորենի, ծաղկած փշատենի, քարոտ աշխարհ, վեհանիստ լեռներ, թուփ ու մացառ, ցորենի ծփուն արտ, հայրենի շաղոտ արահետ, անուշաբույր ծաղիկ, ամոքիչ երգ, խաղաղության աղավնի, արյունով ցողված փոքրիկ հողակտոր...

Մեր գրողները պատերազմական թեման ընկալեցին իբրև ազգային-անհատական նկարագիր ունեցող ցավալի վերհուշ. դա 1915թ. էր, կորցրած օջախն էր, Մասնա տան հիշատակումն էր: Գաղթի, տեղահանության հուշն ու մղձավանջը նոր ուժգնությամբ բորբոքվեց պատերազմի օրերին, ու նախնիների պատգամը դարձավ հայ ժողովրդի հույսի ապավեն, իսկ պատմության նորոգ հայտնաբերումը՝ ներշնչանքի աղբյուր: Հայրենասիրական գաղափարը միահյուսվեց պատմական թեմատիկային:

Կովի առաջին իսկ ժամին Ն. Զարյանի գրած անկեղծ հավատամքի խոսքերը դարձան երդման խորհրդանիշ.

Դու քաղցր ես, հող իմ հայրենի,
Չկա քեզնից պայծառ անուն,
Բայց վտանգի ահեղ ժամին
Երբ սպառնում է թշնամին,
Դու ավելի ես քաղցրանում...

Ու արձագանքվեց աշխարհի չորս ծագերում սփռված հայության համախմբման կոչը.

Իմ հայ ժողովուրդ, եղբայրներ, քույրեր հայրենապապակ,
Որտեղ էլ որ կաս, այս հողմագալար երկրի երեսին,
Որ կիսագնդում, որ ծովի ափին, որ երկնքի տակ,
Լսիր քո որդուն, քո բանաստեղծին: - **Զարյան**

Ռազմակոչային պոեզիային յուրօրինակ կառուցվածքային ինքնատիպություն հաղորդեցին կոչը, հրահանգը, հրամանը, ձայնարկությունը, դարձան գործածական հնարանք՝ խորհրդանշելով տագնապն ու ըմբոստացման թափը, իսկ հրապարակախոսական լիցքերով ահագնացող մարտակոչի երգերը՝ պայքարի զենք.

Թո՛ղի՛ր, իմ երգ, որպես արկի շառաչ,

Որպես մրրիկ, նետվի՛ր նորից հանդես...

Թռե՛ք, բազեներ, սուրացե՛ք, տանկեր, դեպի թշնամին,

Բոլոր փողերից կրա՛կ տեղացեք ամպրոպի նման: - **Ջադյան**

Պատերազմի առաջին իսկ օրերին հնադարյան գուսանների օրինակով, հզոր ձայնարկով՝ Ձենով Օհանի պատվավոր առաքելությամբ Ավ. Իսահակյանը վաստակած բարձունքից իմաստունի խոսք-ահագանգ է հղում՝ «Ռազմակոչ» քայլերգը, որը մարտակոչի ու վրեժխնդրության մի վավերաթուղթ էր, բոթաբեր գույժի խորհրդանիշ: Որոտում է հայրենասեր բանաստեղծի ձայնը, մարտի է կանչում նա հայրենյաց որդիներին, կանչում է կյանքի ու մահվան, ազատության ու ստրկության կռվի: Մեր ազգային էպոսի պատումների ոճով բանաստեղծը զինում, գոտեպնդում է հայ ռազմիկներին վառ ասելությամբ, անձնագոհ կամքով ու անհուն վրեժով, որպեսզի էլ ավելի շեշտակի ու անվարան իջնի անեղ ցասման սուրբ: Սուրբ դրոշի տակ նա մարտիկներին դեպի ռազմի դաշտ է տանում, տանում է դեպի հերոսացում, դեպի բարձունքը մեծ հաղթանակի:

...Գոտեպնդվեցե՛ք ասելությամբ վառ,

Գոտեպնդվեցե՛ք անձնագոհ կամքով,

Հավետ պիտ մնա հայրենիքը մեր,

Հզոր և ազատ և հավերժ կանգուն...

Մասնա ծոերի, Փոքր Մհերի պաշտամունք ունեցող պոետի երևակայության մեջ բարձրանում է Ազատ Մասիսը, հայրենի լեռնաստանի պատկերը, դառնում ժողովրդի հերոսական ոգին խտացնող խորհրդանիշ-կերպար:

Հոգու մեջ իր ժողովրդի՝ անցյալում ունեցած կորուստներն ու տառապանքները, փրկված փոքրիկ Հայաստանը՝ Շիրազը ևս արձագանքում է աշխարհակործան աղետին՝ գրելով խորապես հայկական ու հայրենաշունչ խորհրդանիշ-բանաստեղծություն՝ «Էքսպրոմտը», որտեղ հայրենապատումի յուրօրինակ երանգներով միահյուսվում են ուժն ու հավատը, լեռների վեհությանը համադրվում է բնության քնքշությունը, ազգային հպարտությանը՝ հավերժող անպարտելիությունը, իմաստասիրական վերջաբանով ամրապնդվում է մաքառելու անկոտրում կամքը.

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

Պատերազմի ահագնացող վտանգն ընկալելով տիեզերական չափերով՝ մեծ զանգահարի ու հզորաձայն մունետիկի պես նա ազդարարում է.

Ես, հողագնդի կտորից ահա

Կանչում եմ, գոչում՝ սուր մերկացրեք,

Ելել է մարդու ոսոխն ամեհի,-

Դուք նրա մահով կյանք խնկարկեցեք:

Մարտակոչերին զուգահեռ մեծ թափ է ստանում նաև ներաշխարհի թաքուն ծալքերը թափանցելու, մարդկային հույզերի բազմազանությունը բացահայտելու կարողությամբ ու վարակիչ անկեղծությամբ տոգորված անձնական քնարերգությունը: Ստեղծվում են սպասումի երգեր՝ կարոտի ու նվիրումի խոհերով, որոնց բացառիկ դրսևորումը կա նաև ռուս գրականության մեջ (Միմոնովի «Սպասիր ինձ»): Առաջին իսկ օրերին հնչում է Շիրազի «Կգնանք կռիվ» բարի երթի քայլերգը, որտեղ ռազմակոչն ու երգումը միաձուլվում են ռազմի դաշտ մեկնելու մնաս բարովի խոսքին՝ դառնալով սպասումի խորհրդանիշ.

Կգնանք կոփվ, էլի կգանք տուն,
Երբ փոշիանա անարգ թշնամին:

Մոր և հայրենիքի կարոտի խորհրդանիշ դարձավ Գ. Սարյանի՝ մտերմիկ քնքշությամբ հյուսված «Մարտիկի երգը»՝ հավերժ մարդկային ու խորապես հայկական.

Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն...

Էմինի պոեզիայում ևս մայրը պատկերացավ որպես կարոտի, հավատի, իղձերի և սիրո էության արբագործված խորհրդանիշ.

Սրտիդ վերքերի վրայով են, մա յր,
Վիրավորների խմբերը քայլում...

Մա'յր իմ, ինչպե՛ս ես ցավին դիմանում:

Հայ ժողովրդի լինելիության, հայրենիքի առարկայական գոյության հավերժող խորհրդանիշը գիրն է, որը զինվորի համար հիմն էր, աղոթամատյան ու պատմության փորձով վավերացված իմաստություն: Պատերազմական վտանգի օրերին նորից է հառնում մայրենի լեզվի խնդիրը: Զարյանը «Հայոց լեզու», «Ինչու չես խոսում հայերեն» բանաստեղծություններում հիշեցնում է, որ հայոց լեզուն հայրենիք է, ժողովուրդ, հերոսական անցյալ, այսօր ու վաղվա օր, հարատևման գրավական, ազգային ոգու և մշակույթի ճշմարիտ գնահատական:

Քնարական մեղմությամբ ու վերադարձի լեցուն հավատով Սարյանը բարի երթ է մաղթում ռազմաճակատ մեկնող զինվորին, և որպես զորավիգ-մասունք՝ սրբազան հողն է առաքվում ռազմի դաշտ: Քնարական լավատեսության խորհրդրդանիշը, հաղթանակի համար պայքարող զինվորի նեցուկը դառնում է հայրենի հողի փաթեթը:

Մանկության հուշերով ու հիշատակներով, Գյազբեկի, Որոտանի կարոտներով, Սալվարի հովիվների կանչով ապրող բանաստեղծը՝ Սահյանը, 1944թ. գրում է «Նաիրյան դալար բարդին»՝ ընդարձակելով կարոտի աշխարհագրական սահմանները, համահայկական տեսք տալով հայրենիքի ըմբռնմանը: Նրա հայրենասիրության գույները ծիածանվում են զանգեզուրյան լեռներից ու ձորերից: Հեռվում մնացած հայրենական եզերքի հարազատ պատկերի կարոտից տազնապում է զինվոր-բանաստեղծի անհանգիստ սիրտը, ու ալիքվում է կարոտաբաղձ փափագը.

...Միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ նաիրյան դալար բարդի:

Աշխարհասասան պատերազմում մարտնչող բանաստեղծը հայոց երկիրը ներկայացնում է Հայաստանի բնության հավերժական խորհրդանիշներից մեկի՝ հայոց բնակարի ամենաբնորոշ ծառի՝ նաիրյան բարդու պատկերով, որը և բանաստեղծության կենտրոնական առանցքն է:

Ն. Զարյանի մոտ հայրենիքի առարկայական հարատևության, արհավիրքների և դիմակայելու ու վերածնության խորհրդանիշ է դառնում խնձորենին: Աղթամարցու տաղերի ռճավորմամբ գրված «Արգաքանդի խնձորները» բանաստեղծության մեջ նա ստեղծում է ազգային-պատմական ընդհանրություն, կամրջում հին ու նոր ժամանակները: Ծեր կնոջ նորատունկ այգին խորհրդանշում է միշտ կանգուն ու կենսունակ հայրենիքի կերպարը: Ծեր կինը՝ մայրը, հայ ժողովուրդն

է, որի մեջ խտացված է մեր ազգային նկարագրի բնորոշ գիծը՝ կենսունակությունը:

«Վերածնունդ» բանաստեղծության մեջ Զարյանը ապրեմ-չապրեմ ծաղկի խորհրդանիշ-պատկերով ներկայացնում է մեր ժողովրդի համառ ու անկոտրու ոգին, փորձություններն ու արհավիրքները հաղթահարելու մեծ կամքը:

1942թ.-ին մամուլում տպագրվեց հայ ժողովրդի նամակը՝ ուղղված ռազմաճակատում կռվող մարտիկներին, որը հայոց պատմության բազմադարյան ուղու հերոսական էջերի վկայակոչմամբ հայորդիներին մղում էր խիզախության ու հաղթանակի: Այդ նամակի բանաստեղծական արձագանքը դարձավ Զարյանի «Ձայն հայրենական» պոեմը: Յուրօրինակ հնարանքով, որ գործադրել էր նաև Չարենցը «Գիրք ճանապարհի» ժողովածուում, միահյուսելով անցյալի խիզախումներն ու ներկայի հերոսությունը, իրար կապելով տարբեր ժամանակներն ու արժանահիշատակ գործերը, ամբողջացնելով հայ ժողովրդի բազմադարյան ուղին՝ հին հրովարտակաների հանդիսավոր ռճավորմամբ բանաստեղծը ոգեկոչում է մեր բազմադարյան պատմությունը՝ առասպելական Հայկից ու Զարմայր Նահապետից մինչև Խաչատուր Աբովյան, հայ ժողովրդի հերոսական դիմաքանդակների արժևորումով ու տարողունակ ընդգրկումներով իր ճակատային եղբայրներին հիշեցնում է անցյալի դասերը՝ հիտլերյան գազանություններին զուգորդելով հայոց պատմության խոսուն էջերը.

Թող ձեզ ոգեշնչե Հայրենաշեն արքան՝ Տիգրան Մեծ...

Հուզական լիցքերով տոգորված բանաստեղծական տողերը դառնում են պատերազմական թոհուբոհի ու ծանր մղձավանջի խտացված պատկերներ, որոնք ակնառու են այդ տարիներին գրված անկրկնելի բնաստեղծություններում:

Հուզիչ են հրաժեշտի մնաս բարևի մեղեդիները. որոնք դառնում են քնարական թրթիռների խորհրդանիշ.

Ամպեր, ճերմակ ամպեր, որ չվում եք հարավ,

Կարոտներս տարեք հայրենի լեռներին,

Տարեք այն աղջկան սիրտս սիրածարավ,

Տարեք համբույրներս իմ մոր թուխ աչքերին: - **Հովհաննիսյան**

Դավթի հանրահայտ հրաժեշտն են հիշեցնում հայ մարտիկի՝ ծավալվող կարոտի խորհրդանիշ «մնաք բարովի» տողերը.

Մնաք բարով, իմ ընկերներ,

Ե՛վ հայր, և՛ մայր, և՛ տուն,

Դաշտեր կանաչ, հպարտ լեռներ,

Հիշեցե՛ք ձեր որդուն: - **Մարյան**

Կենաց ու մահու կռիվ ելած երիտասարդ զինվորի երդումը դառնում է հավատամք, ուժի և հզորության խորհրդանիշ-ձոներգ.

Աչքերիդ համար, որ ցմահ տեսնեն,

Ես բոց աչքերով կռիվ գնացի,

Ձեռքերիդ համար, որ կյանքը գրկեն,

Զինված ձեռքերով կռիվ գնացի: - **Շիրազ**

Զինվոր բանաստեղծ Դ. Չարխյանի պայծառ բանաստեղծությունը քնարական ուղերձ է՝ նուրբ կարոտի երազներով թաթախուն.

Թե մարտում ընկնեմ, տխուր մի մնա,

Անսեր մի մնա, սիրի՛ր դու մեկին,

Թող ջահել սիրտդ սիրով արբենա՝

Ափսոս է վարդը թռչնի գարունքին:

Զինվոր-բանաստեղծի անվերադարձ մեկնումը լուսավոր թախիժ է բերում, անանձնական խորքեր ունեցող հոգևոր արժեքների պաշտամունք.

Ես հող կդառնամ դաշտում սիզավետ,

Կդառնամ ծաղիկ, անուշ կբուրեմ,

Դու եկ ինձ այցի նոր սիրածիդ հետ,

Քաղիր ինձ, որ քո ձեռքը համբուրեմ:

Այստեղ հետաքրքիր գուգահեռ կա Քուչակի պանդխտության հայրենների հետ.

Զիմ յարն ամանաթ կուտամ

Ի վարդին մեջն պահեցեք...

Որպես հավերժության խորհրդանիշ՝ հոգեվարքի պահին զինվորի հայացքի առաջ շողացել են հայրենի եզերքի գունագեղ ու մտերմիկ պատկերները, բնության հմայքները, աշխարհի վրա տարածվել է սիրո և երազների մշուշը, պայծառ հոգիների հյուսած հավերժական մեղեդին.

Իմ բարեկամներ, ընկերներ անգին,

Ես ձեզ եմ թողնում այս գարունը վառ...

Կողք կողքի են կյանքի սերն ու մահվան ահը, դարձի ճամփի կարոտն ու կռվի սարսափը: Քաջի մահով ընկած զինվորի կողքին է սիրած աղջկա լուսանկարը՝ հավերժող պատգամի խորհրդանիշը.

Հայրենիքի համար, այս աղջկա համար

Արժի, որ մարդ կռվի ու մահանա: - **Սարյան**

Պատերազմն ընկալվում է իբրև մարդկային խելված ճակատագրերի խորհրդանիշ: Ավերում են քնքուշ զգացմունքները, մարտնչող զինվորի վերքերին ավելանում է նաև սիրո ցավը.

Գնացել ես ուրիշի և մոռացել զինվորին,

Այս վերջին վերքն ավելի, ավելի խորն է, դաժան,

Մինչդեռ անունդ ինձ համար կարոտի երգ էր դարձել,

Եվ սպասում էր դարձել, և ուղեկից անբաժան: - **Գրիգորյան**

Քնարական հերոսը պատերազմի անմիջական մասնակիցն է, «ես»-ը հավաքական կերպար է, որը խորհրդանշում է մի սերնդի ավերված երջանկությունը:

Փույթ չէ, որ մեզ դպրոցական նստարանից

Կյանքը նետեց մահասարսուռ ռազմաճակատ,

Կյանքը պոկեց մեզ աշխարհից, տնից, տեղից

Խոստովանանքը մեր սիրո թողած կիսատ: - **Մևակ**

Խտացված տառապանքը դառնում էր բոթաբեր «սև թուղթ», գիշերային խավարի մեջ լուսաքողարկված տներից ու խրճիթներից լսվում էին որդեկորույս մայրերի ողբերը: Իսկ լուսաբացին նույն սգավոր կանայք երեխաների ու ծերերի հետ տանում էին աշխատանքի ողջ ծանրությունը: Ավերված մանկության խորհրդանիշ է դառնում բանաստեղծական պատկերը.

...Սև թուղթ էինք ստացել, հայրս ընկել էր մարտում,

Մեր տանը վիշտ էր ու սուգ, բայց եկել էր նոր տարին:

Հոգիս կարոտ էր այնպես մայրական սուրբ մի գրկի,

Չկար մեկը, որ բերեր ինձ խաղալիք, տոնածառ... - **Գրիգորյան**

Կապուտիկյանը, Մարգարյանը, Աղավնին դաժան իրականությունն ընկալում են կանացի նուրբ ներաշխարհով: «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը դառնում է պատգամ՝ հղված հայությանը, փշատենին՝ սպասման խորհրդանիշ, թախիծով օծուն սերը՝ գորավիզ, ապրելու խորհրդանիշ.

...Իմ սերն է հիմա նեցուկ քեզ համար.

Մրտիս հենվելով դու հպարտ անցիր: - **Աղավնի**

Պատերազմի հուշը, անջնջելի սպին միացող անցյալի խորհրդանիշն էր, որ հավերժորեն արձագանքվելու է սերունդների ցավոտ հիշողության մեջ.

Դուք մեր հայրերով մեզ չեք ճանաչի,

Նրանք ընկել են անհայտ, անանուն,

Բրեստի համար, Կիևի, Կերչի: - **Գրիգորյան**

Սպիացող վերքերի անանց ցավն է խտացված Սևակի «Անմահները հրամայում են» գրքույկում: Անմահները անխոս հրամայում ու պահանջում են «իրենց երգը չերգած», դառնում են հավերժող հիշողության խորհրդանիշ, իսկ ծավալվող գործողությունների հեռապատկերի վրա հերոսական պայքարի խորհրդանիշ-կերպարն է՝ հայորդին: Մանգաղն ու սուրը՝ խաղաղ աշխատանքի ու պայքարի զենքերը վառ են պահում նրա ոգին, կոփում բնավորությունը: Իմացյալ մահվան գաղափարը դառնում է հավերժող ապագայի խորհրդանիշ.

Նա ծնվել էր այնտեղ, ուր կան լեռներ ժայռոտ...

Բայց մարտնչեց, ընկավ անափ տափաստանում...

Որ այնտեղ՝ քարաշատ, ժայռոտ Հայաստանում

Նրա ջրաղացը հայոց ցորենն աղա...

Պատերազմից բոլորն են «տուն վերադառնում», ոմանք հիշատակներ դարձած, մյուսները՝ հիշատակներ փրկած: Մարյանի «Սերմնացանները չդարձան տուն» բանաստեղծության ռեֆրենը հաղթանակի հրճվանքի և կորուստների դառնության զուգորդման խորացնում է իրենց կյանքը հայրենիքի գոհաստեղանին դրած մարդկանց հիշատակի ցավը: Ճիշտ է, դաժան թռուրտներից հետո եկող ահեղ լռությունն այլևս չեն խախտի սերմնացանների դարձի ոտնաձայները, բայց կա հավերժող լավատեսությունը. նորից խաղաղության սերմերն են անձրևում խոնավ հողում.

Սերմնացանները հատիկների հետ բուռ առ բուռ

Խաղաղություն էին սփռում մեր աշխարհին: - **Մարյան**

1945թ. մայիսի 9-ին լռեց վերջին համազարկը, ու Ռայխստագի վրա փողփողաց վառողի ծխի քուլաներով ու լուսաբացի ցուլերով օծուն մեր հաղթանակի դրոշը: Իսահակյանը գրեց փառքի ձոներգը՝ աշխարհին ավետելով բաղձալի խաղաղությունը.

Մեր սուրը փառքով դրեցինք պատյան...

Ժողովրդի պատմական հաղթանակն ազդարարող վերջին արկի պայթյունը վերջին անգամ մի հողայուն շատրվանեց երկինք, ու բացվեց այն մեծ առավոտը, որի պայծառությունը մթագնել էր ֆաշիզմի ուխտադրուժ հարձակումը: Խաղաղության աղավնին դարձավ մանկան զուլալ երազանքի խորհրդանիշ.

...Ես տիկնիկիս ու ինձ համար

Խաղաղություն եմ ուզում: - **Զարյան**

Մարդկությունը թեթևորեն շունչ քաշեց և օրհնեց խաղաղության խորհրդանիշը՝ հաղթանակի դրոշմը: Ծավալվեց խաղաղության մեղեդին.

Խաղաղություն ամենքին և ամենուր,

Ողջ աշխարհին է ողջ աշխարհին կամենում: - **Մևակ**

Մեր ժողովրդի հերոսական դյուցազնապատումն ամփոփվեց մի յուրօրինակ խորհրդանիշով՝ հաղթանակի հպարտ պարով: Ա. Սարոյանի բանաստեղծությունը բացառիկ ներշնչանքով է ներկայացնում այդ անկրկնելի բերկրանքը.

...Հայերն այդպես պարում էին, հաղթանակած, մտած Բեռլին՝

Մեր նաիրյան, հնադարյան, ավանդական մեր քոչարին:

Այդ պարն էին պարել մի օր, երբ հաղթել էր Հայկը Բեռլին:

Алиса Гасаян – Символы в военной поэзии. – Обращаясь к стихотворениям, написанным в годы Великой Отечественной войны, к настроениям и переживаниям отображенным в них, рассматриваются стихотворения на военную тему, насыщенные символами, что является болезненным отображением страшных дней, кровавых событий, тяжелых обстоятельств и пережитых чувств.

В стихотворных строках так же выявляется любовь к отчизне.

Анализируются труды имеющие тематическое своеобразие, в котором представлена большая система художественного образа.

В описаниях выделяются разнообразные символы, которые обобщают страдания болезненного ужаса, непоколебимую веру в победу и бессмертный оптимизм народа.

Alisa Hasanyan – Symbols in military poetry. – Reverting to the poetry written in the years of the Great Patriotic War, touching upon the moods and emotions, poems about war are distinguished by their symbols which are the reflections of terrible days, bloody events, sorrowful reflection of lived feelings and heavy state.

There is also expressed love towards the country in the poems.

Analyzed some works of thematic features where a great system of artistic images are reflected.

Various symbols are distinguished in the descriptions which generalize sorrowful horror sufferings, immortal optimism of people and unshakable belief to the victory.

ՇԱՎԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻՆ ԵՎ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Այս հոդվածում քննության կառնենք Շավարշ Նարդունու աշխարհայացքի առանձնահատկություններից մեկը: Ըստ արժանվույնս դեռ չգնահատված այս գրողի ստեղծագործությունը հարկավոր է քննաբանել դարասկզբի արևմտահայ գրականության մեջ սկիզբ առած հեթանոսական գրական շարժման ավանդույթների զարգացման համապատկերում: Նկատենք, որ արևմտահայ գրականության մեջ դարձր դեպի հեթանոսություն քրիստոնեության ժխտմամբ էր պայմանավորված: Այս տեսակետից առանցքային կարող են լինել հեթանոսական գրական շարժման առաջնորդ, «հեթանոս երգերի» հեղինակ Դ. Վարուժանի տողերը, թե «մարդն է ինչպես զարշապարին տակ հսկա խուլ աստուծո մը հրեա» («Մեռած աստուածներուն»)²⁶¹: Սակայն սխալ կլինի հեթանոսական շարժումը, ինչպես արդեն նկատել է գրականագետ Սուրեն Դանիելյանը, դիտարկել նեղ կրոնական հանգույցներում: Գրականագետը մեջբերելով Դ. Վարուժանի խոսքերը, թե «Ե՞րբ պիտ դառնա հեթանոսությունը և հին հաղթությունները՝ զոր վաստակելու համար հերոսներ պետք էին՝ այլ ոչ դիվանագիտություն», եզրահանգում է, թե «Վարուժանն ինքը հեթանոսության գրական հետաքրքրությունը չէր դիտում կրոնական նեղ հանգույցներում: Այն ընկալվում էր ժամանակակիցների կողմից հերոսականության վերադարձի կոնկրետ իմաստով, ազատության, պայքարի նոր բովանդակությամբ»²⁶²:

Շ. Նարդունու հեթանոսականության ելակետը քրիստոնեության տառապանքի վարդապետության հերքումն է: Հիշենք Լ. Շանթի «Հին Աստվածներ» դրամայի հերոսներից մեկի՝ Վանահոր խոսքը. «Տանջանքն է, որ կբարձրացնե հոգին, տառապանքն է, որ կմաքրե: Եվ կյանքի ամենեն խոր բանը մահն է»: Այսպես է Վանահայրը բանաձևում տառապանքի քրիստոնեական ընկալումը: «Տառապանքը կյանքի խոցն է, իսկ մահը՝ կյանքի քայքայումը»²⁶³, առարկում է Շանթի մտապատկերային հերոսը՝ Ճերմակավորը, որ հեթանոս աստվածների ներկայացուցիչն է: Այս խոսքերով կարելի է արտահայտել նաև Նարդունու հեթանոսության ընկալումը: Քրիստոնեությունը «հեթանոսների» համար անընդունելի էր որպես տառապանք, հանդուրժողականություն և համակերպություն քարոզող կրոն: Երվանդ Օտյանը գրում էր. «Այս խաբուսիկ հույսը եթե կարող է մխիթարել թշվառության ու բռնության տակ հեծողները, մյուս կողմից պատճառ եղած է, որ ստրուկ համակերպությամբ մը գլուխ ծռենք ամեն անիրավությանց, անարդարությանց հանդեպ, մանավանդ որ հոս կրած գրկանաց համեմատությամբ պիտի ըլլա հատուցումը. որքան շատ տառապանք, այնքան շատ պիտի արժանանք երկնքի արքայության»²⁶⁴:

Նարդունին նույնպես կասկածի տակ է առնում տառապանքի ազնվացնող բնույթը: «Ի՞նչ է տառապանքը», գրում է նա: «Մեր մեջ կուտք է դարձած այս զգա-

²⁶¹ *Դանիել Վարուժան*, Երկերի լիակատար ժող., հտ. 2, Եր., 1986, էջ 53:

²⁶² *Սուրեն Դանիելյան*, Հեթանոսական գրական շարժման պատմությունից, Եր., 1988, էջ 38-39:

²⁶³ *Լևոն Շանթ*, Երկեր, Եր., 1989, էջ 361:

²⁶⁴ *Երվանդ Օտյան*, «Ազատ բեմ», Ալեքսանդրիա, 1905, 29, ապրիլի:

յութիւնը, որ տարօրինակ պատմութիւն մը ունի: Ասիոյ մէջ ճգնակեացներու վարդապետութիւնը, զօրացնելու համար մարդկային կամքը, միջոց մը չէր, ոչ ալ պաշտամունք մը: Այլ վարագոյր մը մեծամոլիկ ցանկութիւններու վրայ: Յիսուս չտառապեցաւ իսկ: Իր հետեւորդներուն մէջ, քրիստոնեական վարդապետութեամբ, տառապանքը դարձաւ կոտոր մը:

....Հայոց մէկ օրաթերթին մէջ ուժգնութեամբ ծաղրեցի այդ տառապանքները: Ի՛նչ աղմուկ էր, որ բարձրացուցին քրիստոնեաները: Այդ ծաղրով միայն մէկ հանգոյց էր, որ կը լուծէի: Ես դէմ եմ բոլոր քրիստոնեական հանգոյցներուն»²⁶⁵: («Ջրոյց մը կովին հետ»): Այս ամենով հանդերձ, նկատենք, որ Շ. Նարդունու հեթանոսական հետաքրքրությունները զերծ են պայքարի ոգուց, պատմականությունից և ավելի շատ գեղագիտական ու կրոնական բնույթ ունեն: Սա Նարդունու հեթանոսական աշխարհայացքի կարևորագույն յուրահատկությունն է:

Միյուրքահայ գրող, գրականագետ Մկրտիչ Պարսամյանը Նարդունու ստեղծագործությունը քննաբանում է նաև հեթանոսության տեսանկյունից, թեև, հարկավոր է նկատել, որ չի անդրադառնում հեթանոսական գրական շարժման և Նարդունու աշխարհայացքի առնչություններին: Ս. Դանիելյանը հեթանոսական գրական շարժմանը նվիրված իր ուսումնասիրության մէջ հեթանոսականությունը քննում է նաև սիմվոլիզմի կամ խորհրդապաշտության հետ ունեցած առնչությունների ծիրում: Ս. Պարսամյանն առանձնացնում է Նարդունու աշխարհայացքի հիմնական երեք կողմերը, որ սերտ փոխանշության տեսակետից յուրօրինակ եռանկյունի են կազմում՝ խորհրդապաշտություն²⁶⁶, բնապաշտություն և զգայապաշտության²⁶⁷:

Զգայապաշտությունը Շ. Նարդունու աշխարհայացքում քրիստոնեության տառապանքի հակադրությունն է հենց. զգայապաշտությունը հակադրվում է տառապանքին, այնպես, ինչպես հեթանոսությունը քրիստոնեությանը: Սրանով է ահա բացատրվում ինչպես Դ. Վարուժանի և մյուս «հեթանոսների» երգերում, այնպես էլ Շ. Նարդունու արձակում մարմնական սիրո և վայելքի բացահայտ պաշտամունքն ու թաքնված խորհրդանշականությունը. Նարդունու սիմվոլները հաճախ թաքնված էրոտիկ բովանդակություն ունեն: Նարդունու աշխարհայացքի Մ. Պարսամյանի առանձնացրած երեք կողմերը՝ խորհրդանշականությունը, զգայապաշտությունն ու բնապաշտությունը, Նարդունու արձակում հղվում են դեպի հեթանոսություն: Այսպես՝ զգայապաշտությունը դրսևորվում է մարդկանց և գերմարդկային հեթանոս էակների սիրո մասին պատմող հեքիաթներում և ավանդազրույցներում: Նարդունու հեթանոսական աշխարհայացքի կարևոր առանձնահատկություններից մեկը ժանրի ընտրությունն է: Հեքիաթը և ավանդազրույցը, ինչպես նշել ենք մեր կազմած «Խորհրդերգութիւն» խորագրով գրքի առաջաբանում²⁶⁸, Նարդունու նախասիրած ժանրերն են և նրա ստեղծագործական ժառանգության ամենից հարուստ և ուշագրավ մասն են կազմում: Նարդունին սիրում է դիմել հեքիաթի և ավանդազրույցի այլաբանությանը, իսկ սրանք մաքուր, հերմետիկ-գեղագիտական ժանրեր են, որոնք պատմական կոնկրետ բովանդակություն չունեն և ավելի շատ հետաքրքրություն են ներկայացնում մաքուր երևակայության և պոետիկայի տեսանկյունից:

²⁶⁵ **Շաւարշ Նարդունի**, Մեղեդիներ, մեղեդիներ... Փարիզ, 1933, էջ 113:

²⁶⁶ Տե՛ս նաև՝ **Ջարուհի Առաքելյան**, Խորհրդապաշտությունը Շավարշ Նարդունու արձակում, Գարուն, 2011, թիվ 11-12, էջ 19-21:

²⁶⁷ Տե՛ս **Մկրտիչ Պարսամյան**, Շաւարշ Նարդունի, Փարիզ, 1933 թ.:

²⁶⁸ **Շաւարշ Նարդունի**, Խորհրդերգութիւն, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 5:

Ըստ էության, հեթանոսականության լավագույն արտահայտությունը ժամանակաշրջանի բանահյուսական նմուշները կարող էին լինել: Այդ նմուշները և նրանց նմանակումը Նարդունու կողմից պատկերային և լեզվական ինքնատիպ մշակմամբ ու մատուցմամբ են ներկայացված: Ահա թե ինչ է գրում Նարդունին հեթանոսականության և բանահյուսական նմուշների վերաբերյալ. «Մեր գիտը, կարմիր լուսնկայի մը նման՝ այգիներուն մէջ ինկած, աւանդապահ բեկորն է ցրի ցրի եղած փառապատում ցեղիս, որ «մեծերուն» և «իմաստուններուն» նման՝ կրցաւ հագնիլ պատմութեան թանկագին պատմուճանը: Հեթանոսական սքանչելարուեստ գեղեցկութենէն ու քրմական խորհրդանշանէն, և այն բոլոր ստեղծագործութիւններէն, որոնցով մեր նախնիքը գինովցան, հեւք մը միայն, թաքնուած իր հոգիին գեղումներուն մէջ, ի նչ հրաշատեսիլ երանգներով ու դողերով կը թրթռայ դեռ իր աւանդապահ շրթներուն վրայ:

Հայերէն մեծ բառգիրքերու մէջ, գործածուելէն մաշած բառերու տակը սեղմուած ու լքուած, ժամանակին գոյներով բռնաբարուած՝ հարի՛ւր բառեր գիտեմ, որ մեր գիւղին մամերուն հոգիին մէջ գեղեցիկ աւանդութիւններու հեթանոս արուեստին հիւսուածքները կը բերեն, բայց մեղանչումի վախով կը յամենան դուրս թափել մեր անցեալին մեծութիւնը: Հայ անեղծ գիւղերու մէջ ուխտեր կան, առածներ ու երգեր, աստիճաններ ու բառեր, որոնք թել կ'առնեն այնքան հեռաւոր և այնքան փառաւոր անցեալին իմաստութենէն»²⁶⁹(«Ելակը»): Այսպիսին է «Ելակը» ավանդազրույցի ֆաբուլան: «Հեռաւոր թուականի մը» ում կտրիճ հրեշտակ է տեսնում, հմայվում հրեշտակի գեղեցկությամբ. «Լոյսի նման սպիտակ, ցոլ աչուրներով, աստղիկի մը չափ բերան և ի նչ անո իշ ստիներ, սկիհի նման գոգաւոր: Կտրիճը կը սիրահարուի: Ամէն առտու այգիին վարը կը սպասէ անոր անցքին: Ու այդ մանուկ և անփորձ աստուածութիւնը, օր մըն ալ, կը խաբուի ու կ'ընդունի կտրիճին ձեռքէն խաղողի ողկոյզ մը, իր աչքերուն նման պզկտուն հատիկներով»²⁷⁰: Եվ այդ մանուկ, անփորձ աստվածությունը օրերից մի օր խաբվում է՝ կտրիճի ձեռքից ընդունելով խաղողի ողկոյզը: Ավանդությունը պատմում է, որ ամբողջ գիշեր նրանք իրար գրկի մէջ համբուրվում են՝ չնկատելով անգամ, որ լույսը բացվում է: Հրեշտակն ուշանում է բարձրանալ երկինք: Մայր աստվածությունը լրտեսում է նրանց: Մահկանացուի հանդէպ իր հրեշտակներից մեկի սերը բռնկում է նրա զայրույթը: Աստվածամայրը հրավիրում է լույսը, և հրեշտակը երագի պէս հալվում է լույսի մէջ, իսկ նրա ստինքի պտուկը կտրիճի շուրթերի մէջ փոխվում է ելակի՝ «շառագունած՝ ծիրանաթոյր արիւնով»²⁷¹: «Մեր հովիտներուն մէջ ելակը ինչքա՛ն առատ կ'աճի, գետնին վրայ, շրթունքի պէս նուրբ երկու տերեւի մէջ սեղմուած, ստինքի մը պտուկին նման: Մէկ գիշերուան մէջ կը հասուննայ և լոյսին մէջ շուտով գետին կ'իյնայ»²⁷²: Այսպիսի գեղեցիկ բնապատկերով է ավարտվում «Ելակը» ավանդազրույցը:

«Սպիտակ առաւօտ» ժողովածուի «Սիրահարութիւն հրեշտակներու հետ» հեքիաթը, որ այս ավանդազրույցի գեղարվեստական նմանակումն է, նույնպէս մարդու և երկնային էակների սիրո մասին է պատմում: Ի տարբերություն ավանդազրույցի (ավանդազրույցն ինքնին ժամանակային հեռավորություն է ենթադրում), հեքիաթի գործողությունը կատարվում է ոչ վաղ անցյալում: «Պատումը մո-

²⁶⁹ Նույն տեղում, էջ 55:

²⁷⁰ Նույն տեղում, էջ 57:

²⁷¹ Նույն տեղում, էջ 57:

²⁷² Նույն տեղում, էջ 57:

տենում է ներկային, և ինչ ժամանակաշրջանում էլ հեքիաթը պատմվելիս լինի, համադրվում է այդ ներկայի հետ»²⁷³: «Այն տարին, երբ ծաղկափրփուր գարունը կը յորդէր լեռներէն, դաշտերէն ու ձորերէն, տարօրինակ դէպք մը պատահեցաւ գիւղին մէջ»²⁷⁴, սկսում է Նարդունին իր ժամանակակից հեքիաթը: Չարաճճի հրեշտակները խռովել են գյուղի անդորրը, նրանք երևացել են գյուղի տղաներին: «Երեւման» այս «համաճարակը» կամ համընդհանուր զգայախաբությունը «հեթանոսական գոյն» ուներ. հրեշտակները սիրախաղ են անում, ծաղիկներ նետում տղաներին, քնած ժամանակ համբուրում նրանց: Ուշագրավ է, որ Նարդունին իր հեթանոս հեքիաթում անսեռ հրեշտակներին ոչ միայն սեռային պատկանելություն է վերագրել՝ «երկնքի աղջիկները», այսպես են անվանում են նրանց գյուղացիները, այլև հեթանոսական և հեքիաթային անվանումներ՝ հավերժահարսեր, հուշկապարհիկներ, շահարիկներ, ջրանույշներ, միզանույշներ (հեթանոս հրեշտակների վերջին երկու տեսակին հանդիպում ենք նաև Լևոն Շանթի «Հին Աստվածներ» դրամայում): Նարդունու հեքիաթներում հրեշտակ անունը կրող էակները հեթանոս են: Սակայն հետաքրքիր է, որ երկնային հեթանոս էակները կասկածի տակ չեն առնում Քրիստոսի գորությունը և ենթարկվում են այդ գորությանը: Հրեշտակների հեթանոս դասի այս ներկայացուցիչները, լսելով Քրիստոսի անունը, իսկույն աներևութանում են «սուրբ անունէն սարսափահար»: Հայր Նարդունու ստեղծագործություններում քրիստոնյա է, բայց հոգու խորքում, ենթագիտակցության մեջ նրա հավատը հեթանոսությունն է: Եվ սա նույնպես Նարդունու հեթանոսական աշխարհայացքի առանձնահատկություններից մեկն է, որ լավագույնս արտահայտվել է «Աստված իջեր ի Հայաստան» հեքիաթում: Նարդունու գեղարվեստական իրականության մեջ հեթանոսական և քրիստոնեական իրականությունը գեղարվեստական մեկ հարթություն են կազմում:

Վերադառնանք հեքիաթի դիպաշարային զարգացմանը. հրեշտակների «երեւման համաճարակը» հանկարծ դադարում է: Մարդիկ վերադառնում են իրենց առօրյային՝ մոռանալով հրեշտակներին: Միայն Արձան անունով մի պատանի անկարող է մոռանալ իր սիրեցյալ հրեշտակին: Մելամաղձության գիրկն ընկած պատանին երազը նախընտրում է խորշելի իրականությունից, սկսում ապրել երազների աշխարհում: «Գերվայելքի այս գինովութեան մէջ, աչքերը լեցուեցան երանութեան մշուշով, հոգին ողողուեցաւ գերագանց յագեցումներու հպարտութեամբ, եւ մարդոցմէ վեր, մարդկային զգացական եւ իմացական կարողութիւններէն բարձր՝ աստուածընկալ շնորհով մը առլի, Արձան առօրեայէն անցաւ հէքեային, դուրս ելաւ միջոցէն եւ ժամանակէն, միացաւ իր աստուածուհիին»²⁷⁵: Արձանն ապրում է զգայախաբությամբ: Պատանու զգայախաբությունը ոչ միայն սյուժեի զարգացման գագաթնակետն է, այլև գեղարվեստական հնարք, որ հրեշտակների «երեւման համաճարակը» վերագրում է համընդհանուր զգայախաբության: Ինչևէ, այդ զգայախաբությունը պատանու համար դառնում է ճակատագրական: Երագների աշխարհում ապրող, իրականությունից վերացած պատանին օրերից մի օր իր «երկնանուշ հարսին հետ» զբոսնելու ժամանակ խեղդվում է լճում: Ինչ-որ առումով հեքիաթի վերջը երկիմաստ է: Նարդունին ակնար-

²⁷³ Տե՛ս *Վարդուհի Բալյան*, Բացող բանաձևերը հայկական և բրիտանական ժողովրդական հեքիաթներում, Ոսկե դիվան (հեքիաթագիտական հանդես), Պրակ 2, 2010, էջ 87:

²⁷⁴ *Շաարշ Նարդունի*, «Մայիտակ առաւօտ», Փարիզ, 1963, էջ 19:

²⁷⁵ Նույն տեղում՝ էջ 27:

կում է, որ տղայի մահը պսակադրությունն էր «երկնքի հարսի» հետ: «Երբ օղը պայծառ ըլլար, ինչպես կը վկայէին տեսնողները, ջուրին յատակը կը կազմուէր երկու էակներու թերաստուէրը, շրթունք շրթունքի, իրար գրկած եւ դէպի վեր եւ կարծես դէպի երկինք բարձրանալու ճիգի մը լողձետով:

-Արձա՞նն է, իր երկնքի հարսին հետ, կ'ըսէին գիւղացիները»²⁷⁶:

Նարդունին ակնարկում է, որ Արձանի և ջրանուշի սերը պատանու մահից հետո փոխադարձ է. հավերժահարսը ջրի եզերքը նախշել է գույնզգույն ծաղիկներով. ծաղիկները, որ ծաղկում են լճի ափին նրանց սիրո փոխադարձության յուրօրինակ խորհրդանիշն են: Եթե հավերժահարսը ծաղիկներով է զարդարել ջրի եզերքն ի հիշատակ Արձանի, ուրեմն արձանն իր հետ երկնքում չէ, հետևաբար հրեշտակն ինքը պատանու մտապատկերային զգայախաբությունն էր սուս: Ուրեմն ծաղիկները ծաղկել են իրենք իրենց, և միայն հեքիաթագիրն է նրանց այդ խորհրդանշական իմաստը վերագրում: Այսպես է, որ Նարդունու արձակում բնապատկերը փոխակերպվում է այլաբանության: Այսպես է արտահայտվում Նարդունու հեթանոսության բնապաշտությունը, որին անդրադառնում է նաև Մ. Պարսամյանը: Գրականագետն ընդգծում է, որ Նարդունու հեքիաթներում բնապաշտությունը, կամ ինչպես ինքն է անվանում «բնութենապաշտութիւնը», խորապես հեթանոսական բնույթ է կրում: «Հեթանոսական կեանքը, հին աստուածներն ու աստուածուհիները, ոգիները, ջրանուշները, հրեշտակները եւ միտով ու ոսկորով գեղեցիկ աղջիկները, արժանաւոր տեղ ունին իր գրականութեան մէջ»²⁷⁷, -գրում է մենագրության հեղինակը:

Այսպիսով Նարդունու հեթանոսությունը խորապես բնապաշտական է, խորհրդապաշտական և զգայապաշտական: Նարդունու հեթանոսությունը արևմտահայ հեթանոսական գրական շարժման յուրօրինակ շարունակությունն է, բայց ի տարբերություն «հեթանոսների» Շ. Նարդունու հեթանոսական հետաքրքրությունները զերծ են պայքարի ոգուց, պատմականությունից և ավելի շատ գեղագիտական ու կրոնական բնույթ են կրում, և դրանով է պայմանավորված նաև մաքուր երևակայության ժանրի՝ հեքիաթի և ավանդազրույցի ընտրությունը:

Zarouhie Arakélian – *Chavarche Nardouni et le paganisme*. – Cet article a pour objectif de prouver que le paganisme de Nardouni a un caractère profondément naturaliste, symboliste et sensualiste.

Nous avons étudié à fond la conception du monde de l'écrivain de l'Arménie occidentale Chavarch Nardouni. Nous avons présenté l'une de ces particularités, c'est la réfutation de la souffrance de la doctrine chrétienne, en la considérant comme le point de départ du paganisme. Et pour affirmer cette observation nous avons fait des parallèles entre les œuvres de Shant, de Varoujan. On a pris aussi en considération une autre particularité de la conception du paganisme, c'est le choix du genre.

Ses genres préférés sont: le conte, la légende qui sont des genres hermétiques. Ce sont les meilleures expressions de l'époque païenne.

L'article est très utile, parce que nous avons tâché de présenter aux lecteurs une période peu connue de la littérature de l'Arménie occidentale du début du siècle.

²⁷⁶ Նույն տեղում՝ էջ 28:

²⁷⁷ *Մկրտիչ Պարսամյան*, Շաւարշ Նարդունի, Փարիզ, 1933, էջ 16:

«ՄԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅ ԷՊՈՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

1874 թվականին Գարեգին Սրվանձտյանը հրատարակեց էպոսի առաջին տարբերակը՝ «Գրոց-բրոց և Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Ե՛վ Գ.Սրվանձտյանը, և՛ Մ.Աբեղյանը, որը 1889 թվականին հրատարակեց էպոսի երկրորդ տարբերակը՝ «Դավիթ և Մհեր» վերնագրով, հրատարակության նախաբաներում զանազան տեղեկություններ են հաղորդում իրենց գրի առած պատումների, ասացողների, այն բարբառների առանձնահատկությունների մասին, որոնցով պատմվել է էպոսը: Սրվանձտյանը կարծում է, «որ պատմածին նյութը Արծրունյաց նախարարության և Մասնա գավառի շինությունն ու սկզբնավորությունն է»²⁷⁸: Նա ուշադրություն է դարձնում նաև պատումի մեջ տեղ գտած անախրոնիզմների, կենցաղի, սովորությունների նկարագրության վրա, ինչպես նաև բացատրում հիշատակվող աշխարհագրական վայրերի անունները: Մ. Աբեղյանը այլ կողմերի հետ նշում է իր գրի առած պատումի հատկապես գեղարվեստական արժանիքները՝ հակիրճությունը, պատկերավորությունը, ոճի ներդաշնակությունը, ամբողջականությունը, ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական հերոսների մարմնավորման միջոցները:

Էպոսի նկատմամբ հետաքրքրությունը գնալով մեծանում էր: 1913 թվականին արդեն հայտնի էին ավելի քան 20 տարբերակներ, կատարվում էին ուսումնասիրություններ (Բ.Խալաթյան, Մ.Աբեղյան, Ստ. Կանայան, Գ. Խալաթյան): Գիտնականները փորձում էին էպոսն ուսումնասիրել բազմակողմանիորեն: Կարծիքներ էին հայտնվում էպոսի առասպելական, երևակայական տարրերի մասին, այնտեղ հանդիպող աշխարհագրական վայրերի, հերոսների անունների, հին հայկական վիպական ասքերի և մյուս ժողովրդների էպիկական ստեղծագործությունների հետ ունեցած կապերի վերաբերյալ:

Իր «Հայ ժողովրդական վեպ» ընդարձակ ուսումնասիրության մեջ Աբեղյանը այն տեսակետն է զարգացնում, որ էպոսի հերոսները իրենց նախատիպերն են ունեցել հայոց պատմության մեջ: Նա էպոսի ծննդավայրը համարում է Մասունը, իսկ նրա պատմական հիմքը՝ Մասունի պատմությունը: Գրքում մանրամասնորեն լուսաբանվում է Մասունի պատմությունը արաբական արշավանքների և ավելի ուշ ժամանակաշրջանի դեպքերը, ճշտվում են էպոսի պատմական կորիզն ու նրա հետագա շերտավորումները:

Որոշելով էպոսի պատմական հիմքը՝ հեղինակը, սակայն, երբեմն ընկնում է չափազանցությունների մեջ: Աբեղյանը ձգտում է էպոսում փնտրել իրական կյանքին, Մասունի իրական պատմությանը համապատասխանող դրսևորումներ: Այսպես՝ Աբեղյանն էպոսի գրեթե բոլոր հերոսներին համապատասխանեցնում է պատմական դեմքերին, նրանց մեջ փնտրում պատմական իրական անձե-

²⁷⁸ Գ. Սրվանձտյանց, Գրոց-բրոց և Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 128:

րի որոշակի գծեր ու արարքներ, որոնք, իր կարծիքով, համընկնում են վիպական հերոսների գծերին ու արարքներին: Եթե «Ազգային վեպ» աշխատության մեջ Աբեղյանը Թոռնիկի մասին խոսում է իբրև Դավթի հավանական նախատիպի, ապա վերը նշված հոդվածում նա արդեն առանց տատանվելու գրում է. «Վեպի գլխավոր հերոսը՝ Դավիթը դա Դավիթ Բագրատունին է, որդի Բագրատի»²⁷⁹: Նրա կարծիքով՝ Յոան Վերգոյի կերպարը պատմական անձի՝ Վիգեն իշխանի արձագանքն է²⁸⁰, Քեռի Թորոսը Թեոդորոս Ռշտունին է²⁸¹, Ձենով Օհանը՝ Խութեցի Հովնանը և այլն: Նույնիսկ Ձենով Օհանի այնպիսի ակնհայտ վիպական գիծ, ինչպիսին է նրա հզոր ձայնը, Աբեղյանը ձգտում է բացատրել՝ ելնելով իրական փաստից: Խութեցի Հովնանի մասին նա գրում է. «Թե ի՞նչ մարդ է եղել Հովնանը, պատմությունը լռում է այդ մասին: Անշուշտ, նա հասարակ մարդ չի եղել, որ առաջնորդել է Մասունցոց հարձակվել Յուսուֆի վրա և դիմադրություն ցույց տվել Բուղային: Եթե նա հասարակ մարդ էլ եղած լինի, ձայնն չի եղել, որ նուեցող է եղել, նրա ձայնն անց է կացել... Այդ իմաստով է, հարկավ, գործածված սկզբնապես Ձենով Հովանի մակդիրը, որ հետո ժողովրդական վեպի ոգով ըմբռնվել է ֆիզիկական իմաստով՝ իբրև գոռացող»²⁸²:

Վիպական հերոսների կյանքի առանձին պահերը ևս, Աբեղյանի կարծիքով, հիմնված են առանձին պատմական անձերի կյանքի հիման վրա: Այսպես՝ Էպոսում Մհերի ժայռի մեջ մտնելը նա համարում է այն իրադարձությունների արտացոլումը, որ տեղի է ունեցել երկու իշխանների՝ Դավիթ Բագրատունու եղբայր Աշոտի և Դավիթ Բագրատունու որդի Աշոտի, ինչպես նաև սասունցի վերջին իշխանի՝ Շահնշահի կյանքում. նրանց գերի էին վերցրել: Եվ Աբեղյանը տարակուսում է, թե ինչու է Էպոսի վերջին հերոսը Մհեր կոչվել. «Պատմական դեպքերի հիշողությունը պարզ երևում է, բայց թե ինչպես ոչ թե Աշոտ կամ Շահնշահ անունն է պահված, այլ Մհեր, այդ մենք բացատրել չենք կարողանում: Հարկավ դրա համար ազդած է Մասնա պատմության որևէ մեզ անծանոթ նշանավոր անձ ու դեպք»²⁸³:

Քննելով այս հարցը՝ Ա. Պետրոսյանը նմանություններ է տեսնում Մհերի և իրանական Միթրա-Միհրի միջև: Էպոսում Մեծ Մհերը արդար է, նա միայնակ, առանց զենքի է կոժվում առյուծի դեմ, Էպոսի հերոսներից միակը, որ դաշինք է կնքում հակառակորդի հետ (հմմտ. հնդ-իրան.-mitra «համաձայնություն, դաշինք»): Սրան պետք է ավելացնել, որ Մեծ Մհերը կոչվում է Առյուծաձև (նա սպանում է՝ «ձևում է» առյուծին), բայց այս մականունը կարելի է մեկնաբանել նաև իբր «առյուծի ձև ունեցող»²⁸⁴, իսկ առյուծը Խալդիի սիմվոլն էր: Էպոսում Մհերը երկփեղկվել է երկու կերպարի՝ Մեծ և Փոքր Մհերների: «Մհերի դուռը», որտեղից պետք է վերածնվեր Փոքր Մհերը, ուրարտական ժամանակներում կոչվել է «Խալդիի դուռ», որը ցույց է տալիս ուրարտական Խալդիի և հայ Մհերի կերպարային հաջորդականությունը և Խալդիի հնարավոր ազդեցությունը արևմտյան միթրաիզմի ձևավորման վրա²⁸⁵:

²⁷⁹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 83:

²⁸⁰ Նույն տեղում, էջ 84:

²⁸¹ Նույն տեղում, էջ 90:

²⁸² Նույն տեղում, էջ 83:

²⁸³ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 88:

²⁸⁴ Թ. Ավդաբեկյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1929, էջ էջ 45:

²⁸⁵ И.М. Дьяконов, Предыстория армянского народа, Ер. 1968, стр. 91-93.

Ավդալբեկյանը գտնում է, որ այդ մակդիրի տվյալ իմաստը նախնական չէ: «Անշուշտ, մնում է ընդունել, որ «Առյուծաձև» նշանակում է առյուծանման կամ ուղղակի Առյուծ Մհեր»²⁸⁶:

Միհրի՝ արևի աստծո պաշտամունքը իր ժամանակին լայնորեն տարածված էր Արևելքի բազմաթիվ երկրներում: Ավդալբեկյանը ենթադրում էր, որ «առյուծաձև» մակդիրն իր իմաստով ևս սերտորեն կապված է Մհեր բառի իմաստի հետ. «Եվ որովհետև Մհեր-Միհրն արեգակն է, ուրեմն Առյուծ Մհերը նույն ինքն Առյուծ-Արևն է: Հայ ժողովրդի մի հավատալիքի համաձայն «արևն արշավում է հեծած մի առյուծ, որը մի մեծ սուր ձեռքին՝ նրան պաշտպանում է չար ոգիներից: Ըստ Ռայնաքի՝ հին պարսիկների ըմբռնմամբ՝ առյուծը սրբազան կրակի խորհրդանիշն է: Հենց նույն այս Առյուծ-հրի կամ Առյուծ-Արևի հավատալիքի արձագանքը կարող է լինել մեր ժողովրդական վեպի Առյուծաձև ածականը կամ Մհերի Առյուծ մակդիրը»²⁸⁷:

Տվյալ խնդրին անդրադարձել է նաև Կ. Մելիք-Օհանջանյանը «Միթրա-Միհրը» «Սասնա ծռեր» էպոսի մեջ» ուսումնասիրության մեջ: Նա գտնում է, որ երկու տեսակետն էլ չի սպառում հարցը. «Եթե գիտնականների առաջին խմբի տեսության մեջ առյուծասպանության հոյարարքը միայն զուգադրության և համեմատության միջոցով է սահմանափակվում և չի շոշափվում առյուծի ֆունկցիոնալ էության հարցը, որ լռելայն զանց է առնվում, ապա երկրորդ խումբը, կարծես, անտեսում է առյուծասպանության արարքը և միայն անցողիկ ակնարկում է, շոշափում առյուծի ֆունկցիոնալ էությունը պարսից դիցաբանության և դրանից ելնելով՝ նաև պետականության մեջ: Քննարկվող հարցը թվում է մեզ ավելի բարդ բնույթ ունեցող և կարիք ունի այլ լուսաբանության»²⁸⁸:

Ա. Պետրոսյանը նմանություններ է տեսնում էպոսի հերոսների և հայկական դիցարանի աստվածների ամուսնական և արտամուսնական կապերի մեջ: Էպոսի հերոսների տոհմում հայտնի են Ծովինար-Բաղդադի խալիֆ, Սանասար-Դեղձուն, Մեծ Մհեր-Արմաղան-Իսմիլ խաթուն-Նանե, Դավիթ-Խանդուր-Չմշկիկ սուլթան և Փոքր Մհեր-Գոհար ամուսնական և արտամուսնական կապերը: Հայկական դիցարանում հայտնի են Արամազդ-Անահիտ, Արամազդ-Աստղիկ, Վահագն-Աստղիկ զույգերը և Վահագն-Անահիտ-Աստղիկ եռյակը: Արամազդի և Վահագնի կապերը միևնույն դիցուհիների հետ թերևս արձագանքներ են այն բանի, որ և՛ Արամազդը, և՛ Վահագնը շարունակում են լուսավոր երկնքի (արևի) և ամպրոպի աստվածների միավորված հատկանիշներով կերպարը: Այս եռյակները հիշեցնում են Մեծ Մհերի և Դավթի սիրային կապերը: Ազգային նահապետների շարքում նման հարաբերություններ հայտնի են միայն Արա Գեղեցիկի ավանդության մեջ: Արան ամուսնացած էր Նվարդի հետ, որի հետևանքով նա ի վերջո զոհվում է: Այս դրվագը հիշեցնում է Մեծ Մհերի և Իսմիլ խաթունի և Դավթի ու Չմշկիկ սուլթանի արտամուսնական կապերը, որոնց հետևանքով հերոսները զոհվում են: Հատկանշական է, որ հեքիաթում Արա Գեղեցիկը զոհվում է ոչ թե Արարատյան դաշտում, ինչպես Խորենացու գրքում, այլ Խլաթում, այսինքն էպոսի «առաջնագոհ» Դավթի սպանության վայրում:

²⁸⁶ Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 77-78:

²⁸⁷ Նույն տեղում:

²⁸⁸ Կ. Մելիք-Օհանջանյան, «Միթրա-Միհրը «Սասնա ծռեր» էպոսում, «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք 1-ին, Երևան, էջ 309:

Ծովինարը՝ որպես տոհմի նախամայր և ջրային դիցուհի, նման է Անահիտին, որի իրանական նախատիպը ևս կապված է ջրի հետ: Հետաքրքիր է նշել, որ Ծովինարի ու հրեղեն ձիու դրվագում վերջինս արևի աստծու (=ուրարտ. Շիվինիի) սիմվոլն է, որը կարող է որոշակի վերակազմության հնարավորություն տալ: Անահիտի և Ծովինարի ամուսինների համապատասխանության ենթադրությունը նորից ակնարկում է Արամազդի՝ հայոց գլխավոր աստծու ոչ միայն ամպրոպային, այլև արևային հատկանիշները (հմմտ. Զևս, և Զևսի ու Արամազդի նույնացումը):

Գ. Ղափանցյանը Ծովինարի անունը կապում է վերականգնվող Նար դիցանվան հետ: Ըստ գիտնականի այս Nara հավերժահարսի հետ է կապվում հեթանոսական շրջանից մնացած մեր Նարի-ն, որ ժողովրդի մեջ դարձել է Նուրի՝ «Նուրի Նուրին եկել է» երգում և այլն²⁸⁹, որին ոչ հնդեվրոպական ծագում է վերագրում, թեև քննարկում է նաև հուն. Ներսես դիցանունը:

Ծովինարը՝ որպես երկվորյակների մայր, կապվում է պտղաբերության, ջրային տարերքի հետ, և բացի այդ՝ կայծակի ու փայլակի անձնավորումն է: Ծովինարը համեմատվում է նաև գերմանական, լատիներեն հաղորդմամբ Nerthus (nerto-) դիցուհու հետ, որի արական անվանակից, ծովայինների հովանավոր սկանդ. Նյորդը Ֆրեյի և Ֆրեյայի՝ նույնարմատ անուններով երկվորյակային տիպի աստվածների հայր էր: Ծովինարի անունը հենց երկնային ծիրանի ծովի անագրամն է՝ որտեղ ծնվում է որպես ամպրոպային աստվածություն դիտարկվող Վահագնը, և նա մարմնավորում է ոչ միայն կայծակն ու փայլակն, այլև այդ «ծովը»: Ծով արմատն այս անվան մեջ երկրորդային հավելումն է, որը խորհրդանշում է դիցուհու կապը երկնային ու երկրային ջրերի հետ: Մ. Աբեղյանի կարծիքով Ծովինար անունը ծագում է Ծովյան- ար ածանցյալ ձևից, քանի որ կա Ծովինարի նաև Ծովյան (Էպոսում՝ Օովյալ) տարբերակը, բայց ասվածը ցույց է տալիս Գ. Ղափանցյանի մեկնաբանության իրավացությունը (ծով+Նար): Անվան բուն ձևը պետք է իրոք լիներ Նար: Երգերի կրկներգերում հանդիպող «հոյ Նար» և շրջված «Նարոյ», «Նարհոյ» ձևերում հոյը Գ. Ղափանցյանը մեկնաբանում է որպես «մեծ, լավ»՝ համեմատելով հոյանամ և հոյակապ բառերի հետ: Այս հոյը պետք է ծագեցվի հնդեվրոպական «prti»-«տեր, ամուսին, պետ», արմատից (ինչպես և հոյակապն ըստ Հ. Աճառյանի): Նույն արմատի մի տարբերակով է կոչվել հայոց հնագույն դիցարանի աստվածների նահապետը (հմմտ. Հայկ): Այսպիսով՝ հոյ-ն պետք է իմաստավորվի որպես «տիրուհի, մեծ աստծու կին, զուգակից», ինչպես և Հայ(կ)՝ «տեր, երկնքի, ամպրոպի աստված», որտեղ երկու ձևերն էլ փաստորեն մականուններ՝ կոչումներ են՝ ծագած թերևս միևնույն արմատի ձայնադարձային տարբերակներից, իսկ Ծովյանը պետք է լինի Նարի մակդիրը: Այսպիսով՝ Ծովինարը հնագույն մի դիցուհի է, վերակազմության մեջ՝ ամպրոպի աստծու կինը:

Ազգածին նահապետների և Էպոսի հերոսների համապատասխանությունները ցույց են տալիս նաև նրանց համակարգի կապը մյուսների հետ: Այսպես՝ Հայկը, որպես դյուցազունների տոհմի նահապետ, համապատասխանում է Արամազդին, Արա Գեղեցիկը՝ Մհերին, Միհրին և Խալդին և այլն: Հատկանշական է վերջին կերպարի կրկնակի ներկայացվածությունը՝ Արա Գեղեցիկ և նրա որդի

²⁸⁹ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 295-300:

Արա, որոնք հիշեցնում են էպոսի երկու Մհերներին: Միննույն ժամանակ այս համակարգերը բացահայտ ընդհանրություններ են դրսևորում և մյուս վիպաշարերի հետ (հմմտ. օրինակ՝ Սանասարի և Երվանդի, Փոքր Մհերի և Արտավազդի կերպարային առնչությունները):

Ուսումնասիրելով և շեշտը դնելով էպոսի առասպելական կողմի վրա՝ Թումանյանը Հայկ բառի անվան հետ սերտորեն կապված է համարում Դավթի անունը: Նա գրում է. «Հայկական էպոսը հայտնի է Մասունցի Դավիթ կամ Մասմա Ծոեր անունով: Բայց ամեն մի լուրջ բանասերի համար պարզ է, որ դա Հայկի առասպելն է»²⁹⁰: Այս միտքը նա ընդգծում է «Հայկական էպոսի բառարանից» ուսումնասիրության մեջ և գտնում, որ Հայկի առասպելը ժամանակի ընթացքում մի քանի անգամ ենթարկվել է փոփոխությունների և զարգանալով ձեռք է բերել իր ավարտուն, ամբողջացած տեսքը մեր էպոսում: Իր այս վարկածը հաստատող վկայությունից մեկը բանաստեղծը համարում էր այն, որ Հայկ և Դավիթ անունները նշանակությամբ համարժեք են: Հենց այդ էլ նա ցանկացել է ապացուցել իր հետազոտության մեջ: Բանաստեղծը գրում է. «Ես ուզում եմ ցույց տալ, որ հայ դուստրական վեպը, ինչքան էլ պատմական տարրեր ունենա իր մեջ, իրական վեպ չի, որ Մասունցի Դավթի վեպը Հայկի առասպելն է, որ Հայկ ու Դավիթ միննույն գաղափարն են արտահայտում»: «Անկասկած, Հայկն ու Դավիթը իրենց էպոսներով նույն իմաստն ունեն և նույն գաղափարն են բովանդակում»:

Ահա թե ինչու է Թումանյանն անդրադառնում Դավիթ բառի իմաստի և ծագման հարցին: Իր այս պրպտումների մեջ Թումանյանը կարծես թե շարունակում է բանավեճը հայ բանագետների հետ. «Մինչդեռ կարծում են, թե էս կամ էն Դավիթ հայ իշխանն է իր անունը տվել հայ ժողովրդական էպոսին, ես հակառակն եմ կարծում, որ կա մի աղբյուր, որ Դավիթ անունը տվել է ն՝ հայ էպոսին, և՛ հայ իշխաններին, և՛ Վրաստան, և՛ Ռուսաստան, և՛ ամբողջ Եվրոպա»²⁹¹:

Որոշումների ընթացքում Թումանյանը օգտվում է ամենատարբեր նյութերից: Բանաստեղծի սևագրություններում արտացոլվում է այն մեծ աշխատանքը, որ նա կատարել է Դավիթ բառի նշանակությունը բացահայտելիս: Ի վերջո, բանաստեղծը հասնում է այս բառի ակունքներին՝ կապելով այն հնդկական վեդաների հետ: Դավիթը «մեր էպոսի մեջ լուսավոր ու ամենակարող ուժ է ներկայացնում հնդկական Միվայի նման: Եվ հենց էստեղից էլ առնում է իր ծագումը: Վեդայի մեջ - դեպի՝ աստվածների ընդհանուր անունն է, որ կնշանակի պայծառ, գեղեցիկ, լուսավոր և ամենաուժեղ, ամենակարևոր»²⁹²:

Հետաքրքիր է, որ Դավիթ բառի ակունքների մասին նույն կարծիքն է արտահայտում նաև Ավ. Իսահակյանը: Վերջինս իր «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» հոդվածում առաջ է քաշում հետաքրքիր դրույթներ, վարկածներ «Մասունցի Դավթի» դիցաբանական, առասպելական բազմաթիվ տարրերի, մասնավորապես նրա գլխավոր հերոսների՝ Դավթի և Մհերի անունների մասին: Դավթի անվան առաջացումը Իսահակյանը նույնպես կապում է հնդկական վեդաների հետ. «Ոչ իբրև պարադոքս, այլ իբրև հիպոթեզ պիտի ասենք, որ «Դավիթ» կոչումը գալիս է չափազանց խոր հնությունից: Հնդկական վեդաների մեջ աստ-

²⁹⁰ **Հ. Թումանյան**, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 358:

²⁹¹ **Հ. Թումանյան**, նշվ. աշխ., էջ 375:

²⁹² Նույն տեղում, էջ 376:

վածների ընդհանուր անունը *Դյավ* է, որ նշանակում է ամենագոր, լուսավոր, պայծառ: Կարելի է մտածել, որ *Դավիթ* անունը հոմանիշ չէ բիբլիական նշանավոր հովիվ թագավորի՝ *Դավթի* հետ, այլ, հավանական, վերջինս էլ նույն վեդայական աղբյուրից է ծագել»²⁹³:

Ինչպես նկատել են երկու բանաստեղծներն էլ, «դյավը» իր նշանակությամբ պահպանվել է Մոնղոլիայում: «Թուրք-թաթար-մոնղոլական առասպելների մեջ, գրում է Թումանյանը, դեր դարձել է տեք, միշտ պահելով իր իմաստը: Տեքը- Տուրուք, Տուրուքը- Տուվուք, Տուվուքը- Դավուք կամ Դավիթ»²⁹⁴: Ահա ինչ է գրում Իսահակյանը. «Սակայն թուրքական և մոնղոլական առասպելների մեջ *Դյավը* պահպանել է իր նախկին իմաստը, լեզվական և էվոլյուցիայի մեջ հետզհետե ընդունելով *Տվեն*, *Տվին*, *Տեք*, *Տաբաթ*, *Տուբաթ*, *Տուվաթ*, *Տավութ*, *Դավութ* ձևերը: Մոնղոլական էպոսի մեջ առասպելական Չինգիզխանը կոչվում է *Դավուք* կամ *Դավիթ*, որ նշանակում է հենց մոնղոլ լեզվով էլ՝ աստվածային»²⁹⁵:

Սակայն կրոնափոխության ժամանակ տեղի է ունենում հետևյալ բնորոշ երևույթը, որի վրա երկու բանաստեղծն էլ ուշադրություն են դարձնում. մի կրոնում՝ բարու մարմնացումը մյուսում վերածվում է չարի մարմնացման. «Աստվածայինը ժամանակի ընթացքում, գրում է Թումանյանը, նոր գաղափարների ու նոր աստվածների գալով, կորցնում է իր ունեցած նախկին պաշտամունքը, հետզհետե իջնում, դառնում հեգնանքի, արհամարհանքի, երբեմն նույնիսկ թշնամանքի առարկա: Երեկվա բարին էսօր դառնում է չար, պայծառը՝ խավար, ինչպես, դևը՝ քաջք և այլն»²⁹⁶: Եվ ժամանակի ընթացքում դյավը կորցնում է նախնական էությունը. «Ինչպես Հայկը կամ Խեքը, որ միայն իր վիթխարիությունն է պահել, բայց երկուսն էլ, իբրև անցած պաշտամունքներ, կորցրել են իրենց աստվածային հատկությունները մեր ժողովրդի մեջ, մինչդեռ կենդանի են Մոնղոլիայում»²⁹⁷: Իր գրառումներից մեկում Թումանյանն ուղղակի արտահայտում է այն միտքը, որ *Դավիթը* մեր էպոսի մեջ, անկասկած, մտցրել են թաթար-մոնղոլները, ինչպես և պարսիկները՝ փահլան բառը: Այստեղ Թումանյանը *Դավիթ* անվան յուրահատուկ գործածությունը կապում է մոնղոլական էպոսի հետ. «Եվ Տուրուք, Տուվուք, կամ Դավիթ անունը, որ էնքան շատ է ընդունված թուրք-թաթար-մոնղոլական հին գրույցներում, նշանակում է տեք, աստվածային, ապա դյուցազուն, և սովորաբար գործ է ածվում որպես ածական:

Իբրև ածական՝ *Դավիթ* անունը գործածվում է նաև հայկական էպոսի մեջ: Օրինակ, երբ *Դավիթը* գնում է Խանդուք խանումի պալատը, ուր արդեն առաջուց եկած էին նստած 39 ուրիշ հսկաներ, էպոսն ասում է. «Աթոռ մը թալեցին Տավթի տակ, նստավ մեջ էն 39 Տավիթներու, որ ուրեմն առաջ աշըղներ եկեր՝ բերեր էին: Էն 39 Տավիթներ, որ սեղան դրած հաց կուտեին, իրենց թրեր չըլտըրեր դրեր էին սեղանի տակ...» (Ջոջանց տուն կամ Սասմա ծոեր, խմբ. Մտ. Կանայանի, Վարդապատ, 1910, էջ 27)»²⁹⁸:

²⁹³ *Ավ. Իսահակյան*, Երկ. ժող., հ.4, էջ 201:

²⁹⁴ *Հ. Թումանյան*, նշվ. աշխ., էջ 376:

²⁹⁵ *Ավ. Իսահակյան*, նշվ. աշխ., էջ 202:

²⁹⁶ *Հ. Թումանյան*, նշվ. աշխ. էջ 387:

²⁹⁷ Նույն տեղում, էջ 378:

²⁹⁸ *Հ. Թումանյան*, նշվ. աշխ., էջ 377:

Սո. Կանայանի տարբերակում Դավիթ հատուկ անունն օգտագործվում է իբրև հասարակ անուն, հսկա իմաստով: Ավ. Բսահակյանն իր հոդվածում բերում է հենց նույն օրինակը, բայց այն բնութագրում է՝ առանց կապելու մոնոլոգական էպոսի հետ: «Մեր վեպի մեջ, - գրում է նա, - Դավիթ կոչումը ունեցել է մի ուրիշ էվոլյուցիա. նա դարձել է հասարակ գոյական անուն, նա ստացել է քաջի, կտրիճի, փահլևանի, հսկայի իմաստ»²⁹⁹: Թումանյանի այն միտքը, որ Հայկը և Դավիթը մարմնավորում են մի գաղափար, վիճելի է: Իհարկե, Հայկը և Դավիթը կրում են հերոսական գծեր, բայց միավորել այդ դյուցազուններին և նրանց անունները ըստ իմաստի, ըստ նշանակության, հազիվ թե ճիշտ լինի:

Մեր էպոսի մյուս ուսումնասիրողը՝ Բագրատ Խալաթյանը, իր «Հայ ժողովրդական դյուցազնական վեպը» աշխատության մեջ էպոսի պատմական ատաղձը Աբեղյանի նման համարում է արաբների արշավանքը Հայաստան: «Այդ անցքերը, - գրում է Խալաթյանը, - պետք է անջնջելի ապրելին նրա հիշողության մեջ, շարժելին նրա երևակայությունը, գործունեության հրավիրելին նրա ստեղծագործական ոգին»: Արաբների արշավանքը, Խալաթյանի կարծիքով, «պատմական այն ընձյուղն է, որի վրա ծաղկել է հայ դյուցազնական վեպը»: Խալաթյանն իր աշխատության մեջ վերաշարադրում է արաբական արշավանքի բոլոր հիմնական դեպքերն ու էպոսի ողջ բովանդակությունը: Աբեղյանի նման նա ևս որոնում է էպոսի հերոսների իրական համապատասխանությունները, միայն էպոսի հերոսների նախատիպեր է անվանում պատմական այլ անձերի: «Վեպի մի քանի հերոսներին, - գրում է Խալաթյանը, - դժվար չէ մեզ հայտնի պատմական անձնավորություններում ճանաչել: Ցոան Վերգոն, որ թշնամուն տեսնելիս հրամայում է փակել քաղաքի դռները և ինքը փախչում, տան մեջ պահվում, հավատարաց Վասակ Արծրունու կատարյալ տիպարն է, որ հարկավ ատելի պետք է լիներ ժողովրդի մեջ: Սասունցի Դավթի կերպարում Խալաթյանը տեսնում է Աշոտ Արծրունու, Գուրգեն Արծրունու և մյուս անձերից մի քանի գծեր, այսինքն՝ Դավթի կերպարը համարում է հավաքական: Այդ կերպարի մեջ գիտնականն ընդհանուր գծեր է գտնում նաև Աստվածաշնչի Դավթից: Բայց նա ընդգծում է, որ Դավիթն ավելի երկրային հերոս է, որի մեջ մարմնավորվել են ժողովրդի իդեալները: Միերը պատկանում է առասպելներին, Դավիթը՝ պատմությանը: Միերը մենամարտում է երկնային աստեղց համար, Դավիթը՝ հայրենյաց թշնամիների հետ»:

Իր աշխատության մեջ Խալաթյանը շոշափում է նաև հայ և իրանական էպոսների կապերի հարցը: Խոսելով հայ և իրանական էպոսների միանման դրվագների, իրանական էպոսի՝ հայկականի վրա ունեցած ազդեցության մասին, Խալաթյանն աշխատում է իրեն հեռու պահել ծայրահեղություններից, շուտափույթ եզրակացություններից. «Որչափ էլ զորեղ լինի ազգերի փոխադարձ կուլտուրական ազդեցությունը, - գրում է բանասերը, - վերջինս, հայտնի պայմաններում, որոշ սահմաններից չի անցնում: Ամեն մի ազգ ունի յուր աշխարհայեցողությունը, իր մտածելու եղանակը, յուր ստեղծող ոգին»³⁰⁰:

Խալաթյանի այս նախազգուշացումն իզուր չէ, քանի որ իրանական էպոսի ազդեցության մասին հենց իր բերած օրինակները միշտ չէ, որ համոզիչ են: Այսպես՝ խոսելով Սասունցի Դավթի և իրանական դյուցազն Ռոստոմի մասին՝

²⁹⁹ Ավ. Բսահակյան, նշվ. աշխ., էջ 202:

³⁰⁰ «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1907, №10, էջ 350:

գիտնականը գրում է. «Հայ դյուցազնի վրա, անտարակույս, անցել են հռչակավոր պարսից հերոսի մի քանի սովորություններն: Նոքա երկունս էլ ա) շատակեր են, բ) սիրում են որսորդություն, գ) թշնամուն կես են անում, դ) ծառն արմատից հանում և այլն»³⁰¹: Բայց չէ՛ որ սրանք այնպիսի գծեր են, որոնք ընդհանուր են վիպական շատ դյուցազունների համար, և այստեղ խոսք կարող է լինել միայն նմանության մասին, այլ ոչ թե ազդեցության:

Ստ. Կանայանի ուսումնասիրությունները նվիրված են հայ էպոսի պատմական հիմքի պարզաբանմանը: Գիտնականի կարծիքով, հայ հերոսական էպոսի համար նյութ դարձել Մամիկոնյանների տան պատմությունը: Իր «Մամիկոնյանց պատմություն. Մամիկոնյանց նշանակությունը և պատմական աղբյուրները» աշխատության մեջ հետազոտողն իրական պատմական անձերի և էպոսի հերոսների միջև զուգահեռներ անցկացնելով, այդ հերոսների նախատիպերը գտնում է Մամիկոնյանների մեջ: «Սասունցի Դավիթը,- գրում է Կանայանը,- ինքը Սմբատ Մամիկոնյանի որդի Դավիթն է՝ Աշոտ Պատրիկի (743-757) հակառակորդը, որն իր Գրիգոր եղբոր հետ Եման գերի է տարվում, ապա ազատվում է և ասպատակում Վասպուրականը»³⁰²: Եվ ապա «Միերը նույնպես պատմական անձ է երևում և Մամիկոնյան գեթ Մեհեր անունով մեկը մեզ հայտնվում է իբրև քաջ այր»³⁰³: Ձենով Օհանիս, ըստ Կանայանի, համապատասխանում է Խութեցի Հովնանը, քեռի Թորոսին՝ Թորոս Կյուրողապատը, Թևաթորոսին՝ Թեոդորոս Ռշտունին և այլն: Կանայանը էպոսը նման վերլուծության է ենթարկում նաև իր մյուս հոդվածներում, ընդարձակելով իր հետազոտության սահմանները՝ Մամիկոնյանների վրա ավելացնելով Արծրունիներին և Բագրատունիներին: Որպես ապացույց իր դրույթի, Կանայանը անթիվ քանակությամբ փաստեր է բերում պատմությունից և բավականին անհամոզիչ ու անհիմն կերպով պատմական անձերին կապում է էպոսի հերոսների հետ: Այդ հերոսների նույնիսկ ազգակցական կապերի մեջ Կանայանը տեսնում է պատմական անձերի միջև իրականում գոյություն ունեցած ազգակցական կապերը: Պնդելով, օրինակ, որ Մեծ Միերը Համազասպ Մամիկոնյանն է, Կանայանը գրում է. «Պատմական իրողություն է, որ Համազասպ Մամիկոնյանը Ռշտունու փեսան է, ինչպես ժողովրդական վեպի Միերը՝ Թևաթորոսինը»³⁰⁴: Անգամ մի այնպիսի տարածված վիպական թեմա, ինչպես դյուցազունների կռիվն է առյուծի հետ, Կանայանը համարում է իրական իրադարձության արձագանք³⁰⁵:

Ընդհանուր առմամբ ճիշտ որոշելով հայ էպոսի պատմական հիմքը՝ և՛ Աբեղյանը, և՛ Խալաթյանը, և՛ Կանայանը համառորեն ձգտում են նմանություն գտնել արաբական արշավանքի ժամանակ ապրած հայ իշխանների և էպոսի հերոսների միջև՝ որպես էպոսի պատմականության ամենածանրակշիռ ապացույցներ:

Էպոսի շատ գծեր ու կողմեր գիտնականները ձգտում էին բացատրել իրական պատմությամբ: Այսպես էին բացատրվում ոչ միայն էպոսի հերոսների ա-

³⁰¹ Նույն տեղում:

³⁰² «Արարատ», Վաղարշապատ, 1906, № 4, էջ 335:

³⁰³ «Արարատ», Վաղարշապատ, 1906, № 12, էջ 863, 867, 876:

³⁰⁴ **Ս. Կանայան**, «Ջոջանց տուն, Սասմա Ծոեր, Դավիթ և Միեր» ազգային ժողովրդական վեպի պատմականը», «Արարատ», Վաղարշապատ, 1907, էջ 30:

³⁰⁵ **Ս. Կանայան**, նշվ. աշխ., էջ 46-47:

նունները, այլև նրանց գործողությունները, արարքները, բնավորությունը: Մակայն, նրանք որքան էլ շատ փաստեր են բերում իբրև ապացույց իրենց վարկածների, այնքան հակասական ու անհամոզիչ ենք համարում դրանք՝ ելնելով էպոսի էությունից:

Ваган Агабабян – *Вопрос происхождения имен в эпосе “Давид Сасунски”*. – В статье говорится о возникновении имен в эпосе “Давид Сасунский”. Данной теме посвящены многочисленные исследования (М. Абегиан, Б. Халатян, Ст. Канаян, О. Туманян, А. Петросян). Мы попытались сопоставить разные точки зрения, обратиться к мифологическим, народным и историческим элементам этимологии имен, встречающихся в эпосе.

Vahan Aghababayan – *The origin of the names in the epos of “David of Sassun”*. – This paper discusses the origin of the names in the epos of “David of Sassun”. A lot of studies were dedicated to this theme (M. Abeghyan, B. Khalatyan, S. Kanayan, O. Tumanyan, A. Petrosyan). We tried to compare different points of view, turn to mythological, popular and historical terms of ethymology of the names in the epos.

**ANALYSE DES SYSTEMES VERBAUX DE QUELQUES
FORMES TEMPORELLES DE L'INDICATIF EN FRANÇAIS
ET EN L'ITALIEN**

ANAHIT HOVHANNISYAN

Dans notre article nous avons essayé d'analyser les ressemblances et les différences structurales et fonctionnelles entre quelques temps passés de l'indicatif du français et de l'italien.

Pour l'étude des langues proches qui présentent parfois des systèmes très proches, l'un des problèmes principaux est de définir la parenté génétique des langues données et de révéler leurs divergences structurales. Le français et l'italien sont des langues proches appelées langues romanes qui font partie de la famille indo-européenne.

Toutes les langues romanes sont venues d'une langue-mère, c'est le latin. Le français, l'italien et toutes les langues romanes sont dérivées du latin ou mieux elles sont «... le fruit de l'évolution constante du latin parlé à travers des siècles». (Ghino Ghinassi)

Durant cette évolution des langues romanes ont eu tant de changements phonétiques, morphologiques et syntaxiques qu'il devient impossible de comprendre, par exemple l'ancien français. Mais en parlant de l'italien Migliorini dans son œuvre «La storia della lingua italiana» montre que pour l'italien on peut distinguer beaucoup de périodes, mais on ne voit pas entre l'ancien italien et le moderne une coupe décisive comme celle qui divise l'ancien français et le français moderne.

Migliorini ajoute aussi que «...un Italien même illétre, qui dit Dante, ne saisira pas certaines locutions, mais il sait et il entend que cela est sa langue, tandis qu'un Français qui lit la, «Chanson de Roland», même s'il veut apercevoir la langue, doit l'étudier comme une langue morte».

Les traits structuraux des langues romanes, qui déterminent entre eux une communauté typologique, sont

1. la prépondérance des formes analytiques sur le non-analytiques.
2. l'union des catégories de l'aspect et du mode à celle du temps

L'aspect en latin était une catégorie morphologique qui se soumettait à celle du temps. Puis, avec la destruction du flexion de l'aspect les formes analytiques ont remplacé les formes anciennes de l'aspect : les formes analytiques ont commencé à exprimer le fini et la résultativité de l'action dans le plan du passé et du futur.

Dans beaucoup de langues, y compris le français et l'italien, les formes verbales, appelées temporelles, présentent des relations différentes. Qu'est-ce qu'on comprend sous „les relations temporelles dans la langue„?

В обществе появилась значительная по своим масштабам категория детей, которая до последнего времени пребывают как бы в статусе «ничьих». Они живут под одной крышей с родителями, но связи их с семьей атрофированы или разрушены. Отсутствие должного ухода и содержания, пренебрежение интересами и потребностями развивающейся личности, жестокое обращение в родительской семье создают реальную угрозу психофизическому, нравственному развитию безнадзорного ребенка. Школа не в состоянии в полной мере решать проблемы социальной защиты и реабилитации таких детей. Сами дети нередко переходят в ряды беспризорных. Дети ночуют на вокзалах, голодают, имеют аномалии в развитии; многие, сбежав из дома, попадают в руки взрослых, которые используют их в своей преступной деятельности. Тот факт, что общество создает нормы, стандарты поведения, не означает, что оно всегда им соответствует. “Даже идеальное общество не может оставаться надолго идеальным. Представим себе, как пишет Э. Дюркгейм, общество святых, напоминающее образцовый монастырь, где живут идеальные люди. В нем и понятия не имеют о том, что мы называем преступлением, но поступки, которые кажутся незначительными рядовому мирянину, могут вызвать среди них такой же скандал, какой обычно возникает по поводу преступления среди ординарных людей, которым свойственно конформное понимание жизни”. стоящее время науке и практике получили широкое распространение две основные проблемы с подростками девиантного и делинквентного поведения – профилактическая и реабилитационная работа с ними. **Профилактика** - это совокупность государственных, общественных, социально-медицинских и организационно-воспитательных мероприятий, направленных на предупреждение, устранение или нейтрализацию основных причин и условий, вызывающих различного рода социальные отклонения в поведении подростков. **Под профилактикой в социологии, педагогике, криминологии понимаются**, прежде всего, научно обоснованные и своевременно предпринятые действия, направленные на: - предотвращение возможных физических, психологических или социокультурных обстоятельств у отдельного ребенка или несовершеннолетних, входящих в группу социального риска; - сохранение, поддержание и защиту нормального уровня жизни и здоровья ребенка; - содействие ребенку в достижении социально значимых целей и раскрытие его внутреннего потенциала. Так как социальные отклонения могут быть вызваны разными причинами и обстоятельствами, можно выделить несколько типов

профилактических мероприятий: нейтрализующие; компенсирующие; предупреждающие возникновение обстоятельств, способствующих социальным отклонениям; устраняющие эти обстоятельства; контролирующие проводимую профилактическую работу и ее результаты.

Социально-профилактический подход в качестве основной цели рассматривает выявление, устранение и нейтрализацию причин и условий, вызывающих различного рода негативные явления. Сущностью этого подхода является система социально-экономических, общественно-политических, организационных, правовых и воспитательных мероприятий, которые проводятся государством, обществом, конкретным социально-педагогическим учреждением, социальным педагогом для устранения или минимизации причин девиантного поведения. Так, отсутствие целевой информации о последствиях, например, употребления наркотиков, приводит несовершеннолетних, которые их употребляют, к уголовной ответственности, так как практически все уверены, что употребление наркотика - это личное дело каждого, а привлечь можно лишь за их распространение, не зная, что в связи с принятием нового закона о наркотических и психотропных веществах, уголовная ответственность наступает даже за их употребление. Многие несовершеннолетние помимо наркотиков употребляют и токсические вещества: нюхают клей, краски, ацетон, не задумываясь, что это все приводит к летальному исходу, и думают, что от их употребления никакие вредные последствия не наступят, это говорит о том, что с подростками никто не работает в школах, не рассказывают о вреде наркотиков и токсикомании.

Не менее важная в нашем обществе проблема профилактики алкоголизма среди подростков, а также информирование их о тяжелых социальных и психоневрологических последствиях пьянства и алкоголизма. Отсутствие профилактической работы, например, с будущими родителями, ведет к увеличению количества детей, родившихся с тяжелыми физическими и психологическими нарушениями, так как несовершеннолетние, особенно юная мать, не знают элементарные правила поведения во время Беременности и не придерживаются жесткого запрета на принятие в это время алкогольных напитков.

Следующий подход - социально-педагогический, заключающийся в восстановлении или коррекции качеств личности подростка с девиантным поведением, особенно его нравственных и волевых качеств личности. Сознательный человек - гражданин - это тот, кто обладает развитой способностью владеть своими побуждениями, поступками во имя нравственных целей и никогда не допустит нарушений закона. Вот, почему у подрастающего поколения следует формировать следующие волевые черты его поведения: - быть хозяином своего слова и дела; - тормозить стремления и мотивы, способные привести к поступкам, наносящим вред обществу; - концентрировать усилия на главном, наиболее важном в настоящее время; - ставить перед собой продуманные и не противоречащие праву цели, подчиняя им мимолетные влечения. Быть свободным - значит обладать развитой волей. Не случайно у подростков и юношей, допускающих аморальные выходки, проступки и преступления, отсутствуют сформированные волевые качества. Отрицательные волевые черты характера подростков (по результатам анкетирования подростков-правонарушителей): нерешительность, отсутствие настойчивости при

проведении в жизнь принятого решения, несформированность независимости и самостоятельного поведения, безынициативность, упрямство, невыдержанность. Наличие этих черт свидетельствует о том, что совершение противоправного деяния подростками и юношами обусловлено слабостью их воли. Любая сложившаяся конфликтная ситуация включает ряд этапов. Первый этап - раскрытие сущности отдельных волевых качеств, правильная их иллюстрация примерами. Второй этап – выработка обобщенных представлений о воле и волевом облике подростка, установление соотношения между смелостью и наглостью; настойчивостью и упрямством; самостоятельностью и неуважением к чужому мнению. Третий этап – планомерное самовоспитание, поиск своих недостатков, путей их исправления. На этом этапе социальный педагог должен помочь подростку в формировании правильной самооценки, пробудить в нем нетерпимость к собственным недостаткам. Четвертый этап - зрелое самовоспитание, т. е. реализация потребности в самоусовершенствовании.

Другой методикой работы социального педагога с дезадаптированными подростками является их реабилитация. **Реабилитация** может рассматриваться как система мер, направленных на решение задач достаточно широкого диапазона - от привития элементарных навыков до полной интеграции человека в обществе. **Реабилитация может** рассматриваться и как результат воздействия на личность, ее отдельные психические и физические функции. **Реабилитация** - это система мер, имеющих своей целью возвращение ребенка к активной жизни в обществе и общественно полезному труду.

Виды реабилитации: медицинский, психологический, социально-экономический, профессиональный и другие. Медицинская реабилитация направлена на полное или частичное восстановление или компенсацию той или иной утраченной функции организма ребенка или на возможное замедление прогрессирующего заболевания. **Психологическая реабилитация** направлена на психическую сферу подростка и имеет своей целью преодоление в сознании подростка с девиантным поведением представления о его ненужности и никчемности как личности. **Социальная реабилитация** - это процесс восстановления способности ребенка к жизнедеятельности в социальной среде, а также самой социальной среды и условий жизнедеятельности личности, которые были ограничены или нарушены по каким-либо причинам. **Под социально-экономической реабилитацией** понимают комплекс мероприятий, нацеленных на обеспечение подростка причитающимися ему денежными выплатами, защиту его законных интересов и прав. *Задачами таких учреждений являются:-* профилактика безнадзорности, бродяжничества, попрошайничества, дезадаптированных детей и подростков;- медико-психологическая помощь детям, попавшим по вине родителей или в связи с экстремальной ситуацией (в том числе физического и психического насилия, опасных условий проживания и др.) в трудную жизненную ситуацию;- формирование положительного опыта социального поведения, навыков общения и взаимодействия с окружающими людьми;- выполнение попечительских функций по отношению к тем, кто остался без попечения родителей или средств к существованию;- психологическая и педагогическая поддержка, способствующая ликвидации кризисных состояний личности;- содействие в возвращении в семью;- обеспечение возможности полу-

чать образование, нормально развиваться;– забота о дальнейшем профессиональном и бытовом устройстве. *Основная цель деятельности таких учреждений – социальная защита и поддержка нуждающихся детей, их реабилитация и помощь в жизненном самоопределении.*

Основную роль играет работа социального педагога, которая, прежде всего, ориентирована на социальное оздоровление внутреннего мира подростка. Социальный педагог должен владеть приемами экстренной диагностики ситуации, в которую попал данный ребенок – в семье, школе, в училище, коллективе; выявления причин возникновения социально - личностно-эмоциональных нарушений.

В практике наметились точки соприкосновения в деятельности комиссий по делам несовершеннолетних и социально реабилитационных центров: КДН и сотрудники центров выявляют неблагополучные семьи, семьи группы риска; КДН анализируют состояние воспитательно-профилактической работы с семьями и детьми на данной территории и предоставляют соответствующую информацию всем участникам системы профилактики детской безнадзорности и правонарушений; КДН и центры совместно с другими субъектами государственной системы профилактики участвуют в проведении широких социальных акций (операция “Подросток”); КДН помогают центрам привлечь различные учреждения к решению проблем материальной поддержки нуждающихся семей и детей (организация бесплатного питания, обеспечение путевками в оздоровительные учреждения, продуктами питания и т.д.); КДН осуществляют привлечение граждан, не выполняющих родительских обязанностей, к административной ответственности, укрепляя тем самым позиции центров в работе с асоциальными семьями. Разносторонние связи складываются у центров с таким субъектом государственной системы профилактики детской безнадзорности, как органы опеки и попечительства. В соответствии со ст. 34 Гражданского кодекса РФ и ст. 121 п.2 Семейного кодекса РФ органами опеки и попечительства являются органы местного самоуправления. Их основная задача - обеспечение оптимальных условий для жизни и воспитания детей-сирот и детей, оставшихся без попечения родителей, защита их личных и имущественных прав.

Социально-реабилитационные центры сотрудничают с органами опеки и попечительства при выявлении детей, оставшихся без попечения родителей, и несовершеннолетних, не имеющих нормальных условий для жизнедеятельности в семье. Специалисты центров (психологи, педагоги, медицинские работники) проводят предварительную работу с потенциальными усыновителями и опекунами, тестируют их, не оставляют без внимания в первые месяцы совместной жизни с детьми. Центры взаимодействуют с органами опеки и попечительства в случае возбуждения в суде исков, связанных с защитой прав и охраняемых законом интересов детей.

Таким образом, мы определили, что девиантное (отклоняющееся) поведение - это поведение индивида или группы, которое не соответствует общепринятым нормам, в результате чего эти нормы ими нарушаются. Девиантное поведение – следствие неудачного процесса социализации личности: в результате нарушения процессов идентификации и индивидуализации человека, такой индивид легко впадает в состояние "социальной дезорганизации", когда культурные нормы, цен-

ности и социальные взаимосвязи отсутствуют, ослабевают или противоречат друг другу. Такое состояние называется аномией и является основной причиной отклоняющегося поведения. Учитывая, что девиантное поведение может принимать самые разные формы (как негативные, так и позитивные), необходимо изучать данное явление, проявляя дифференцированный подход. Отклоняющееся поведение часто служит основанием, началом существования общепринятых культурных норм. Без него было бы трудно адаптировать культуру к изменению общественных потребностей. Вместе с тем вопрос о том, в какой степени должно быть распространено отклоняющееся поведение и какие его виды полезны, а самое главное – терпимы для общества, до сих пор практически не разрешен. Вместе с тем не все формы девиантного поведения требуют столь детального анализа. Криминальное поведение, сексуальные отклонения, алкоголизм и наркомания не могут привести к появлению полезных для общества новых культурных образцов. Следует признать, что подавляющее число социальных отклонений играет деструктивную роль в развитии общества.

Աննա Էյլագյան – Դեռահասների վարքի շեղվածության խնդիրները և դրանց պրոֆիլակտիկան: – Հոդվածում վերլուծության են ենթարկված դեռահասների վարքագծերի շեղվածության տարբեր մակարդակները և դրանց դրդապատճառները: Միաժամանակ մատնանշված են այն հոգեբանական մեթոդները, որոնք կնպաստեն նրանց վերադարձին բնականոն կյանք:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲԱԿԵՑՄԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՊԱՎԵԼ ԱՍԻԼԲԵԿՅԱՆ

Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի հանրապետության հյուսիսարևել-
քում: Մարզը հարավում սահմանակից է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին,
արևմուտքում՝ Լոռու մարզին, հյուսիսում՝ Վրաստանին և արևելքում՝ Ադրբեջա-
նին: Մարզն ունի մոտ 400 կմ միջպետական սահման, որից 350 կմ-ը Ադրբեջանի
հետ է, 50-ը՝ Վրաստանի:

Մարզի տարածքը 2704 կմ² է, որն ունի 5 քաղաքային և 57 գյուղական հա-
մայնքներ:

Տավուշը ՀՀ ամենալեռնոտ և մասնատված մակերևույթ ունեցող մարզերից է:
Մարզի ռելիեֆին բնորոշ են զառիվեր լանջերով խորը ձորերն ու կիրճերը, ուղղորդ
քարափային լանջերն ու սեղանաձև լեռնակատարները: Այստեղ ըստ հորիզոնա-
կան մասնատվածության աստիճանի կարելի է առանձնացնել թույլ մասնատված
(0.2-0.6 կմ/քկմ), միջին մասնատվածության (0.6-10. կմ/քկմ) և ուժեղ մասնատված
(1.0-1.6 կմ/քկմ)³⁰⁸ տարածքներ: Տիրապետող են 12⁰-ից բարձր թեքություն ունեցող
լանջերը և միայն հատակային, ոչ ընդարձակ տարածություններն են, որ տափա-
րակ են և պիտանի են բնակեցման համար: Մշակովի հողատարածությունները և
գրեթե ամբողջ բնակչությունը կենտրոնացված են գետահովիտներում: Մարզի
տարածքի բաշխումը ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության և թեքույթ-
յունների աստիճանի տրված են թիվ 1 և 2 աղյուսակներում: Մարզում տարածքի
ամենաբարձր և ամենացածր կետերի տարբերությունը անցնում է 2600 մ-ից:

Տավուշն առանձնանում է նաև ուղղաձիգ ինտենսիվ մասնատվածությամբ:
Այդ առումով առավելապես աչքի է ընկնում Գետիկի հովիտը:

Աղյուսակ 1.

Տավուշի մարզի տարածքի բաշխումը ըստ ծովի մակերևույթից ունեցած
բարձրության (հա և %)³⁰⁹

Տարածա- շրջաններ և մարզ	Բարձրությունը ծովի մակերևույթից							
	մինչև 500	500-800	800-1000	1000-1500	1500-2000	2000-2500	2500-ից բարձր	Ամբողջը
Իջևանի	-	12520	14575	39489	51390	16120	-	135159
Տավուշի	-	6220	12957	28860	24752	3440	6213	82442
Լոյեմբերյանի	1530	15517	14860	16168	5720	-	-	53795
Տավուշի մարզում	1530 0.6	3427 12.6	42392 15.6	84517 31.1	81662 30.2	19560 7.2	7278 2.7	271396 100

³⁰⁸ *Д. Погоряж*, Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, Е. 1986.
стр. 153:

³⁰⁹ Թիվ 1 և 2 աղյուսակները կազմած են *Л.А. Валесян* ПТК Арм. ССР Е. 1970 գրքի 156 և 184-185 էջերի
տվյալների հիման վրա:

Տավուշի մարզի տարածքի բաշխումը ըստ թեքությունների
աստիճանի (հա և %)

Տարածա- շրջան և մարզ	Թեքությունները աստիճաններով										Ամբողջը
	մինչև 1	1-3	3-5	5-8	8-12	12-16	16-20	20-30	30-40	40-ից բարձր	
Իջևանի	90	1005	1353	9560	28774	22335	33221	29221	6225	3375	135159
Տավուշի	-	200	880	4491	12063	13741	23212	24068	3370	417	82442
Նոյեմբեր յանի	1340	1510	2625	9680	16010	9456	8286	4394	430	64	53795
Տավուշի մարզում	<u>1430</u> 0.5	<u>2715</u> 1.0	<u>4858</u> 1.8	<u>23731</u> 1.8	<u>56847</u> 8.7	<u>45532</u> 21.0	<u>64719</u> 23.8	<u>57683</u> 21.3	<u>10025</u> 3.7	<u>3856</u> 1.4	<u>271396</u> 100

Տավուշն ունի համեմատաբար մեղմ կլիմայական պայմաններ: Տարածքի մեծ մասում հունվարյան միջին ջերմաստիճանը -2°C -ից չի իջնում և միայն սահմանային լեռնաշղթաների մերձկատարային հատվածներում է, որ հասնում է -6°C -ի: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է $18-22^{\circ}\text{C}$ -ի միջև, իսկ տեղումները՝ 450-800 մմ:

Մարզի բնական լանդշաֆտների մեջ գերակշռողը լեռնային անտառներն են: Այն ամենաանտառապատն է ՀՀ-ում, որը կազմում է տարածքի 40.3 %-ը: Դրանք տարածվում են ծովի մակերևույթից 400-2800 մ բարձրությունների վրա: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, որոնք կազմում են տարածքի 40 %-ը, ցածրադիր անտառազուրկ գոտում լեռնադարչնագույն են, կարբոնատային, իսկ լեռնային անտառապատ գոտում՝ լեռնաանտառային, դարչնագույն և գորշ ավազային:

Ի տարբերություն հողակլիմայական համեմատաբար բարենպաստ պայմանների և անտառային հարուստ ռեսուրսների, մարզն աղքատ է հանքահումքային ռեսուրսներով: Փոխարենը՝ հարուստ է ռեկրեացիոն և զբոսաշրջային ռեսուրսներով:

Մարզի տարածքով հոսող գետերը և հիմնականում Աղստը, խորը հովիտներով և իրենց վտակներով մասնատել են լեռնալանջերը, որոնց թեքություններն անցնում են $16-30^{\circ}$ -ից, որի հետևանքով բնակավայրերը հիմնականում ընկած են գետերի և նրանց վտակների արտաբերման կոնների շրջաններում:

Տավուշի տարածքին առավելապես բնորոշ է գետահովտային և ավազանային տիպի տարաբնակեցումը, երբ գետերի ջրահավաք ավազաններում ստեղծվում է բնակավայրերի որոշակի ամբողջություն, սպասարկման միասնական համակարգ, տրանսպորտային և այլ ենթակառուցվածքների ընդհանրությամբ և միջբնակավայրային սոցիալ-տնտեսական կապերով: Այստեղ բնակավայրերը կուտակված են լեռնահովիտներում, երբ այն զուգակցվում է ջրային ուղիների հետ և գետերի հովիտներում: Լեռնահովիտներում բնակավայրերի խտությունը և մարդաշատությունը մեծանում է գետերի վերին հոսանքներից դեպի ստորին հոսանքները շարժվելիս: Բնակավայրերը գտնվում են գետահովիտների ավելի ցածրադիր հատվածներում և ճանապարհների երկայնքով կենտրոնացված են ենթակառուցվածքային տարրերը: Այդ ամենի շնորհիվ գետահովիտներում ձևավորվել են տարաբնակեցման օջախներ: Մարզում գյուղական բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկություններից է ձգվածությունը գետահովիտների և հաղորդակցության ուղիների երկայնքով: Ձևավորվել է գծային

կամ շղթայաձև տարաբնակեցում (Իջևանի և Նոյեմբերյանի տարածաշրջաններ), որը բնորոշ է լեռնաշղթաների մեջ սեղմված և գաղթաբեր լանջեր ունեցող նեղ գետահովիտներին, ինչպես նաև գետահովիտների մոտ խմբված բնակավայրերի ցանց՝ խմբային տարաբնակեցում, որն ավելի բնորոշ է Տավուշի տարածաշրջանին: Գյուղական բնակավայրերը տեղաբաշխված են մարզի հյուսիսային, արևելյան և հարավային շրջաններում:

Տավուշի մարզում տարաբնակեցման սահմանները հաճախ բնությունն է կանխորոշում. դրանք կարող են լինել լեռնաշղթաները, ջրային ուղիները, լանդշաֆտային գոտու սահմանները: Մարզի մշտական բնակեցման վերին սահմանը գտնվում է 1800 մ բարձրության վրա:

Մարզի տարածքի որոշ շրջաններում, մասնավորապես Դիլիջանի գոգավորության սահմաններում, տարաբնակեցման համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում նաև սողանքները, ինչպես նաև ֆիզիկաաշխարհագրական այլ գործընթացներ: Խոշոր սողանքային տարածքներ են Դիլիջանի, Իջևանի, Բերդի տարածքները:

Տավուշի մարզի տարաբնակեցման ժամանակակից տարրերը արդյունք են նաև պատմական իրադարձությունների, հատկապես՝ ավերիչ պատերազմների: Մարզի տարածքում ավերվել և կործանվել են բազմաթիվ բնակավայրեր, նվազել է դրանց թիվը և մարդաշատությունը, փոփոխություններ է կրել բնակչության ազգային կազմը:

Մինչև 18-րդ դարի վերջը Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները ռազմատենչ ցեղերի և աշխարհակալ հզոր տերությունների արյունալի ընդհարումների և անվերջանալի ասպատակությունների թատերաբեմ են եղել: Այստեղ ավարառությանը ու նախճիրով են զբաղվել հոները, սակերը, ալանները, պարսիկները, արաբները, սելջուկ-թուրքերը, թաթար-մոնղոլները, Դադստանի լեռնականները: Թաթար-մոնղոլների աննախադեպ բռնություններից հետո ներկայիս Տավուշի մարզի տարածքը գրեթե հայաթափվեց³¹⁰:

Աղյուսակ 3.

Տավուշի մարզի գյուղական բնակավայրերի թվի փոփոխությունը 1926-2011 թթ.³¹¹

	գյուղերի թիվը ժամանակահատվածի ընթացքում				
	1926-59 թթ.	1959-70	1970-88	1988-2011	1926-2011
ա/ Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{100}{112}$	$\frac{112}{63}$	$\frac{63}{61}$	$\frac{61}{62}$	$\frac{100}{62}$
բ/ վերացված գյուղական բնակավայրերի թիվը	10	49	-	-	59
այդ թվում՝ գյուղեր	7	4	-	-	11
գ/ քաղաքներ դարձած գյուղերի թիվը	2	-	1	1	4
դ/ այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	5	-	2	1	8
ե/ նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը	29	-	1	-	30
այդ թվում՝ գյուղեր	12	-	1	-	13
զ/ վերականգնված գյուղերի թիվը	-	-	-	-	-

³¹⁰ Ռ. Միսնոյան, «Տավուշի մարզ», Եր. 2003, էջ 117:

³¹¹ Աղյուսակը կազմված է Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг. Е. 1962 վիճակագրական ժողովածուի և ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

18-րդ դարի երկրորդ կեսից Ղարաբաղից արտագաղթած տասնյակ հազարավոր հայերի մի զգալի մասը հաստատվեց նախորդ տասնամյակների ընթացքում հայազգի բնակչության մեծ մասը կորցրած Տավուշի մարզի տարածքներում: 18-րդ դարի հատկապես երկրորդ կեսին այս հատվածի հայ բնակչությանը վիճակված էր անցնել գորաշարժեր հիշեցնող գաղթերի միջով: Դրանց ընդհանուր ուղղություններն երկուսն էին՝ դաշտերից դեպի լեռներ և հարավից հյուսիս, թեև եղել են նաև հակառակ ուղղությամբ ավելի կարճ տեղաշարժեր:

Տավուշի բնակեցման նոր ալիքը կապված է ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների հետ, որոնք առաջացրին բնակչության զանգվածային ներգաղթ դեպի Արևելյան Հայաստան, այդ թվում նաև Տավուշի մարզ:

Աղյուսակ 4.

Տավուշի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի փոփոխությունները (1831-2011 թթ.)³¹²

Տարածաշրջաններ և մարզ	Տարեթվեր								
	1831	1897	1926	1959	1970	1988	1995	2001	2011
Իջևանի ³¹³	<u>5196</u> 15 ³¹⁴	<u>21033</u> 33	<u>28124</u> 43	<u>24962</u> 44	<u>29231</u> 27	<u>28978</u> 27	<u>32705</u> 27	<u>33732</u> 27	<u>35300</u> 28
Նոյեմբերյանի	<u>3942</u> 11	<u>11100</u> 15	<u>14354</u> 22	<u>23297</u> 32	<u>27290</u> 18	<u>24191</u> 18	<u>27481</u> 17	<u>26475</u> 17	<u>24200</u> 18
Տավուշի	<u>3063</u> 10	<u>11268</u> 14	<u>20142</u> 35	<u>31814</u> 36	<u>28341</u> 18	<u>22456</u> 16	<u>25042</u> 16	<u>23445</u> 16	<u>22500</u> 16
Տավուշի մարզում	<u>12201</u> 36	<u>43401</u> 62	<u>62620</u> 100	<u>80073</u> 112	<u>84862</u> 63	<u>75625</u> 61	<u>85228</u> 60	<u>83635</u> 60	<u>82000</u> 62

Ռազմավարական բնույթի ճանապարհների շինարարությունը (Երևան - Սևան - Դիլիջան - Իջևան - Թբիլիս, Դիլիջան - Վանաձոր - Իջևան - Նոյեմբերյան - Այրում), ինչպես նաև բազմաթիվ այլ բանուկ ճանապարհների վերակառուցումը մեծ դեր են խաղացել մարզի բնակավայրերի ձևավորման և զարգացման համար:

Մարզի բնակավայրերի ձևավորման և զարգացման համար մեծ դեր ունեցան նաև երկաթուղագծերի շինարարությունը: Դրանց կառուցման բանավանները և կիսակայանները հետագայում վերածվեցին կայարանամերձ ավանների:

Տավուշի մարզով են անցնում Երևան-Իջևան երկաթուղին, Երևան - Սևան - Իջևան - Թբիլիսի, Դիլիջան - Իջևան - Նոյեմբերյան և Դիլիջան - Իջևան - Բերդ ավտոմայրուղիները, ինչպես նաև Հյուսիսային Կովկաս - Թբիլիսի - Երևան գազատարը: Հյուսիսային սահմանի երկայնքով է անցնում Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

Ի տարբերություն տարաբնակեցման վրա ազդող այլ գործոնների, աշխարհաքաղաքական և տնտեսաաշխարհագրական գործոնների ազդեցության բնույ-

³¹² Աղյուսակը կազմած է “Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг. “Ե. 1962 վիճակագրական ժողովածուի, «Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները» Ե. 2003 ժողովածուի և ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

³¹³ Հաշվառված է նաև Դիլիջանի ենթակայության տակ գտնվող գյուղերի թիվը և բնակչությունը՝ 1926 թ. նաև Դիլիջանի բնակչությունը:

³¹⁴ Համարիչում բնակչության թիվը, հայտարարում՝ բնակավայրերի:

թը կարճաժամկետ հատվածում կարելի է ասել՝ կայուն է, սակայն աշխարհաքաղաքական նոր տեղաշարժերը կարող են տարաբնակեցման կառուցվածքում տարածքային խորը տեղաշարժեր առաջացնել և դրանով իսկ հանգեցնել որակական նոր փոփոխությունների: Տավուշի մարզի տնտեսաաշխարհագրական դիրքը վերջին երկու տասնամյակի ընթացքում էական փոփոխություն է կրել: Մինչև դարաբաղյան դեպքերը և Խորհրդային Միության փլուզումը, մարզի տարածքը ՀՀ համար գլխավոր դարպասի դեր էր կատարում: Այստեղով էին Հայաստան մուտք գործում երկու գլխավոր երկաթուղիները, ավտոմայրուղին և գազատարը:

Աղյուսակ 5.

Տավուշի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը ըստ մարդաքանակի (1926-2010 թթ.)³¹⁵

		գյուղական բնակչությո- ւոնը	մինչև 200	200-500	500-1000	1000-3000	3000-5000	5000-ից ավելի
1926 թ.	100	62620	(43) $\frac{3067}{4,9}$ ³¹⁶	(18) $\frac{5555}{8,9}$	(17) $\frac{11877}{19,0}$	(21) $\frac{35605}{56,8}$	-	(1) $\frac{6516}{10,4}$
1959 թ.	112	80073	(44) $\frac{2687}{3,3}$	(23) $\frac{8028}{10,0}$	(17) $\frac{12116}{15,2}$	(23) $\frac{38404}{48,0}$	(4) $\frac{12993}{16,2}$	(1) $\frac{5845}{7,3}$
1970 թ.	63	84862	(2) $\frac{281}{0,3}$	(12) $\frac{4275}{5,0}$	(19) $\frac{13847}{16,3}$	(25) $\frac{46454}{54,8}$	(5) $\frac{20005}{23,6}$	-
1979 թ.	64	81619	(4) $\frac{671}{0,8}$	(11) $\frac{4057}{5,0}$	(18) $\frac{13493}{16,5}$	(25) $\frac{41721}{51,1}$	(6) $\frac{21677}{26,6}$	-
1995 թ.	60(2) ³¹⁷	85228	(1) $\frac{131}{0,2}$	(12) $\frac{4778}{5,6}$	(14) $\frac{10015}{11,8}$	(23) $\frac{38641}{45,3}$	(7) $\frac{26426}{31,0}$	(1) $\frac{5237}{6,1}$
2010 թ.	61(2)	79044	(2) $\frac{206}{0,3}$	(13) $\frac{4614}{5,8}$	(14) $\frac{9940}{12,6}$	(23) $\frac{38317}{48,5}$	(7) $\frac{25967}{32,8}$	-

Ներկայումս, Ադրբեջանի կողմից Հայաստանի տրանսպորտային շրջափակման և միջպետական հաղորդակցության բացակայության պայմաններում, Տավուշի մարզի ՏԱԴ-ի հնարավորությունները ըստ էության սառեցված են, չեն ծառայում մարզի տնտեսական զարգացմանը և բնակավայրերի առաջընթացին:

Մարզի հատկապես գյուղական տարաբնակեցման վրա վերջին երկու տասնամյակներին էապես ազդող գործոն է դարձել սահմանամերձ գոտին: Տավուշի սահմանները կատարում են հիմնականում երկու գործառնություն՝ միավորման և բաժանարար: Տավուշի սահմանը Վրաստանի Հանրապետության հետ ավելի շատ կատարում է միավորման գործառնություն, քանի որ սահմանի վրա գտնվող բնակավայրերը հիմնականում Նոյեմբեյանի տարածաշրջանը, սահմանամերձ առևտրի և տարանցիկ փոխադրումների զարգացման դեպքում աճի նախադրյալներ են ստանում, իսկ ահա Ադրբեջանի Հանրապետության հետ՝ ընդ-

³¹⁵ Աղյուսակը կազմած է “Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.” Е. 1962 վիճակագրական ժողովածուի և ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

³¹⁶ Փակագծում՝ բնակավայրերի թիվը, համարիչում՝ բնակչության բացարձակ թիվը, հայտարարում՝ նույնը տոկոսով:

³¹⁷ Փակագծում՝ մարզում բնակչություն չունեցող գյուղերի թիվը:

հակառակը, կատարում է բաժանարար գործառույթ, քանի որ կաշկանդում է մարզի զարգացմանն ընդհանուր առմամբ:

Մարզի համայնքներից 46-ը ՀՀ կառավարության 1998, 2005 և 2007 թթ. համապատասխան որոշումներով ճանաչվել են սահմանամերձ: Դրանցում ապրում է մարզի բնակչության կեսից ավելին, իսկ գյուղական բնակչության 72%-ը:

Մարզի գյուղատնտեսությունը հանրապետության մեջ ունենալով 4.4 % (2010 թ.) տեսակարար կշիռ, խաղողի արտադրությամբ հանրապետությունում ունի 10.4 % մասնաբաժին: Վերջին տարիներին ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ, մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր, հնդավոր, մերձարևադարձային պտղատեսակների և խաղողի համար: Խաղողագործական մասնագիտացման գյուղերը տարածված են մարզի բոլոր տարածաշրջաններում: Անասնապահական մասնագիտացման գյուղերը տարածված են Իջևանի, մասամբ նաև Տավուշի, իսկ այգեգործական գյուղերը՝ Նոյեմբերյանի տարածաշրջաններում: Նախկինում շատ էին նաև ծխախոտագործական մասնագիտացման գյուղերը, սակայն անկախացումից հետո այդ ուղղությունը թուլացավ մարզում և միայն վերջին տարիներին է, որ ներդրումներ է կատարվում մարզի ծխախոտագործությունը կրկին զարգացնելու համար:

Մինչև ՀՀ-ում գյուղական բնակավայրերի թվի համեմատաբար կայունացումը (1970-ական թվականներ) Տավուշի մարզում ըստ մարդաքանակի մեծ թիվ էին կազմում մանր և փոքր գյուղական բնակավայրերը: 1926 թ. այդպիսիք կազմում էին գյուղերի ընդհանուր թվի 61 %-ը, իսկ դրանց բաժին էր ընկնում գյուղական բնակչության ընդամենը 13,8 %-ը: Ըստ գերակշռող մարդաքանակի մարզում 1926 թ. շատ էին մեծ (1000-3000) և միջին (500-1000) գյուղերը, որոնց բաժին էր ընկնում գյուղական բնակչության 75,8 %-ը, իսկ գյուղերի ընդհանուր թվի՝ 37 %-ը (աղ. 5):

1926-1959 թթ-ի ընթացքում մարզի գյուղական տարաբնակեցման մեջ տեղի ունեցած առավել էական փոփոխությունը գյուղերի խոշորացում էր և ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական տարաբնակեցման բնույթի փոփոխությունը: 1959 թ. մեծ, խոշոր և միջին մեծության գյուղերի մասնաբաժինը բնակչության թվաքանակում կազմում էր 79,4 %: Հետագա տասնամյակների ընթացքում մոտ 50-ով կրճատվել է մարզի գյուղական բնակավայրերի թիվը: Դրանց մի մասի վերացման, այլ բնակավայրերի հետ միացման և, նաև, 1970 թ-ից սկսած հանրապետությունում ժամանակավոր բնակատեղերը որպես առանձին բնակավայր չհաշվառելու պատճառով:

1970-2010 թթ. ընթացքում Տավուշում գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 5800-ով: Մանր և փոքր գյուղերի ընդհանուր թիվը մնացել է գրեթե նույնը: Միջին մեծության գյուղերի թիվը նվազել է 5-ով, իսկ դրանց մասնաբաժինը մարզի գյուղական բնակչության մեջ՝ 4 %-ով (աղ. 5): Նշված ժամանակամիջոցում ավելի քան 9 կետով ավելացել է խոշոր գյուղերի մասնաբաժինը մարզի գյուղական բնակչության մեջ, իսկ 1959թ. համեմատությամբ՝ կրկնապատկվել: Այդ ամենին զուգահեռ մարզում նվազել է 1000-3000 բնակիչ ունեցող գյուղերի բնակչության մասնաբաժինը: Ներկայումս մարզում առավել ընդգծված է դառնում ըստ գերակշռող մարդաքանակի մեծ և խոշոր գյուղերի դերի բարձրացումը: 2010 թթ. այդպիսի գյուղերում (դրանք թվով 30-ն են) ապրում էր մարզի գյուղական բնակչության 81 %-ից ավելին: Հետևաբար տեղի է ունենում ըստ գերակշռող մարդաքանակի մարզի գյուղական տարաբնակեցման բնույթի բևեռացում: Թիվ 5

աղյուսակի տվյալների վերլուծությունից պարզվում է, որ մարզի մեծ և խոշոր գյուղերի բնակչության մասնաբաժնի ավելացումը տեղի է ունեցել ոչ թե դրանց բացարձակ թվի ավելացման հաշվին, այլ մարդաշատությամբ ավելի փոքր խմբերում գյուղերի միջին մարդաշատության նվազման հետևանքով: Վերջինս մտահոգիչ երևույթ է ոչ միայն Տավուշի մարզում այլ նաև ամբողջ Հայաստանի Հանրապետությունում:

Աղյուսակ 6.

Տավուշի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը ըստ բարձրության գոտիների (1926-2010 թթ.)³¹⁸

Տարե թվեր	Գյուղերի ընդհանուր թիվը	Գյուղական բնակ- գյուղական ընդ- չությունը	Գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխումը ըստ բարձրության գոտիների (1926-2010 թթ.)						
			մինչև 800 մ	800-1000	1000-1200	1200-1400	1400-1600	1600-1800	1800-000
1926	100	62620	(27) $\frac{20714}{33,1}$ ³¹⁹	(20) $\frac{19608}{31,3}$	(13) $\frac{5494}{8,8}$	(10) $\frac{13711}{21,9}$	(15) $\frac{1862}{3,0}$	(5) $\frac{523}{0,8}$	(10) $\frac{708}{1,1}$
1959	122	80073	(35) $\frac{30344}{37,9}$	(24) $\frac{28656}{35,8}$	(16) $\frac{8947}{11,2}$	(6) $\frac{8547}{10,6}$	(13) $\frac{2078}{2,6}$	(3) $\frac{717}{0,9}$	(15) $\frac{792}{1,0}$
1970	63	84862	(30) $\frac{36875}{43,5}$	(17) $\frac{26603}{31,4}$	(6) $\frac{9171}{10,8}$	(6) $\frac{9877}{11,6}$	(2) $\frac{1921}{2,2}$	(2) $\frac{415}{0,5}$	-
1979	64	81619	(33) $\frac{38956}{47,7}$	(13) $\frac{20324}{24,9}$	(8) $\frac{11335}{13,9}$	(6) $\frac{8937}{10,9}$	(2) $\frac{1717}{2,2}$	(2) $\frac{350}{0,4}$	-
1995	60	85228	(30) $\frac{41686}{48,6}$	(13) $\frac{23003}{27,0}$	(7) $\frac{10194}{12,0}$	(6) $\frac{9158}{10,7}$	(2) $\frac{1487}{1,7}$	(2)0	-
2010	61	79044	(31) $\frac{38958}{49,3}$	(14) $\frac{21839}{27,6}$	(7) $\frac{9406}{11,9}$	(5) $\frac{7354}{9,3}$	(2) $\frac{1463}{1,9}$	(2) $\frac{24}{0,0}$	-

Տավուշի մարզը ՀՀ-ում առանձնանում է նաև գյուղական բնակչության և բնակավայրերի ըստ բարձրության գոտիների բաշխմամբ: ՀՀ-ում մինչև 800 մ բարձրությունում ապրող գյուղական բնակչության գրեթե 80 և գյուղերի 70,5 % գտնվում են այստեղ:

Մարզի գյուղական բնակչության 89-ը և գյուղական բնակավայրերի 85 %-ը տեղաբաշխված են 400-ից մինչև 1200 մ բարձրություններում, իսկ 1200-1400 մ բարձրության գոտուն բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 9,3 %: Տավուշում 1400 մ-ից բարձր կա ընդամենը 4 բնակավայր, որոնցից Ճերմակավան գյուղը բնակչություն չունի: Ընդ որում, 1400 մ-ից բարձր ընկած տարածքները կազմում են մարզի ավելի քան 42%-ը:

³¹⁸ Աղյուսակը կազմած է ա/ **Զ. Կորկոտյան** «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում» (1831-1931 թթ.) Ե., 1932, ժողովածուի, ք/ «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы Е. 1962 г. ժողովածուի և գ/ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

³¹⁹ Փակագծում՝ բնակավայրերի թիվը, համարիչում՝ բնակչության բացարձակ թիվը, հայտարարում՝ նույնը տոկոսով:

Մարզում մինչև 1000 մ բարձրության գոտում 1926-2010 թթ-ի ընթացքում տեղի է ունեցել գյուղական բնակչության թե բացարձակ թվի և թե տեսակարար կշռի ավելացում: Չնայած դրան, առանձին վերցրած 800-1000 մ բարձրության գոտում թեև գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է, սակայն այդ գոտու մասնաբաժինը նվազել է 3,7 %-ով: Առավել նկատելի է փոփոխությունը մարզի 1200-1400 մ բարձրության գոտում: Այստեղ 1926-ի համեմատությամբ գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 2, իսկ բնակչության մասնաբաժինը՝ 2,3 անգամ:

Ինչպես ՀՀ-ի շատ մարզերում, այստեղ ևս անցած տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել առավել ցածրադիր գոտիների բնակչության մասնաբաժնի ավելացում, իսկ բարձրադիր գոտիներում՝ նվազում: Եթե 1926 թ. Տավուշի մարզում մինչև 1200 մ բարձրություններում ապրում էր մարզի գյուղական բնակչության 73,2 %-ը, ապա 2010թ.՝ 89 %-ը: Միաժամանակ, 1200 մ-ից բարձր տարածքներում գտնվող գյուղական բնակավայրերում եթե 1926 թ. ապրում էր Տավուշի մարզի գյուղական բնակչության 26,8, ապա ներկայումս՝ 11,2 %-ը:

Տավուշի 62 գյուղական բնակավայրերից 57-ը միաժամանակ նաև գյուղական համայնքների կենտրոններ են: Բարխուդարլու, Կայան, Գեղատափ, Ճերմակավան և Ասկիպար բնակավայրերը մտնում են համապատասխանաբար Ազատամուտ, Այգեհովիտ, Խաչարձան (2 բնակավայր) և Ոսկեպար համայնքների մեջ:

Վերջին ավելի քան երկու տասնամյակում ՀՀ-ում առկա սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, տարածաշրջանում աշխարհաքաղաքական անկայուն վիճակը և տեղական այլ գործոններ իրենց անմիջական ազդեցությունն են թողել Տավուշի մարզի տարաբնակեցման համակարգի տարբեր կողմերի վրա: Մարզի տնտեսական ներուժին և գյուղական բնակավայրերի զարգացմանը չափազանց մեծ վնաս հասցրին շուրջ 10 հազ. աշխատատեղ ապահովող արդյունաբերական համալիրի քայքայումը, 1990-ական թվականների պատերազմական գործողությունները, ականապատված հողերի առկայությունը և հաճախակի դարձած բնական աղետները: Մարզի գրեթե բոլոր գյուղական համայնքներում գյուղատնտեսության ոչ բարձր արդյունավետությունը, բնական աղետների ինտենսիվությունը, սոցիալական ծառայությունների և հոգևոր-մշակութային պահանջ-մունքների բավարարման հետ կապված հիմնախնդիրները էապես խոչընդոտում են գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը: 2011 թ. դրությամբ մարզում անմշակ հողատարածությունները կազմել են 5589 հա: Բազմաթիվ գյուղերում այն անցնում է 100 հա-ից, Բարեկամավան, Մովսես և Չորաթան գյուղերում՝ 250 հա-ից ավելի, իսկ Կոթի և Բերդավան գյուղերում այն կազմել է համապատասխանաբար՝ 344 և 564 հա: Դրա հետ միաժամանակ մարզում գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող 1530 հա վարելահողերը ժամանակավորապես օգտագործվում են որպես խոտհարք: Մարզի գյուղական համայնքների գյուղատնտեսական արտադրության ճյուղային կառուցվածքում 2004 թ-ից նկատվում է բացասական միտում՝ կրճատվում են մերձարևադարձային պտղատեսակների այգիները և դրան հակառակ ավելացել են հատապտուղների տարածքները: Երկրագործության ճյուղային կառուցվածքում նմանատիպ փոփոխությունը սահմանափակում է արտահանման հնարավորությունները և նվազեց-

նում գյուղացիների եկամուտները: Այս ամենը, անշուշտ, էապես նվազեցնում են մարզի գյուղական բնակավայրերի զարգացման տնտեսական ներուժը և պատճառ դառնում դրանց ժողովրդագրական իրավիճակի վատթարացման և բնակչության արտագաղթի: 2000-2008 թթ. ընթացքում մարզում բնակչության բնական հավելաձի գործակիցը կազմել է միջինը ընդամենը 2.3‰: Նույն այդ ժամանակամիջոցում ծնելիությունը 12-ից նվազել է 11.4 ‰, իսկ մահացությունը՝ 8,5-ից հասել է 10,3 ‰-ի:

Մարզի գյուղական համայնքապետերի շրջանում կատարված հարցումը ցույց է տալիս, որ բացի նշվածներից գյուղական բնակավայրերի համար հրատապ հիմնախնդիրներ են նաև 1/ միջբնակավայրային ճանապարհների նորոգումը, 2/ ոռոգման համակարգի բարելավումը, 3/ խմելու ջրի համակարգի վերակառուցումը, 4/ աշխատատեղերի ստեղծումը և գործազրկության վերացումը, 5/ գյուղատնտեսական տեխնիկայի պակասը և 6/ գյուղմթերքներ վերամշակող ձեռնարկությունների ստեղծումը: Նշված խնդիրների լուծումը էական դեր կունենա Տավուշի մարզի գյուղական բնակավայրերի զարգացման համար. կբարձրանա գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը, կնպաստի սահմանային գոտու գյուղական բնակավայրերի ամրապնդմանը և ժողովրդագրական իրավիճակի կայունացմանը:

Այսպիսով, Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման համար առավել հատկանշական են.

1. մարզում զառիվեր լանջերով խոր ձորերն ու կիրճերը, ուղղորդ քարափային լանջերն ու սեղանաձև լեռնակատարները, տարածքում տիրապետող համարվող 12⁰-ից բարձր թեքությունները զգալիորեն կրճատում են տարաբնակեցման արեալը: Մշակովի հողատարածությունները և գրեթե ողջ բնակչությունը կենտրոնացված են գետահովիտներում, առավել բնորոշ են ավազային և գետահովտային տիպի տարաբնակեցումը, որն ըստ տարածաշրջանի ունի որոշակի տարբերություններ:

2. վերջին երկու տասնամյակում մարզի գյուղական տարաբնակեցման վրա ազդող էական գործոն է դարձել սահմանամերձ գոտին: Մարզի տնտեսաաշխարհագրական դիրքի հնարավորությունները ըստ էության սառեցված են և չեն նպաստում տնտեսության և բնակավայրերի առաջընթացին

3. Մարզին մշտապես բնորոշ է եղել ըստ գերակշռող մարդաքանակի մեծ գյուղերի մասնաբաժինը: Միաժամանակ, մարզի փոքր և միջին գյուղերում, որոնք կազմում են գյուղերի գրեթե կեսը, վերջին տասնամյակների ընթացքում դիտվել է միջին մարդաքանակի նվազում: Այս հանգամանքը էականորեն խոչընդոտում է դրանց սոցիալ-տնտեսական զարգացմանը և սահմանային բնակավայրերի ամրապնդմանը:

4. Տավուշն առանձնանում է նաև ըստ բարձրության գյուղական բնակչության և բնակավայրի տեղաբաշխմամբ՝ տարածքի ընդամենը 13.2 %-ը կազմող մինչև 800 մ բարձրության գոտում տեղաբաշխված են գյուղական բնակչության և բնակավայրերի կեսը:

5. Մարզի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական և հեռանկարային զարգացման առավել հրատապ խնդիրներից են սահմանամերձ բնակավայրերի կայունացումը, դրանց գյուղատնտեսական հողատարածքների լիարժեք օգտագործումը և բնակչության արտահոսքի նվազումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կորկոսյան Զ., *Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931 թթ.)*, Ե. 1932 թ.:
2. *Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները*, Ե. 2003 թ.:
3. *Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2006-2010 թթ.*, Ե. 2011 թ.:
4. *1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀՄ-ում*, Ե. 1991 թ.:
5. *Հայաստանի Ազգային Ատլաս*, Ա հատոր, Ե. 2007 թ.:
6. Մանասյան Մ., *ՀՀ տարաբնակեցման համակարգը*, ԵՊՀ հրատարակչություն, Ե. 2005 թ.:
7. Պոստոյան Ա., *ՀՀ գյուղական տարաբնակեցումը*, ԵՊՀ հրատարակչություն, Ե. 1999, 234 էջ:
8. Մինոնյան Ռ., *Տավուշի մարզ*, Ե. 2003 թ.:
9. Валсеея Л.А., *Производственно-территориальный комплекс Армянской ССР*, Изд. «Айастан», Е. 1970, 375 с.
10. *Населенные пункты и население Арм ССР за 1831-1959 гг.*, Е. 1962 г.
11. Погосян Д.А., *Сельскохозяйственная оценка природных ресурсов территории*, Армянской ССР, Изд. АН Арм ССР, Е. 1986 г.

Աксел Подосյан, Павел Асилбекян – *Некоторые вопросы формирования и развитии сельского расселени тавушского марза.* – В РА своим своеобразным географическим положением, характером расселения и проблемами социально-экономического развития особо выделяется Тавушский марз. В статье на основе анализа фактического и статического материала обсуждается особенности формирования и развития сельского расселения Тавушского марза, а так же вопросы социально-экономического развития сельских населенных пунктов.

Aksel Potosyan, Pavel Aslibekyan – *Some questions of formation and development of rural settlements distribution of tavush marz.* – Tavush marz is being separated from the other marzes economic problems, natural-geographical conditions, economic and political-geographical positions. The issues of formation and development of rural settlements network, its regional differences and problems of social-economic development are being analyzed in the article on the base of analysis of statistic data.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1916 թ. նոյեմբերյան գաղթը 3

ВАЛЕРИ ТУНЯН

Подготовка судебного процесса над партией “Дашнакцутюн” 1909-1910гг..... 9

ԷՂՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ

Վերափոխումները Հայաստանում ազգաբնակչության սոցիալական կացության հետ անմիջականորեն առնչվող ոլորտներում (1990-2001թթ.)..... 25

ՔՈՒՐՈՇ ՍԱԼԱՐԻ

Ռաշիդ ադ-դինի ծագման և կրոնական համոզմունքների հարցի շուրջ..... 40

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Ամերիկյան հայանպաստ հասարակական կազմակերպությունների ստեղծումը և գործունեությունը 1915 – 1916թթ. 47

ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ

Պետական գույքի մասնավորեցման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում..... 52

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ազգակցական խմբի տնտեսական-արտադրական ընկերակցությունների վերապրուկային դրսևորումները հայոց մեջ (ըստ XIX–XX դարերի ազգագրական նյութերի)..... 59

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այլադավանության դեմ պայքարը՝ որպես ազգային և հոգևոր անվտանգության ապահովման կարևորագույն պայման 76

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ANGELA VANESYAN

Les caractéristique fondamentales du discours poétique 84

ԱԼԻՍՍ ՀԱՍՍՆՅԱՆ

Խորհրդանիշները պատերազմական պոեզիայում..... 88

ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Շավարշ Նարդունին և հեթանոսականությունը 96

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

«Սասունցի Դավիթ» էպոսի անձնանունների ծագման հարցը հայ էպոսագիտության մեջ	101
---	-----

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ANAHIT HOVHANNISYAN

Analyse des systemes verbaux de quelques formes temporelles de l'indicatif en français et en l'italien	110
---	-----

AIDA MARDANIAN, MANE AGHBALIAN

Les expressions francaises touchant le corps	117
--	-----

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

АННА ЭЛЯЗЯН

Проблемы девиантного поведения подростков и их профилактика	123
---	-----

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՊԱՎԵԼ ԱՍԻԼԲԵԿՅԱՆ

Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման ձևավորման և զարգացման մի քանի հարցեր	131
---	-----

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ» ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունք» հոդվածների ժողովածուում տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը:
- Հոդվածի վերջում գրականության ցանկի առկայության դեպքում հղումների համարների հերթականությունը պետք է համընկնի տեքստում դրանց հանդիպման հերթականության հետ: Գրականության ցանկում նշել գրքի/հոդվածի հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը), հոդվածների դեպքում՝ հոդվածի առաջին և վերջին էջերի համարները: Օրինակ՝

1. Harary F., *Graph Theory*. Addison-Wesley, Reading, MA, 1969.
2. Давтян Н.Н., *О наименьшем и наибольшем возможных числах вершин с интервальным спектром на множестве правильных реберных раскрасок дерева*. Математические вопросы кибернетики и вычислительной техники, т. 32, Ереван, 2009, с. 107–111.

- Հոդվածի վերջում գրել համառոտ ամփոփումներ. հայերենով գրված հոդվածների համար՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով, ռուսերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և անգլերեն լեզուներով, անգլերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
 - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, բնագիտական ֆակուլտետի մասնաշենք՝ Նարինե Դավթյանին, կամ
 - ուղարկել akunq@ysuib.am և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(4)

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 06.06.2012 թ.:

Չափսը՝ 70x100¹/₁₆ :

Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 86:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: